ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻԿԻ ՄԱՐԶ

ՎԱՐԴԵՆԻԿԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

«ՀՀ Գեղարքունիկի մարզի Վարդենիկ գյուղի համար 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական, տարրական, հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը սկսել է իր աշխատանքները 1961 թվականից՝ որպես Մ.Գորկու անվան միջնակարգ դպրոց:

Դպրոցը 1993 թվականին անվանակոչվել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի անվամբ:

Դպրոցը 2014 թվականին դարձել է «ՀՀ Գեղարքունիկի մարզի Վարդենիկ գյուղի Ռ.Հովհաննիսյանի անվան համար 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ և հանդիսանում է իրավահաջորդը Ռ.Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցի:

Պետ.ռեգիստրի գրանցման վկայական 03Ա057611

Գրանցման համար 76.210.00671

Դպրոցն իրականացնում է հանրակրթական ծրագրեր՝ ըստ հաստատված լիցենզիաների:

1-ին աստիճանի՝ տարրական կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ

2-րդ աստիճանի՝ հիմնական կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ ընդհանուր՝ 2-րդ աստիճան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

ՍԵՐԻԱ № 0403

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն, հանրակրթական իրավաբանական անձի տեսակը)
ՀՀ Գեղարքունիկի մարզ, գյուղ Վարդենիկ
(գտնվելու տեղը)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդենիկ
(գրանցման տեղը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան
(հանրակրթական ծրագրի տեսակը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աբրահամյան
(անունը, ազգանունը)

Կ.Տ. 01 հունիսի 2010 թ.

Անժամկետ
(ընդհանրական տարրական հանրակրթական)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ ընդհանուր՝ 1-ին աստիճան
(տարրական հանրակրթական)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

ՍԵՐԻԱ № 0410

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն, հանրակրթական իրավաբանական անձի տեսակը)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդենիկ
(գտնվելու տեղը)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդենիկ
(գրանցման տեղը)

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան
(տարրական հանրակրթական)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աբրահամյան
(անունը, ազգանունը)

Կ.Տ. 01 հունիսի 2010 թ.

Անժամկետ
(տարրական տարրական հանրակրթական)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

ՍԵՐԻԱ № 0083

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀԳԵՂԱՐՔՈՒՆԻԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, հասցեն, հանրակրթական իրավաբանական անձի տեսակը)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ
(գտնվելու տեղը)
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ
(գրանցման տեղը)

Իրավունք ունի իրականացնելու

Դասընթացավարական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աբրահամյան
(անունը, ազգանունը)

Կ.Տ. 28 սեպտեմբերի 2015 թ.

Անժամկետ
(ուսումնական գործունեության բնույթը)

2014 թվականից հուլիսի 25-ից դպրոցում գործում է նախակրթարան՝ համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրով: Ծրագրի իրականացման համար համագործակցության արդյունքում 1 400 000 դրամ ներդրում է կատարել բարերարը: Սովորողների սահմանային թիվը՝ 78:

Լիցենզիայով սահմանված սովորողների թիվը՝ **220 աշակերտ**:

Հաստատության հասցեն՝**Գեղարքունիքի մարզ գ. Վարդենիկ, Կ. Շահինյան փ., շենք՝ 51**

Էլեկտրոնային հասցեն՝**vardenik1@schools.am**

Հաստատության ինտերնետային կայքի հասցեն՝ **vardenik1.schoolsite.am**

Հաստատության տնօրեն՝ Թաթուլ Ալոյան, հեռ.՝ **077 381 180**

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմվել է ըստ՝

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» N 35-Ն հրամանի
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. N 399-Ա հրամանի պահանջների
- «Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծի
- ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի
- ՀՀ « Կրթության մասին» օրենքի,
- ՀՀ Սահմանադրության
- ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության

- Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկի
- Օրենքով սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտերի
- Դպրոցի՝ վերջին հինգ տարիների ներքին գնատման ցուցանիշների
- Դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների հետ հանդիպումների ժամանակ ներկայացված առաջարկությունների

Նախորդ 5 տարիների գործունեությունը

1998 թվականից առ այսօր աշխատում եմ դպրոցում: Աշխատանքս սկսել եմ որպես պատմության ուսուցիչ: 2008 թվականից աշխատել եմ որպես տնօրենի տեղակալ՝ դաստիարակության գծով, 2013 թվականից՝ տնօրենի տեղակալ ուսումնական գծով: 2018 թվականին ընտրվել եմ որպես տնօրեն: Ունենալով բազմամյա աշխատանքային փորձ, մշտապես կարևորել եմ դպրոցում ձևավորված առողջ մթոնոլորտի և անվտանգ միջավայրի պահպանումը և որակյալ կրթության ապահովումը:

- 2014 թվականին բացվել է նախակրթարան, որին հատկացվել է 2 դասասենյակ:
- «Save the Children» կազմակերպության կողմից վերանորոգվել է նախակրթարանի առաջին խաղասենյակը – 50 մ^2 , համալրվել է համապատասխան գույքով
- «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում վերանորոգվել և համապատասխան գույքով է ապահովվել նախակրթարանի երկրորդ խաղասրահը
- 2019 թ. «Պարենի համաշխարհային ծրագրի» շրջանակներում վերանորոգվել և նոր տեխնիկայով վերազինվել է ճաշարանը: Այն գործում է և «Տաք սնունդ» ծրագրի շրջանակներում սնունդով ապահովում 1-4-րդ դասարանի սովորողների, ինչպես նաև նախակրթարանի երեխաների համար: Ընդհանուր՝ օրական տրամադրվում է շուրջ 132 երեխայի համար սնունդ:

- 2019 թ. «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում վերանորոգվել է ինֆորմատիկայի կաբինետը և համալրվել 15 համակարգիչներով և դրանց համապատասխան համակարգչային սեղաններով: Կաբինետը կահավորված է համապատասխան գույքով: Կաբինետն ունի պրոյեկտոր և էկրան: Կաբինետը վերանորոգվել է բարերար, գիտնական Ռիչարդ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ, ով հանդիսանում է «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հիմնադիրը, ում անունով էլ անվանակոչված է դպրոցը:
- 2021 թ. վերանորոգվել է աշխարհարգրության և պատմության կաբինետները, որոնք իրականացվել է դպրոցն ավարտած շրջանավարտի հետ համագործակցության ու վերջինիս ֆինանսական միջոցների հաշվին: Աշխարհագրության կաբինետում առկա է նաև պրոյեկտոր: Դասասենյակներն համալրված են անհրաժեշտ գույքով, նյութերով:
- 2022 թ. ծնողական համայնքի հետ համագործակցության արդյունքում ծնողների նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ վերանորոգվել է մեկ դասասենյակ
- «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում հիմնանորոգվել է դպրոցի տանիքը
- «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում վերանորոգվել են նաև մի քանի դասասենյակներ, այդ թվում՝ առաջին դասարանցիների համար նախատեսված դասասենյակը՝ հարմարեցված ուսման համար բոլոր պայմաններով, դիդակտիկ նյութերով:
- «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում վերանորոգվել է մարզադահլիճը և կից երկու հանդերձարանները (տղաների, աղջիկների), համալրվել է համապատասխան մարզագույքով:
- «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում վերանորոգվել և գույքով ապահովվել է գրադրանը:
- 2019 թ. վերանորոգվել է առաջին հարկի միջանցքը: Կա նախնական պայմանավորվածություն մոտակա ժամանակների ընթացքում սկսել նաև երկրորդ հարկի միջանցքների վերանոգորումը:

- Վերանորոգվել են դպրոցի 3 սանհանգույցները՝ տղաների, աղջիկների և մանկավարժների համար:
- Չունենալով միջոցառումների համար նախատեսված հանդիսությունների դահլիճ և առանձնացված տարածք, երկրորդ հարկի միջանցքում առանձնացվել է 20 մ^2 տարածք և կառուցվել բեմահարթակ:
- Նկուղը հարմարեցվել և կահավորվել է որպես ապաստարան: Բարերարների միջոցով ձեռք է բերվել 130 հատ քնապարկ, որոնք օգտագործվում են ուսումնական տագնապների ժամանակ:
- Հիմնվել է գրադարան-ընթերցասրահ՝ հագեցած համակարգիչներով, գույքով, ուսումնական նյութերով, որտեղ անցկացնում է «Ընթերցանություն» խմբակի պարապունքները:
- Դպրոցի հարակից տարածքում՝ նախնական պայմանավորվածության համաձայն՝ կհիմնվի արցախյան հերոսներին նվիրված պուրակ:
- Իմ ղեկավարության օրոք փոխվել են բոլոր պատուհանները, դռները:
- Ձևավորվել է համագործակցություն «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հետ՝ «Ռոբոտաշինության» ծրագրի իրականացման շրջանակներում:

Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցի զարգացման ծրագրի առանցքային ուղղություններից է դպրոցի բոլոր ոլորտների, իրավիճակների վերլուծությունը, որի շնորհիվ հնարավոր է լինում հստակ պատկերացնել դպրոցի և՛ շենքային, և՛ նյութատեխնիկական բազայի, և՛ նրանում իրականացվող կրթական ծրագրերի առկա վիճակը, որն էլ հնարավորություն է տալիս սահմանել նպատակներ, հասկանալ նպատակներից բխող խնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ արդյունավետ գործողությունները՝ իհարկե չբացառելով իրատեսական ռիսկերը: Իսկ ռիսկերի մեղմացման համար պետք է կազմակերպել համապատասխան գործողությունները, որոնք էլ կհանգեցնեն ակնկալվող արդյունքների:

Վերջիններս անհրաժեշտ է վերլուծության արդյունքում գնահատել՝ ըստ համապատասխան չափանիշների, վեր բարձրացնել բացթողումները, թերությունները, մշակել մեխանիզմներ բարելավվելու համար:

Դպրոցի շենքային պայմանների վերլուծությունը

- ✓ Դպրոցը տիպային երկհարկանի կառույց է (1450 մ^2) , մասամբ վերանորոգված:
- ✓ Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:
- ✓ Դպրոցը գտնվում է գյուղի կենտրոնական ասֆալտապատված ճանապարհին:
- ✓ Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար: Մուտքի հատվածում կա հետիոտնային անցում:
- ✓ Դպրոցը ընդհանուր ունի 3 մուտք, 1 մուտքը՝ ճակատային մասից՝ 2 լայն դռներով, 2 մուտքը՝ շենքի ետնամասից (պահուստային):
- ✓ Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող, այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավոր հավաքվում են հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում տարածքից:
- ✓ Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:
- ✓ Դպրոցի շենքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿՈՒ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին.առկա չէ թեք հարթակներ (դպրոցում ԿԱՊԿՈՒ սովորողներ չկան):
- ✓ Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ դպրոցի շենքին:
- ✓ Դպրոցում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:
- ✓ Դպրոցում համակարգչային սարքավորումները ամուր են տեղադրված

- ✓ Դպրոցի միջանցքների հատակները սայթաքուն չեն, միջանցքները վերանորոգված չեն
- ✓ Փոխված են դպրոցի բոլոր դռներն ու պատուհանները
- ✓ Հիմնանորոգվել է դպրոցի տանիքը
- ✓ Դպրոցի առաջին հարկի պատուհանները չունեն մետաղյա վանդակաճաղեր:
- ✓ Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:
- ✓ Դպրոցում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարահանման պլան. այն փակցված է նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում՝ գունային ցուցասլաքներով:
- ✓ Տրահանման ուղիները ազատ է ավելորդ իրերից:
- ✓ Դպրոցի սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:
- ✓ Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:
- ✓ Դպրոցի սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները անցկացնում են մարզադահլիճում, մարզահրապարակում:
- ✓ Բակում առկա է մարզահրապարակ
- ✓ Տարեկան 2-3 անգամ իրականացվում են ուսումնական տարհանումներ: Ողջ դպրոցը տարհանվում է մինչև 3 րոպեի ընթացքում:
- ✓ Չկա լոկալ ջեռուցում, շենքը ջեռուցվում է էլեկտրական վառարաններով:
- ✓ Դպրոցն ունի 3 սանհանգույց՝ վերանորոգված:
- ✓ Դպրոցն ունի նկուղ՝ հարմարեցված որպես ապաստարան, գտնվում է միջին բարվոք վիճակում:
- ✓ Դպրոցն ունի բակային տարածք

* Դպրոցը չունի այգի, նախատեսվում է հերոսների պուրակի կառուցում:

* Դպրոցին անհրաժեշտ է շենքին կից կառուցել նոր մասնաշենք, որտեղ կտեղակայվի հանդիսությունների դահլիճը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• 1 մասնաշենք - 1450 մ^2 , մասամբ վերանորոգված • Վերանորոգված տանիք • Ցանկապատված, անվտանգ տարածք • Մարզահրապարակ – 1200 մ^2 • Փոփոխված դռներ, պատուհաններ • Նկուղ-ապաստարան - 75 մ^2 • Ջեռուցում (էլեկտրական վառարաններ) • 3 սանհանգույց՝ վերանորոգված • Բակային տարածք - 500 մ^2 • Շենքը սեյսմակայուն է և անվտանգ • Առկա է 3 կրակմարիչ, պատ-վահանակ	• Չվերանորոգված միջանցքներ • Շենքի մասսամբ վերանորոգում • Կից մասնաշենքի կառուցում • Լոկալ ջեռուցում • Այգի • Թեքահարթակ՝ ԿԱՊԿՈՒ սովորողների համար • Գազաֆիկացված չէ

➢ Վերլուծություն / Համապատասխանություն

Շենքն ամբողջությամբ սեյսմակայուն է, համապատասխանում է անվտանգության նորմերին: Շենքը մասսամբ վերանորոգված է, տանիքը՝ հիմնանորոգված, փոխված են դռներն ու պատուհանները, ունի պահուստային ելքեր: Դպրոցը չունի

հանդիսությունների դահլիճ, որպես դահլիճ՝ ծառայում է շենքի երկրորդ հարկի միջանցքի որոշակի հատված, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է շենքին կից կառուցել ևս մեկ շենք, որտեղ կտեղակայվի հանդիսությունների դահլիճը: Դպրոցը ջեռուցվում է էլեկտրական մարտկոցների միջոցով, սակայն կարևոր է, որ դպրոցը ունենա լոկալ ջեռուցում՝ առանձնացված կաթսայատնով՝ իրականացնելով նաև գազաֆիկացում:

Շենքն իր նախատեսված հզորությամբ և ներկայիս վիճակով համապատասխանում է սովորողների թվին և նրանց համար իրականացվող կրթական ծրագրերին, չնայած կան որոշակի շեղումներ, մասնավորապես՝

* Երկրորդ հարկում բացակայում են սանհանգույնցերը, սակայն առաջին հարկի 3 սանհանգույցներ (տղաների, աղջիկների և աշխատակիցների) վերանորոգված և սանտեխնիկայով կահավորված վիճակը բավարար է

* Դպրոցը ի սկզբանե չի ունեցել հանդիսությունների դահլիճ, սակայն երկրորդ հարկի միջանցքի 20 մ^2 առանձնացված տարածքում կառուցվել է բեմ, ինչի շնորհիվ այդտեղ կազմակերպվում են միջոցառումներ: Դպրոցի երկրորդ հարկում առկա աթոռների թիվը բավարարում է հանդեսատեսի ներկայությունը ապահովելու համար

* Դպրոցը դեռ չունի թեքահարթակ և ԿԱՊԿՈՒ սովորողների համար շենքի ներսում հարմարեցումներ

Նպատակ	• Մասնաշենքերի ամբողջական վերանորոգում • ԿԱՊԿՈՒ սովորողների համար թեքահարթակ և շենքի ներսում հարմարեցումներ • Կից մասնաշենք • Լոկալ ջեռուցում
Խնդիր	• Սովորողների թվի նվազում

	• Սովորող-թվի պատճառով պետական բյուջեից քիչ ֆինանսավորում • Լոկալ ջեռուցման բացակայություն
Իրականացվող գործողություն	• Նպաստել աշակերտ թվի ավելացմանը • Իրականացնել վերանորոգման աշխատանքներ • Նոր համագործակցությունների ձևավորում՝ նպատակային ներդրումների համար
Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Համակարգող
Կատարման ժամկետներ	• Կենտրոնական մուտքի մոտ թեքահարթակի կառուցում՝ 2023 - 2024 թթ. • Միջանցքների վերանորոգում՝ մինչև 2023 - 2025 թթ. • Լոկալ ջեռուցման համակարգի տեղադրում՝ 2024 - 2028 թթ. • Կից մասնաշենքի կառուցում՝ մինչև 2024 - 2028 թթ. • Շենքի ընդհանուր վերանորոգում՝ մինչև 2023 - 2028 թթ.
Ռիսկեր	• Մասնաշենքի մաշվածություն • Արտագաղթ • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Ավելացնել համագործակցությունների թիվը՝ դպրոցում ներդրումներ կատարելու նպատակով • Ապահովել բարձր որակի կրթության շարունակականություն • Իրականացնել համապատասխան գործողություններ՝ ստեղծված իրավիճակից ելնելով
Ակնկալվող արդյունքներ	• Ամբողջությամբ վերանորոգված դպրոց • Կառուցված կից մասնաշենք • ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցումներ

	• Սովորողների թվի աճ • Լոկալ ջեռուցմամբ տաքացվող դպրոց
Գնահատման չափանիշ	• Կատարված չեն աշխատանքներ - անբավարար • Վերանորոգվել են միջանցնքները - բավարար • Վերանորոգվել են միջանցքները, տեղադրվել է լոկալ ջեռուցման համակարգ - լավ • Վերանորոգվել է ընդհանուր դպրոցը, տեղադրվել է լոկալ ջեռուցման համակարգ, կառուցվել է կից մասնաշենք - գերազանց
Վերահսկողություն	Լիազորված մարմին

Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը

Դպրոցի գործունեության և զարգացման համար նյութատեխնիկական բազան անհրաժեշտ պայման է: Նյութատեխնիկական բազան հնարավորություն է տալիս կազմակերպել գործնական, լաբորատոր աշխատանքներ, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծառայություններ, կրթական և ստեղծագործական գործունեություն, իրականացնել մշակութային միջոցառումներ և այլն: Նյութատեխնիկական բազայի կիրառությունը հնարավորություն է տալիս սովորողներին պատկերավոր ձևով տեսնելու, առավել ևս, ԲՏՃՄ առարկաներին համապատասխան սարքերի և փորձերի միջոցով հասկանալու դասերի նյութը:

Մեծ նշանակություն ունի նաև նյութատեխնիկական մաս կազմող ժամանակակից համակարգիչները, էլեկտրոնային գրատախտակը և այլ տեխնիկական սարքերը:

Ուստի, նյութատեխնիկական բազայի պահպանումն ու զարգացումը հիմնական պայմաններից է ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար:

Նյութատեխնիկական բազան ուսումնական գործընթացը կազմակերպելու համար այն կարևոր և անհրաժեշտ բաղադրիչն է, որը պահանջում է անընդհատ համալրում, արդիականացում:

Նյութատեխնիկական բազայի անբաժանելի մասն է նաև ենթակառուցվածքները, որոնք հիմնավոր կերպով նկարագրված են հաջորդիվ:

Նյութատեխնիկական բազան ստեղծվում և համալրվում է հիմնականում պետական բյուջեի ֆինանսավորման միջոցով, սակայն արդյունավետ է լինում նաև բարեգործության արդյունքում նպատակային ներդրումներով:

Դպրոցում առկա են՝

- 15 համակարգիչ, որից 10-ը՝ նոթբուք, 5-ը՝ պենտիում 4
- Պրինտեր – 1 հատ
- Տեսացրիչ – 2 հատ
- Շարժական էկրան – 2 հատ
- Տպող սարք 2 հատ
- Սպորտային որոշակի քանակությամբ գույք
- Կենսաբանության որոշակի պարագաներ
- Ֆիզիկայի որոշակի պարագաներ
- Քիմիայի որոշակի պարագաներ
- ՆԶՊ կաբինետի ուսումնական նյութեր և պարագաներ
- Ուսումնական զենք
- Բժշկական առաջին օգնության անհրաժեշտ պարագաներ, դեղորայք
- Դասագրքեր՝ 2370 միավոր (2019 թ.-ից)
- Գեղարվեստական գրքեր՝ 3540 միավոր
- Աշակերտական սեղան-նստարաններ

Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ – 12.09.2023թ.

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, Т-աձև, П-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ N01	48	շարքերով	14	0.9մ
Դասասենյակ N02	30	շարքերով	11	0.9մ
Դասասենյակ N03	48	շարքերով	14	0.9մ
Դասասենյակ N04	48	շարքերով	10	0.9մ
Դասասենյակ N05	30	շարքերով	12	0.9մ
Դասասենյակ N06	30	շարքերով	12	0.9մ
Դասասենյակ N07	30	շարքերով	12	0.9մ
Դասասենյակ N08	30	շարքերով	12	0.9մ
Դասասենյակ N09	48	շարքերով	14	0.9մ

Մեկ սովորողին ընկնող մակերեսը հիմնականում նորմային մոտ է, ուղղակի դասասենյակների չափերը և առկա գույքը հնարավորություն չի տալիս ամեն մեթոդի ժամանակ օգտվել համապատասխան դասավորությունից:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• 15 համակարգիչ, որից 10-ը՝ նոթբուք, 5-ը՝ պենտիում 4 • Պրինտեր – 1 հատ • Տեսացրիչ – 2 հատ • Շարժական էկրան – 2 հատ • Տպող սարք - 2 հատ • Կենսաբանության կաբինետի առարկայի որոշակի պարագաներ • Քիմիայի կաբինետի որոշակի պարագաներ • Ֆիզիկայի կաբինետի որոշակի պարագաներ • Աշխարհագրության կաբինետի ուսումնական պարագաներ • Շախմատի կաբինետի ուսումնական պարագաներ • ՆԶՊ կաբինետի ուսումնական նյութեր, պարագաներ • Ուսումնական զենք • Բժշկական առաջին օգնության անհրաժեշտ պարագաներ, դեղորայք • Սպորտային որոշակի քանակությամբ գույք • Դասագրքեր՝ 2370 միավոր (2019 թ.-ից) • Գեղարվեստական գրքեր՝ 3540	• Ֆիզիկայի և Քիմիայի լաբորատորիաների վերանորոգում, համալրում ժամանակակից սարքավորումներով և ուսումնական նյութերով • Ժամանակակից համակարգիչներ • Էլեկտրոնային գրատախտակներ • ԲՏՃՄ առարակաների լաբորատորիաների արդի, անհրաժեշտ նյութեր, սարքավորումներ, ՏՀՏ-ներ • Առարկայական էլեկտրոնային բազա • Առարկայական կաբինետների արդի, անհրաժեշտ ուսումնական նյութեր, պարագաներ • Լինգաֆոնիայի կաբինետ • Սպորտային ոչ բավարար քանակության գույք • Տեսախցիկներ

միավոր • Աշակերտական սեղաններ, աթոռներ, նստարաններ

- **Վերլուծություն / Համապատասխանություն**

Դպրոցում առկա է նյութատեխնիկական բազա հանդիսացող որոշ քանակությամբ համակարգիչներ, 2 տեսացրիչ, 1 էկրան, Ֆիզիկայի, Քիմիայի լաբորատորիաների և կաբինետների անհրաժեշտ որոշ քանակությամբ տեխնիկական սարքեր, նյութեր, ինչպես նաև Աշխարհագրության, Ինֆորմատիկայի, Պատմության, ՆԶՊ-ի շախմատի առարկաների կաբինետների համապատասխան որոշ քանակության պարագաներ: Առկա է նաև որոշ քանակությամբ սպորտային գույք: Ընդհանուր առմամբ՝ դպրոցում կրթական ծրագրերի իրականացման համար ուսուցիչների կողմից կիրառվում է առկա նշված նյութատեխնիկական բազան: Առկա է համապատասխանության որոշակի շեղում, քանի որ նյութատեխնիկական բազան ունի համալրման և արդիականացման կարիք:

Դպրոցումա առկա է նաև անվտանգության համար հակահրդեհային 3 կրակմարիչ և պատ-վահանակ՝ համապատասխան գործիքներով:

Անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է դպրոցում տեղադրել տեսախցիկներ:

Նպատակ	• Էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերում • Ժամանակակից համակարգիչների ձեռքբերում • Անհրաժեշտ կրթական էլեկտրոնային ռեսուրսների համալրում

	• Ֆիզիկայի, Քիմիայի, լաբորատորիաների համար անհրաժեշտ տեխնիկայի և նյութերի արդիականացում • Կենսաբանության, Պատմության, Աշխարհագրության, Ինֆորմատիկայի, ՆԶՊ-ի, Շախմատի կաբինետների անհրաժեշտ սարքավորումների, և ուսումնական նյութերի արդիականացում • Դպրոցի գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի թվայնացում • Դպրոցի վերահսկողության ապահովում՝ տեսախցիկների միջոցով
Խնդիր	• Արտաբյուջետային ֆինանսական միջոցների պակաս • Պետական բյուջեից տրամադրվող ֆինանսների պակաս • Տեխնիկական միջոցների անսարքություն • Արագ մաշվածություն • Դիդակտիկ նյութերի, սարքերի բացակայություն
Իրականացվող գործողություն	• Կազմակերպել վերահսկողություն ՏՀՏ-ների և այլ տեխնիկական միջոցների կիրառման նկատմամբ • Համագործակցել համապատասխան մասնագետների հետ՝ տեխնիկական սարքավորումների անսարքությունների վերանորոգման համար • Մասնակցել ՀՀ Կառավարության կողմից սահմանված կրթական ծրագրերին՝ դրամաշնորհների ձևով • Ձեռք բերել տեսախցիկներ՝ անվտանգությունը ապահովելու համար
Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Համակարգող • Մանկավարժներ

	• Սովորողներ • Ինֆորմատիկայի ուսուցիչ
Կատարման ժամկետներ	• Վերահսկողություն ՏՀՏ-ների և այլ տեխնիկական միջոցների կիրառման նկատմամբ – 2023-2028 թթ. • Համագործակցություն համապատասխան մասնագետների հետ – 2023 -2028 թթ. • Էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերում – առաջին գրատախտակը՝ 2024-2026 թթ., հնարավորության սահմաններում էլեկտրոնային գրատախտակների ավելացում մինչև 2028 թ. • Ժամանակակից համակարգիչների ձեռքբերում – առաջին համակարգիչները՝ 2024-2025 թթ., հնարավորության սահմաններում համակարգիչների ավելացում մինչև 2028 թ. • Ֆիզիկայի, Քիմիայի լաբորատորիաների անհրաժեշտ սարքերի, պարագաների, նյութերի ձեռքբերում – 2023-2028 թթ.՝ պարբերաբար համալրումներով • Կենսաբանության, Պատմության, Ինֆորմատիկայի, ՆԶՊ-ի, Շախմատի, Աշխարհագրության կաբինետների անհրաժեշտ սարքավորումների և ուսումնական նյութերի ձեռքբերում - 2023-2028 թթ.՝ պարբերաբար համալրումներով • Ձեռք բերել տեսախցիկներ – 2024 -2025 թթ.
Ռիսկեր	• Դասերի ընթացքում կիրառվող սարքավորումների վնասվող մասերի դեֆիցիտ • Դասերի ընթացքում օգտագործվող փորձանյութերի ուշ համալրում ՝ ելնելով դպրոցի գտնելու վայրից

	• Տեխնիկական միջոցների՝ պիտանելիության ժամկետից շուտ շարքից դուրս գալը • Տեխնիկական բարձր որակավորում ունեցող մասնագետների պակաս
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Կազմակերպել հետևողական և խիստ վերահսկողություն • Ապահովել համապատասխան մասնագետների հետ համագործակցություն
Ակնկալվող արդյունքներ	• Ժամանակակից ՏՀՏ-ների և էլեկտրոնային գրատախտակների միջոցով արդյունավետ դասերի կազմակերպում • ԲՏՃՄ առարկաների վերազինված և կահավորված լաբորատորիաներում նոր մեթոդների կիրառում • Բարձր որակավորում ունեցող մասնագետների հետ ձևավորված հաստատուն համագործակցություն • Ռոբոտաշինության դասընթացների արդյունավետ կազմակերպում • Արտադասարանական խմբակներում առարկայական օլիմպիադաների պարապունքների և մասնագիտական կողմնորոշման համար դասերի իրականացում • Դպրոցի գործունեությունը վարելու անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական թվայնացում
Գնահատման չափանիշ	• Չի իրականացվել որևէ գործողություն – անբավարար • Ձեռք է բերվել 1 էլեկտրոնային գրատախտակ, լաբորատոր պարագաներ – բավարար • Ձեռք է բերվել մեկ և ավելի էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչներ, ինչպես նաև լաբորատոր պարագաներ, սարքավորումներ, դիդակտիկ նյութեր –

	լավ • Ձեռք է բերվել էլեկտրոնային գրատախտակներ, համակարգիչներներ, ինչպես նաև լաբորատոր պարագաներ, սարքավորումներ, դիդակտիկ նյութեր, թվայնացվել են դպրոցի գործունեության համար անհրաժեշտ ողջ փաստաղթղերը, կնքվել են արդյունավետ պայմանագրեր բարձր որակի մասնագետների հետ - գերազանց • Նպատակային գործողություններ կատարված չեն – անբավարար • Ձեռք են բերվել որոշ տեխնիկական սարքավորումներ – բավարար • Համալրվել է ՏՀՏ-ներով և հաղորդակցական այլ տեխնոլոգիաներով - լավ • Լաբորատորիաները և կաբինետները համալրվել են ժամանակակից տեխնիկայով, այդ թվում՝ էլեկտրոնային գրատախտակներով, ուսումնական այլ միջոցներով, դպրոցն ունի անհրաժեշտ բոլոր տեխնիկական միջոցները - գերազանց
Վերահսկողություն	• Համակարգող

Համապատասխանությունը դպրոցի ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Դպրոցական ենթակառուցվածքն այն ամենն է, ինչն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում է ուսումնական գործընթացի կազմակերպմանը և հաջող իրականացմանը:

Ժամանակակից դպրոցական ենթակառուցվածքի ձևավորումը պետք է ուղղված լինի երեխաների անձնական կարիքների ապահովմանը և գործունեություն-իրավասություն մոտեցման իրականացմանը:

Կրթական նոր չափանիշներին հաջող անցման համար պետք է կատարվեն երկու հիմնական պայմաններ.

1) ուսուցիչների և դպրոցի ղեկավարների պատրաստակամությունը նորարարական գործունեությանը

2) դպրոցի ենթակառուցվածքի նյութատեխնիկական բաղադրիչի բարելավում

Դպրոցի ենթակառուցվածքներն իրենցից ենթադրում են՝ առարկայական լաբորատորիաները, կաբինետները, դասասենյակները, գրադարանը, բուժկետը, հանդիսությունների դահլիճը, մարզադահլիճը, արհեստանոցը, ճաշարանը, անհրաժեշտ այլ կաբինետներ՝ սովորողների կարիքները, նախասիրությունները ապահովելու համար:

- Դպրոցում գործող դասասենյակների թիվը՝ 9-ն է, որից 4-ը՝ 30 մ^2, իսկ 5-ը՝ 48մ^2, ապահոված են աշակերտական սեղան-նստարաններով, վերանորոգված է 4 դասասենյակ
- Դպրոցում առկա է ևս 2 դասասենյակ, որոնք ըստ անհրաժեշտության, կարող են ծառայել նպատակին: Այս պահին դասասենյակներից մեկը ծառայում է որպես ընթերցասրահ՝ 30 մ^2 վերանորոգված է և համալրված համակարգչով և

ուսումնական նյութերով: Այստեղ անցկացվում են նաև արտադասարանական խմբակների պարապունքները: Մյուս դասասենյակն այս պահին օգտագործվում է որպես նյութատեխնիկական բազայի, ինչպես նաև ուսման կազմակերպման համար անհրաժեշտ պարագաների պահպանման տարածք:

- Գրադարան՝ 36 մ², վերանորոգված է
- Բուժկետ՝ 10 մ², համալրված է պահարանով, մահճակալով, առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքով, բժշկական սարքերով
- **Առարկայական կաբինետներ**

Ֆիզիկա - 36 մ², ունի վերանորոգման և անհրաժեշտ ուսումնական նյութերի համալրման կարիք

Քիմիա - 36 մ², ունի վերանորոգման և անհրաժեշտ ուսումնական նյութերի համալրման կարիք

Աշխարհագրություն -36 մ², վերանորոգված է, անհրաժեշտ է ուսումնական նյութերի համալրում

ՆԶՊ - 36 մ², վերանորոգված է

Պատմություն – 36 մ², վերանորոգված է, անհրաժեշտ է ուսումնական նյութերի համալրում

Շախմատ – 36 մ² - վերանորոգված է, կահավորված համապատասխան գույքով

Ինֆորմատիկա – 52 մ² վերանորոգված է, կահավորված համապատասխան գույքով

Տեխնոլոգիայի կաբինետներ – չկա

Երգ երաժշտության կաբինետ - չկա

- **Լաբորատորիաներ**

Ֆիզիկա – 12 մ², ոչ բարվոք վիճակ

Քիմիա – 14 մ², ոչ բարվոք վիճակ

- Ուսուցչանոց - 50 մ², վերանորոգված է և կահավորված

- Տնօրենի կաբինետ – 20 մ^2, մասնակի վերանորոգված է
- Փոխտնօրենի կաբինետ – 15 մ^2 մասնակի վերանորոգված է
- Հաշվապահի կաբինետ – 15 մ^2 մասնակի վերանորոգված է
- Ճաշարան – 50 մ^2, վերանորոգված է , գործում է
- Պահակակետ – 9 մ^2, մասնակի վերանորոգված է
- Ձենքի սենյակ – 15 մ^2, նորմալ վիճակ
- Մարզադահլիճ – 150 մ^2, վերանորոգված է մասսամբ
- Հանդերձարան – 2 հատ, ունի վերանորոգման կարիք
- Նկուղ-ապաստարան – 75 մ^2, կահավորված է, և ունի 130 քնապարկ

* Բազմամասնագիտական թիմի մասնագետների սենյակ - չկա
* Արհեստանոց - չկա
* Հանդիսությունների դահլիճ – չկա

- **Մարդկային ռեսուրսներ**

Տնօրեն

Տնօրենի տեղակալ ուսումնական գծով

Ուսուցիչների թիվը՝ 19

Ուսուցչի օգնականների թիվը՝ 2

Գրադանավար

Լաբորանտ

Նախակրթարանի դաստիարակների թիվը՝ 3

(մանկավարժների թիվը՝ 28)

Օպերատոր

Հաշվապահ

Տնտեսվար

Բուժ. աշխատող (համատեղության կարգով)

Պահակներների թիվը՝ 3

Մաքրուհիների թիվը՝ 2

Աշակերտների թիվը՝ 146

Նախակրթարանի երեխաների թիվը՝ 62

Մանկավարժական խորհրդի անդամների թիվը՝ 24

Ծնողական խորհրդի անդամների թիվը՝ 9

Կառավարման խորհրդի անդամների թիվը՝ 9

Աշակերտական խորհրդի անդամների թիվը՝ 8

ջրամատակարարում	**շուրջօրյա չէ, հավաքվում է բաքերում**
կոյուղի	**կենտրոնացված -բավարար**
էլեկտրամատակարարում	**շուրջօրյա - բավարար**
գազամատակարարում	**չկա**
ջեռուցում	**էլեկտրական վառարաններ**
ինտերնետ կապ	**անհատական կրիչի, Wi-Fi-ի,**
կապի միջոց	**բջջային հեռախոս**

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Դպրոցում առկա առարկայական կաբինետները՝ Ֆիզիկա Քիմիա Կենսաբանություն	• Բազմամասնագիտական թիմի մասնագետների սենյակ-չկա • Արհեստանոց –չկա • Հանդիսությունների դահլիճ – չկա • Լինգաֆոնիայի կաբինետ – չկա

Աշխարհագրություն
Ռազմագիտություն
Պատմություն
Ինֆորմատիկայի (նաև՝ Ռոբոտաշինության) կաբինետ

- Լաբորատորիաներ՝
  Քիմիա
  Ֆիզիկա
- Դասասենյակ՝ 9 հատ
- Մարզադահլիճ
- Հանդերձարաններ
- Ուսուցչանոց
- Գրադարան
- Բուժկետ
- Ճաշարան
- Տնօրենի կաբինետ
- Ուսումնական գծով տնօրենի տեղակալի կաբինետ
- Հաշվապահի կաբինետ
- Պահակակետ
- Զենքի սենյակ
- Տեխնոլոգիայի կաբինետներ
- Երգ երաժշտության կաբինետ - չկա

- **Վերլուծություն / Համապատասխանություն**

Դպրոցում գործում են ֆիզիկայի, քիմիայի կաբինետ, լաբորատորիաներ, պատմության, աշխարհագրության, ՆԶՊ-ի, շախմատի, ինֆորմատիկայի կաբինետներ, 9 դասասենյակ, մարզադահլիճ, մարզահրապարակ, գրադարան, որոնց միջոցով իրականացվում են կրթական ծրագրերը:

Նշված տվյալների հիման վրա կարելի է կատարել հետևյալ վերլուծությունը, որ դպրոցում առկա ենթակառուցվածքների, այդ թվում՝ դասասենյակներ, առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ, բուժկետ, գրադարան, աշխատասենյակներ, մարզադահլիճ և մարդկային ռեսուրսների, այդ թվում՝ առարկաները դասավանդող ուսուցիչներ, գրադարանավար, լաբորանտ, միջև կա համապատասխանություն, բացառությամբ՝

* Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ, չնայած, որ միջոցառումները կազմակերպվում են երկրորդ հարկի միջանցքում առանձնացված մասում, որտեղ կառուցված է բեմ,

* Դպրոցը չունի տեխնոլոգիայի, լինգաֆոնիայի, երգ-երաժշտության կաբինետներ, սակայն դասերն անցկացվում են դասասենյակներում:

* Դպրոցը չունի արհեստանոց՝ տարածքի պատճառով:

Դպրոցն ունի գրադարան, որտեղ աշխատում է համապատասխան կրթության գրադարանավար, ով աջակցում է ինչպես սովորողներին, այնպես էլ ուսուցիչներին, գրադարանը համալրված է դասագրքերով և համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներով, գեղարվեստական գրքերով, հետևաբար այստեղ առկա համապատասխանություն:

Համապտասխանության շեղում կա մարդկային ռեսուրսների մասով, այդ թվում՝ ֆիզիկայի և քիմիայի լաբորանտը 1 աշխատակից է, բուժաշխատողը դպրոցում է համատեղության կարգով, չկա ՄԿԱ-ի գծով տնօրենի տեղակալ:

Դպրոցն անհրաժեշտության դեպքում կարող է ապահովել սովորողների և աշխատակիցների անվտանգությունը, քանի որ նկուղը հարմարեցված է որպես ապաստարան, կահավորված է և ունի 130 հատ քնապարկ: Այստեղ առկա է համապատասխանություն:

Ջրամատակարարման մասով, ենելով տարաածաշրջանի պայմաններից, կա շեղում, այն է՝ շուրջօրյա չէ, ջուրը պահեստավորվում է հատուկ տարաներում (բաքերում), ինչ միջոցով հնարավոր է լինում բավարարել դպրոցի կարիքները:

Շենքը ջեռուցվում է էլեկտրական վառարանների միջոցով, անհրաժեշտ ժամանակ կարողանում ենք ապահովել 21-22 աստիճան ջերմություն, ինչի շնորհիվ հնարավորություն է լինում ապահովել դպրոցի բնական գործունեությունը: Այն հնարավոր է լինում նաև, քանի որ դպրոցի էլեկտրամատակարարումը շուրջօրյա է:

Դպրոցում գազամատակարարում չկա:

Դպրոցն ունի նաև ինտերնետ հասանելիություն, իսկ հեռախոսակապի միջոց է ծառայում բջջային կապը:

Նպատակ	• Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի ստեղծում • Մանկավարժների ինքնազարգացման և ինքնակրթության կաբինետի ստեղծում • Լինգաֆոնիայի կաբինետի ստեղծում • Տեխնոլոգիայի կաբինետների ստեղծում • Հանդիսությունների դահլիճի ստեղծում • Առարկայական կաբինետների և լաբորատորիաների վերանորոգում, ժամանակակից նյութատեխնիկական բազայով համալրում • Արհեստանոցի ստեղծում

Խնդիր	• Պետական բյուջեից ֆինանսական միջոցների պակաս • Արտաբյուջետային միջոցների պակաս • Շենքային տարածքի բացակայություն
Իրականացվող գործողություն	• Շարունակել պահպանել ստեղծված վստահելի ներդրումային միջավայրը • Համագործակցել ոլորտի համապատասխան մասնագետների, կազմակերպությունների հետ՝ նյութատեխնիկական բազայի արդիականացման, համալրման համար • Գտնել բարերարներ, ֆինանսական միջոցներ, մասնակցել դրամաշնորհային ծրագրերի՝ դպրոցին կից մասնաշենք կառուցելու համար
Պատասխանա-տուներ	• Համակարգող • Տնօրեն
Կատարման ժամկետներ	• Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի ստեղծում – 2024-2025 թթ. • Մանկավարժների ինքնազարգացման և ինքնակրթության կաբինետի ստեղծում՝ համատեղ ընթերցասրահում 2023-2024 թթ. • Լինգաֆոնիայի կաբինետի ստեղծում – 2024-2027 թթ. • Տեխնոլոգիայի կաբինետների ստեղծում – նոր կառուցվելիք կից մասնաշենքում • Հանդիսությունների դահլիճի ստեղծում – նոր կառուցվելիք կից մասնաշենքում • Առարկայական կաբինետների և լաբորատորիաների

	վերանորոգում, ժամանակակից նյութատեխնիկական բազայով համալրում – 2023-2026 թթ. • Արհեստանոցի ստեղծում – նոր կառուցվելիք կից մասնաշենքում • Միջանցքների վերանորոգում – 2024 -2025 թթ,
Ռիսկեր	• Ֆորսմաժորային իրավիճակ • Համագործակցող կազմակերպությունների հետ հանկարծակի, չնախատեսված իրավիճակի փոփոխություն
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Առաջացած իրավիճակից բխող գործողություններ՝ ըստ անհրաժեշտության
Ակնկալվող արդյունքներ	• Կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան դպրոց • Բարձր ուսման որակ • Մասնագիտական կողմնորոշում ունեցող շրջանավարտներ • Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած դպրոց • Առարկայական օլիմպիադաներին ակտիվ մասնակցություն • ԲՏՃՄ առարկաների նկատմամբ հետաքրքրության ավելացում • Արդյունավետ դասեր
Գնահատման չափանիշներ	• Գործողություններ կատարված չեն՝ անբավարար • Վերանորոգվել է միջանցքը, կաբինետները համալրվել են

	նոր տեխնիկայով - բավարար • Նաև՝ ստեղծվել են մասնագիտական կողմնորոշման և իքնազարգացման կաբինետները - լավ • Ենթակառուցվածքները ամբողջությամբ համապատասխանում են ուսումնական գործընթացը կազմակերպելու համար՝ գերազանց
Վերահսկողություն	• Լիազորված մարմին • Համակարգող

Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Դպրոցում գործում է կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ, որը հանդիսանում է որպես կառավարման մարմին և ձևավորվում նախարարության սահմանած կարգով: Խորհրդի անհատական կազմը հաստատում է լիազորված մարմինը:

Դպրոցում կառավարման խորհրդի հետ համագործակցությունը բարձր մակարդակի վրա է: Ղեկավարման 5 տարիների ընթացքում դպրոցի կանոնադրության համաձայն՝ ըստ կառավարման խորհրդի աշխատակարգի և դպրոցի աշխատանքային պլանի՝ քննարկվել և ընդունվել են համապատասխան որոշումներ՝ ի շահ սովորողի և դպրոցի:

Դպրոցի կառավարման հին Կարգի համաձայն՝ խորհրդի քննարկման է ներկայացվել դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, որը արժանացել է հավանության և ներկայացվել լիազորված մարմնի հաստատմանը:

Կառավարման խորհրդի քննարկման և հավանությանն է ներկայացվել նաև դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները: Կառավարման խորհուրդը սահմանել է նաև դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները:

Կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացվել դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, նախարարության կողմից մշակված և հաստատված դպրոցի ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգի հիման վրա իմ կողմից որպես տնօրեն մշակված՝ դպրոցի ուսուցչի թափուր տեղի անցկացվելիք կարգը:

Կառավարման խորհրդի անդամները ընդգրկվել են դպրոցի ներքին գնահատման հանձնաժողովում և մասնակցել ներքին գնահատմանը:

Կառավարման խորհրդի կողմից իրականացվել է ընթացիկ վերահսկողություն իմ՝ որպես տնօրենի գործունեության:

2018 թվականին կառավարման խորհուրդը ընտրել է ինձ՝ որպես դպրոցի տնօրեն:

Իմ ղեկավարման 5 տարիների ընթացքում կառավարման խորհրդի կողմից գումարված բոլոր նիստերին մասնակցել եմ խորհրդակցական ձայնի իրավունքով, ներկայացրել բլոր համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև սովորողների և դպրոցի անհրաժեշտ կարիքները, նպատակները, կատարվել են ընդհանուր քննարկումներ՝ պահպանելով ժողովրդավարության սկզբունքները, կայացվել են մասնակցային որոշումներ, լսվել է խորհդրի անդամների կողմից վեր բարձրացված առաջարկությունները:

Չնայած այս ամենին, եղել են նաև խորհրդի անդամների բացակայություն և որոշակի պասիվություն՝ առաջարկությունների ներկայացման մասով:

Նոր կարգի համաձայն՝ Դպրոցի կառավարման խորհուրդը

* պետք է աջակցի ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկի զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսի զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տա եզրակացություն:

* պետք է հաստատի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, նախարարության կողմից մշակված և հաստատված դպրոցի ուսուցչի թափուր տեղի

մրցույթի օրինակելի կարգի հիման վրա տնօրենի կողմից մշակված դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը:

* քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները

* հաստատում է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրում խորհրդի նախագահ, քարտուղար

* իրականացնում է օրենքով հիմնադրի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ

<u>Տվյալներ ուսումնական.հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ</u>

Անուն, ազգանուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը
Ղազարյան Տարոն	Քաղծառայող	բարձրագույն	2020 (լիազոր մարմին)
Գափոյան Սևադա	Չի աշխատում	բարձրագույն	2020 (ՏԻՄ)
Բալանյան Մերուժան	Չի աշխատում	մ/ըա	2020 (ԿԳՄՄՆ)
Խաչատրյան Հրաչ	Վարորդ	մ/մ	2020 (ՏԻՄ)
Մելքոնյան Մանվել	Վարդենիկի հողաշինարարության բաժնի ղեկավար	բարձրագույն	2020 (ՏԻՄ)
Ավետիսյան Գոհարիկ	Վարդենիկի №1 հ/դ՝մաթեմատիկայի ուսուցիչ	բարձրագույն	2017 (մանկավարժական խորհուրդ)
Բաղոյան Անահիտ	Վարդենիկի №1 հ/դ՝հ. լեզվի և գրականության ուսուցիչ	բարձրագույն	2017 (մանկավարժական խորհուրդ)
Մանուկյան Անժելա	Չի աշխատում	մ/ը	2020(ծնողականական խորհուրդ)
Շահինյան Հայարփի	Չի աշխատում	մ/ը	2020(ծնողականական խորհուրդ)

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
Կառավարման խորհրդը • Հաստատել է իր աշխատակարգը • Ընտրել է խորհրդի նախագահ և քարտուղար • Քննարկել է դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, արժանացրել հավանության և ներկայացվել է լիազորված մարմնի հաստատմանը • Քննարկել և հավանության է արժանացրել դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները • Սահմանել է դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները • Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում՝	Խորհուրդի անդամների • Առաջարկությունների ներկայացման պասիվություն • Հաճախակի բացակայություններ

աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, նախարարության կողմից մշակված և հաստատված դպրոցի ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգի հիման վրա իմ կողմից՝ որպես տնօրեն մշակված՝ դպրոցի ուսուցչի թափուր տեղի անցկացվելիք կարգը

- Իրականացրել է ընթացիկ վերահսկողություն իմ՝ որպես տնօրենի գործունեությունը

- Կառավարման խորհրդի անդամներն ընդգրկվել են դպրոցի ներքին գնահատման հանձնաժողովում և մասնակցել ներքին գնահատմանը:

- ՀՀ կառավարության սահմանած կարգով ընտրել է տնօրեն (հին Կարգի համաձայն)

- Վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը

- **Վերլուծություն**

Կառավարման խորհրդի հետ համագործակցությունը եղել է արդյունավետ, թափացիկ՝ չնայած խորհրդի կողմից առաջարկությունների ներկայացման քիչ թվի: Խորհուրդը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով: Իմ ղեկավարման տարիների ընթացքում համագործակցել եմ երկու կառավարման խորհուրդների հետ, որի շրջանակներում չի եղել որևէ կոնֆլիկտային իրավիճակ, կայացվել են մասնակցային որոշումներ: Հետևաբար՝ երկու խորհուրդների հետ իմ համագործակցության արդյունքը նպաստել է դպրոցի զարգացմանը:

Նպատակ	• Զարգացման ծրագրի կատարման նկատմամբ հետևողական վերահսկողություն • Զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ օբկետիվ եզրակացության ներկայացում • Արդյունավետ համագործակցություն դպրոցի հետ • Խորհրդի անդամների կողմից առաջարկությունների ներկայացում
Խնդիր	• Խորհրդի անդամների հաճախակի բացակայություն • Խորհրդի անդամների առաջարկությունների ներկայացման պասիվություն • Պասիվություն դպրոցում գործող խորհրդակցական մարմինների հետ
Իրականացվող գործողություն	• Կառավարման խորհդի նախագահի կողմից՝ ներկայացնել խորհրդի անդամների լիազորություններն ու պարտականությունները • Ապահովել աշխատանքային առողջ միջավայր

	• Ապահովել միջոցներ անհրաժեշտության դեպքում համակցված/հեռավար նիստեր հրավիրելու համար • Ներկայացնել պարբերաբար փոփոխվող օրենքը, մասնավորապես՝ իրենց լիազորությունների և պարտականությունների մասով • Խթանել խորհրդի անդամների կողմից մասնակցային որոշումների կայացմանը • Աջակցել խորհրդի անդամների՝ ուսումնական և դաստիարակության գործընթացի վերահսկողության անմիջական մասնակցությանը • Ապահովել ժողովրդավարության սկզբունքները
Պատասխանա-տուներ	Կառավարման խորհրդի նախագահ
Կատարման ժամկետներ	• Վերահսկողություն խորհրդի գործունեության 3 տարիների ժամանակահատվածում • Ամենայա եզրակացության ներկայացում՝ յուրաքանչյուր ուստարվա ավարտին • Առաջարկությունների ներկայացում լիազորությունների ժամանակահատվածում
Ռիսկեր	• Տնօրենի ղեկավարման ընթացքում Կառավարման խորհրդի լիազորությունների դադարում՝ ժամկետի լրանալու պատճառով • Կառավարման խորհդրի անդամի լիազորությունների դադարում (3 անգամ նիստերին չմասնակցելու, անվստահության ձևավորման կամ մահվան դեպքում) • Պարբերաբար փոփոխվող օրենքներին ոչ արագ և ճիշտ արձագանքումը

	• Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցում • Ուսումնական գործընթացի վերահսկողության, գնահատման և տրված եզրակացության ոչ օբեկտիվություն
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Տնօրենի և կառավարման խորհրդի համագործակցության արդյունքում կազմակերպել և իրականացնել արդյունավետ աջակցություն, վերահսկողություն, ուսումնական և դաստիարակության գործունեության իրականացման համար • Իրազեկել պարբերաբար փոփոխվող օրենքների մասին • Հստակեցնել անդամների գործունեությունն իրենց լիազորությունների սահմաններում • Ապահովել առաջարկությունների ներկայացում • Ներկայացնել զարգացման ծրագրի կատարման մասով վերահսկողության և մշտադիտարկման արդյունքում օբեկտիվ եզրակացություն • Ապահովել ժողովրդավարության սկզբունքները
Ակնկալվող արդյունքներ	• Խորհրդի կողմից համագործակցություն՝ ներդրումային միջավայրի ձևավորման գործում • Արդյունավետ համագործակցություն տնօրենի և դպրոցի խորհրդակցական մարմինների հետ • Ակտիվ մասնակցություն խորհրդի նիստերին առկա և/կամ հեռավար
Գնահատման չափանիշ	• Խորհուրդը չի ապահովում անհրաժեշտ անդամների քվորում նիստերն անցկացնելու համար - անբավարար • Խորհրդի հրավիրված նիստերին մասնակցում է առնվազն կեսից ավելի անդամ, կայանում են նիստերն առանց որևէ նախաձեռնության և ռեալ առաջարկների՝ բավարար • Խորհրդի նիստերը իրավազոր են, քննարկվել են տնօրենի

	կողմից ներկայացված հաշվետվություններ, որի հիմքով ներկայացվել են առաջարկություններ – լավ • Խորհուրդը իրավազոր է, գործում է հաստատված աշխատակարգով, քննարկել է հաշվետվությունները, ներկայացրել է առաջարկություններ և արդյունքում ներկայացրել օբյեկտիվ եզրակացություն՝ զարգացման ծրագրի կատարման մասով՝ 1 ուսումնական տարվա համար, ինչպես նաև ապահովել ներդրումային միջավայր - գերազանց
Վերահսկողություն	• Լիազորված մարմին • Կառավարման խորհրդի նախագահ

Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

...Մարդու ցանկությունը մարդկանց հետ համակարգված, ներդաշնակ աշխատանքի համար և միասին աշխատելու ունակություն՝ ընդհանուր նպատակներին հասնելու համար

Համագործակցությունը որևէ գործունեության ընթացքում մարդկանց միջև փոհարաբերությունների տեսակ է, որը բնութագրվում է հետևողականությամբ, կարծիքների և գործողությունների համադրությամբ: Համագործակցությունը աշխատանքի համատեղ կատարումն է, խնդրի կամ առաջադրանքի լուծմանը համատեղ մասնակցությունը, փոխօգնությունը: Այն դրական փոխազդեցություն է, որի ընթացքում մասնակիցների նպատակներն ու շահերը համընկնում են կամ որոշ մասնակիցների նպատակներին հասնելը հնարավոր է միայն այլ մասնակիցների շահերի և ձգտումների ապահովման միջոցով:

Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ խիստ անհրաժեշտ է, քանի որ յուրաքանչյուրն իր գործառույթների սահմաններում նպատակ ունի նպաստել դպրոցի զարգացմանը, կրթական ծրագրերի և սովորողների կարիքներին համապատասխան ուսուցման իրականացմանը, որը իմ ղեկավարման տարիների ընթացքում կազմակերպվել է պատշաճ մակարդակով:

- **Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ**

Մինչ խոշորացումը, համագործակցությունը իրականացվել է գյուղապետարանի հետ, որի շրջանակներում կազմակերպվել է դպրոցի աղբանանությունը՝ կնքված պայմանագրերի հիման վրա (այժմ Մարտունի խոշորացված համայնքի հետ):

Դպրոցն ակտիվ մասնակցել է շաբաթօրյակներին, որի շրջանակներում նրանց կողմից տրամադրվել է համապատասխան գործիքներ:

Դպրոցը ակտիվ մասնակցություն է ունեցել առարկայական օլիմպիադաներին, որի մարզային, ինչպես նաև հանրապետական փուլում մրցանակային հորիզոնականներ զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են գյուղապետարանի կողմից պատվոգրերով և դրամական պարգևներով:

Արդեն սկսվել են դպրոցի՝ շուրջ 500 մ^2 տարածքի ասֆալտապատման նախնական աշխատանքները, որն իրականանում է Մարտունու խոշորացված համայնքի հետ համագործակցության արդյունքում:

Դպրոցում անցկացվում է շախմատի ամենամյա հուշամրցաշար՝ նվիրված դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ, վաղամեռիկ Կորյուն Հովհաննիսյանի հիշատակին: Այն միավորում է ամբողջ խոշորացված համայնքի աշակերտներին, ովքեր սիրում և կարողանում են խաղալ շախմատ: Հուշամրցաշարը, որը անցկացվում է Մարտունի խոշորացված համայնքի հետ համագործակցությամբ՝ հովանավորվում է Կ.Հովհաննիսյանի որդու կողմից:

Օրենքի սահմաններում ձևավորված է նաև համագործակցություն մարզպետարանի հետ. վերջինս համարվում է դպրոցի լիազորված մարմին: Մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում իմ ղեկավարության օրոք դպրոցին է նվիրաբերվել 36 աշակերտական սեղան՝ իր 72 աթոռով, 2 ուսուցչական սեղան՝ իր 2 աթոռով, 4 գրատախտակ և որշակի սպորտային գույք:

Ղեկավարման 5 տարիների ընթացքում եղել է փոխադարձ մասնակցություն կազմակերպված միջոցառումներին ինչպես դպրոցում, այնպես էլ համայնքում՝ տեղական կառավարման մարմինների կողմից:

- **Համագործակցություն ծնողական համայնքի մարմինների հետ**

Իմ ղեկավարման ընթացքում ձևավորվել է ակտիվ համագործակցություն դպրոցի և ծնողական համայնքի միջև, որի կապող հիմնական օղակը ծնողական խորհուրդն է: Ծնողները մշտապես հետաքրքրված են իրենց երեխայի կրթությամբ, դաստիարակությամբ՝ համապատասխան երեխաների կարիքներին, մասնագիտական կողմնորոշմամբ, դպրուցում իրենց հետաքրքրությունների և նախասիրությունների իրականացմամբ, ինչպես նաև դասարանի պայմանների հարմարավետությամբ: Մասնավորապես՝ 3 տարի առաջ երկու ծնողի սեփական նախաձեռնությամբ և միջոցներով վերանորոգվել է դասասենյակ:

Ծնողները ծնողական խորհրդի համակարգմամբ մասնակցում են կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին, շաբաթօրյակներին:

Քանի որ Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով հերոսաբար զոհվել են նաև դպրոցի 5 շրջանավարտ, ուստի մշտապես մեր ուշադրության կենտրոնում են գտնվում այդ հերոսների ընտանիքները, կազմակերպվում են նրանց նվիրված հուշ միջոցառումներ: Արդեն կա նախնական պայմանավորվածություն ծնողների և լիազորված մարմինի հետ դպրոցի 5 դասասենյակները անվանակոչելու նրանց անուններով:

Ճիշտ է՝ դպրոցում մինչ օրս չեն գործում երկարօրյա խմբակներ, որի նպատակն է ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերել, դասապատրաստումներին աջակցել, ինքնուրույն սովորելու կարողունակությունները, ստեղծագործական

ունակությունները զարգացնել:

Ուստի, այս ուղղությամբ արդեն իսկ տարվում են աշխատանքներ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատած կարգի և ծնողների համաձայնությամբ:

- **Համագործակցություն կրթության կառավարման մարմինների հետ**

Դպրոցն իր երկարամյա գործունեության ընթացքում մշտապես համագործակցել է կրթության կառավարման մարմինների հետ՝ գործառույթների շրջանակներում, այդ թվում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ, Գեղարքունիկի մարզպետարանի հետ՝ որպես լիազորված մարմին, ինչպես նաև ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ՏՄԱԿ-ի հետ: Դպրոցը բարեխղճորեն, օրենքով սահմանված կարգով կատարում է կրթության կառավարման մարմինների կողմից հաստատված որոշումները, հրամանները, կարգադրությունները:

ԿՏԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում կարողանում ենք ժամանակին ապահովել և կազմակերպել նրա կողմից ներկայացված ուսումնական գործընթացին վերաբերվող էլեկտրոնային գրանցումները

ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ համագործակցությունը ձևավորվում է կրթական ծրագրերի, ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև նրա կողմից նախաձեռնած ուսուցիչների՝ համապատասխան ծրագրերով վերապատրաստումներին մասնակցության շրջանակներում: Ժամանակին իրականացվում են ԿԶՆԱԿ-ի կողմից ներկայացված առաջադրանքները ուսման որակի գնահատման համար՝ ներկայացված գրավոր աշխատանքների միջոցով:

ՏՄԱԿ-ի հետ համագործակցություն. Ճիշտ է՝ դպրոցում չեն սովորում ԿԱՊԿՈՒ սովորողներ, այնուհանդերձ, դպրոցի ուսուցիչները մասնակցել են ծրագրով նախատեսված համընդհանուր ներառականությանը վերաբերող վերապատրաստումներին:

- **Համագործակցություն շահառու կազմակերպությունների հետ**

  Շահառու կազմակերպությունների հետ համագործակցություն եղել է նպատակային, որի շնորհիվ գրանցվել են դրական արդյունքներ:

Մասնավորապես՝

1) «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայասան» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում՝

ա) 13 մլն ՀՀ դրամ հատկացվել է դպրոցի՝ 1244 մ² մակերեսով տանիքը մետաղական նոր կոնստրուկցիաներով հիմնանորոգելու համար:

բ) վերանորոգվել և գույքով ապահովվել է գրադրանը - շուրջ 2,5 մլն դրամ

գ) վերանորոգվել է Նախակրթարանի երկրորդ խմբի խաղասրահը, համալրվել է նաև անհրաժեշտ գույքով – շուրջ 2 մլն դրամ

դ) վերանորոգվել է առաջին դասարանի սովորողների համար 50 մ² մակերեսով դասասենյակ, համալրվել անհրաժեշտ գույքով – 4 մլն դրամ

ե) վերանորոգվել է մարզադահլիճը և կից երկու հանդերձարանները (տղաների, աղջիկների), համալրվել է համապատասխան մարզագույքով – 8 մլն դրամ

զ) վերանորոգվել է Ինֆորմատիկայի (Համակարգչային) կաբինետը, համալրվել 10 համակարգչով՝ համապատասխան սեղան-աթոռով, տեսացրիչով և էկրանով – 3,5 մլն դրամ

2) ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրով» վերանորոգվել է ճաշարանը և խոհանոցը – 1,5 մլն դրամ

3) «Save the Children» կազմակերպության կողմից վերանորոգվել է նախակրթարանի առաջին խաղասենյակը – 50 մ² , համալրվել է համապատասխան գույքով – 4 մլն դրամ

4) Դպրոցի շրջանավարտ Սուրեն Հարությունյանի անձնական միջոցներով հիմնանորգվել է երկու դասասենյակ՝ ընդհանուր 80 մ² – 3 մլն դրամ

Ընդհանուր առմամբ՝ համագործակցության արդյունքում տեղի է ունեցել շուրջ 41,5 միլիոն դրամի ներդրում:

5) Դպրոցը համագործակցում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հետ, որի արդյունքում դպրոցի համակարգչային կաբինետում իրականացվում է «Ռոբոտաշինություն» ուսումնական ծրագիրը: Այս ծրագրին մասնակցում են շուրջ 35 աշակերտ, այդ թվում՝ համայնքի այլ դպրոցներից:
6) 1-ից 4-րդ դասարանի սովորողներին, ինչպես նաև նախակրթարանի երեխաներին տրամադրվում է տաք սնունդ՝ «Տաք սնունդ» կազմակերպության կողմից:
7) Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվում է համագործակցություն ավագ դպրոցների, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:
8) Կրթական ծրագրերի իրականացման համար պարբերաբար համագործակցություններ են իրականացվում հասարակական կազմակերպությունների կողմից:
9) Սովորողների արտադպրոցական դաստիարակության նպատակով դպրոցը համագործակցում է արվեստի և սպորտի ուսումնական հաստատությունների հետ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
Դպրոցի համագործակցությունները՝ • ՀՀ ԿԳՄՄՆ ➢ Գեղարքունիքի մարզպետարան ➢ Մարտունու խոշորացված համայնք ➢ ԿԶՆԱԿ ➢ ԳԹԿ ➢ ԿՏԱԿ ➢ ՏՄԱԿ	➢ ՀՀ կառավարության կողմից սահմանված դրամաշնորհային մրցույթների մասնակցություն

- Հանրակրթական դպրոցներ
- Արմաթ ինժեներական լաբորատորիա
- ԱԻՆ
- Ավագ դպրոց
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ
- Բարձրագույն ուսումնական հաստատություններ
- «Հայ կրթական հիմնարկություն»
- «Դասավանդիր Հայասան» հիմնադրամ
- “Save the children” կազմակերպություն
- ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագիր»
- «Տաք սնունդ»

- **Վերլուծություն**

Ըստ վերը նշված փաստերի, դպրոցն ունի բարձր հեղինակություն, համագործակցության հուսալի միջավայր, համագործակցության արդյունքում վերջին տարիներին բարելավվել են շենքային պայմանները, համալրվել է նյութատեխնիկական բազան, իրականացվել են սովորողների ուսման որակի բարձրացման համար կրթական ծրագրեր, միջոցառումներ: Համագործակցության արդյունքում բարերարների և կազմակեպությունների միջոցով կատարվել է 41,5 մլն դրամի ներդրում, 1-ից 4-րդ

դասարանի սովորողները, ինչպես նաև նախակրթարանի երեխաները ապահովված են տաք սնունդով, դպրոցի սովորողները, ինչպես նաև համայնքի երեխաները մասնակցում են դպրոցում կազմակերպվող «Ռոբոտաշինության» դասընթացներին: Մարտունի խոշորացված համայնքի ներկայացուցիչները պարբերաբար ակտիվ ձևով մասնակցում է դպրոցում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին:

Նպատակ	• Սովորողների կարողունակությունների ձևավորում • Որակյալ կրթության ապահովում • Դպրոցի հեղինակության բարձրացում • Սովորողների կրթության և սոցիալականացման ապահովում • Արտադպրոցական դաստիարակության զարգացում • Մասնագիտական կողմնորոշում • ՀՀ ԿԳՄՄՆ-ի, Գեղարքունիկի մարզեպտարանի, Մարտունի խոշորացված համայնքի հետ կրթական քաղաքականության ապահովում • Դպրոցը՝ որպես համայնքի մշակութային, սպորտային կենտրոն • Ծնողական համայնքի՝ որպես շահառու մարմին, ինտեգրում կրթական զարգացմանը • Համագործակցության արդյունքում միջանցքների վերանորոգում • Դպրոցի բակի 500 մ^2 տարածքի ասֆալտապատում • Կից մասնաշենքի կառուցում
Խնդիր	• Կից մասնաշենքի կառուցում

	• Նոր համագործակցություններ
Իրականացվող գործողություն	• Ընդլայնել համագործակցությունների շրջանակը • Ապահովել արտաբյուջետային ֆինանսական միջոցների շարունակական արդյունավետ օգտագործում • Իրականացնել ծրագրային համագործակցություն ՀԿ-ների հետ • Ապահովել կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցություն՝ շահառու մարմինների հետ • Ապահովել Մարտունիի խոշորացված համայնքի հետ արդյունավետ շարունակական համագործակցությունը • Շարունակել փոխշահավետ համագործակցությունները վերը նշված բոլոր կազմակերպությունների հետ • Կառուցել կից մասնաշենք նոր համագործակցությունների շրջանակներում
Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Համակարգող, • ԾԽ, ԱԽ, ԿԽ, ՄԽ • Համագործակցող մարմիններ
Կատարման ժամկետներ	• Կրթության կառավարման մարմինների, հետ համագործակցություն՝ ըստ նպատակների և կրթական ծրագրերի ամբողջ գործունեության ընթացքում • Տեղական ինքնակառավարման մարմինների՝ նպատակների և գործառույթների շրջանակներում • Շահառու մարմինների հետ համագործակցություն՝ ըստ նպատակի և սահմանվող ժամանակացույցի
Ռիսկեր	• Ֆորսմաժորային իրավիճակ • Համագործակցող կազմակերպությունների հետ

	պայմանագրի անսպասելի դադարեցում
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Իրականացնել կնքվող պայմանագրերի, համաձայանգրերի կետերի պատշաճ ուսումնասիրություն • Իրականացնել համապտասխան գործողություններ՝ ըստ անհրաժեշտության
Ակնկալվող արդյունքներ	• Ուսման բարձր որակ • Ժամանակակից դպրոց • Համագործակցային վստահելի միջավայր • Սովորողների մոտ արժեքային համակարգի զարգացում • Ծնողական համայնքի կողմից շարունակական ներդրումներ • Ներկայացվող ուսումնական առաջադրանքների ժամանակին և որակով իրականացում • Համագործակցությունների արդյունքում որակյալ արտադպրոցական կրթության • Համայնքում կրթական – մշակութային – սպորտ կենտրոն • Դպրոցի ասֆալտապատված բակ • Դպրոցի վերանորոգված միջանցքներ
Գնահատման չափանիշ	• Ոչ մի համագործակցություն չի նախաձեռնվել - անբավարար • Ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ՝ համագործակցության շրջանակներում • Արդյունավետ շարունակվում են վերը նշված բոլոր համագործակցությունները, վերանորոգվել են միջանցքները՝ լավ • Արդյունավետ շարունակվում են վերը նշված բոլոր

	համագործակցությունները, ձեռք բերված նոր համագործակցությունների արդյունքում իրականացվում են ծրագրեր, վերանորոգվել են միջանցքները, կառուցվել է կից մասնաշենքը՝ գերազանց
Վերահսկողություն	➢ Լիազորված մարմին ➢ Համակարգող ➢ Տնօրեն

Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Ժամանակակից դպրոցում առանցքային գործիչը ուսուցիչն է: Ժամանակակից դպրոցը պահանջում է նոր տեսակի ուսուցիչ, ով ոչ միայն կփոխանցի գիտելիքը, այլև կկողմնորոշի շրջանավարտին դեպի մտածված վերաբերմունքը սեփական կյանքի, շրջակա միջավայրի և անհատականության զարգացմանը, որն ունակ կլինի ինքնաիրացման: Նման կրթության կարող է հասնել միայն ազգային արժեքների վրա կենտրոնացած բարձր որակավորում ունեցող, ստեղծագործ, սոցիալապես ակտիվ և մրցունակ ուսուցիչը: Այս պարագայում կարևորվում է մանկավարժի մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը:

Դպրոցի մանկավարժական համակազմի որակավորման բարձրացման հիմնական նպատակն է զարգացնել մանկավարժի մասնագիտական կարողությունները, հմտությունները՝ մանկավարժական գործընթացի և դրա արդյունքների համակարգային արտացոլման համար:

Մանկավարժի մասնագիտական զարգացման և պահանջվող մակարդակում դրանց պահպանման ձևերը երկուսն են՝ ինքնակրթության-ինքնազարգացման և վերապատրաստումների միջոցով: Ինքնակրթությունն ու ինքնազարգացումն ուսուցչին տալիս են ստեղծագործական ազատություն: Բովանդակային առումով այն ներառում է այն

նյութերի ուսումնասիրությունն ու փորձարկումը, որոնք առնչվում են ուսուցչի մասնագիտական կարիքներին: Իսկ մանկավարժի մասնագիտական զարգացումը խթանող հիմնական գործոնները ինքնակրթվելու շարժառիթներն ու համագործակցային առողջ միջավայրն է, որը կարող է նպաստել կրթական նորարարությունների ստեղծմանն ու մանկավարժական առաջավոր փորձի տարածմանը:

Վերապատրաստումները և ինքնազարգացումը հնարավորություն է տալիս ուսուցչին իր մասնագիտական զարգացման, գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, այսինքն ապահովում է նաև մասնագիտական չափանիշների համապատասխանությունը:

Մանկավարժի մասնագիտական զարգացման արդի պահանջներին առնչվող բարեփոխումների ֆոնին, այնուամենայնիվ, առկա են ուսուցիչների մասնագիտական զարգացման արդյունավետ իրականացումը խոչընդոտող մի շարք հիմնախնդիրներ: Դրանք պայմանավորված են թե՛ ներքին (ուսուցչի մասնագիտական մոտիվացիայի ցածր մակարդակ, գործընկերների հետ ոչ հաճախակի համագործակցություն, ժամանակի սղություն) և թե՛արտաքին (ուսուցչի ցածր աշխատավարձ, գերծանրաբեռնված աշխատանք, նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների ոչ բավարար մակարդակ,բացակայություն) և մի շարք գործոններով:

Մասնագիտական զարգացման վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը, ըստ իս, սահմանված նոր Կարգի բովանդակությունն է, որում հստակ ամրագրված են մասնագիտական չափանիշները, ուստի մանկավարժների համար կտրամադրվի կաբինետ համակարգիչներով, կկազմվի աշխատակարգ, որում մշակված կլինեն այն գործողությունները, ըստ որի՝ կլինի նաև աջակցություն զարգացնելու հաջորդականորեն միմյանցից բխող մասնագիտական չափանիշի չորս բաղադրիչների բովանդակությունը: Բաղադրիչներն են՝

1.Զարգացման ոլորտներ

2.Մասնագիտական գործունեության ձևեր

3.Կարողունակության մակարդակներ

4.Մանկավարժի բնութագրեր

Յուրաքանչյուր բաղադրիչի պահանջի իրականացման համար անհրաժեշտ եմ գտում շարունակել և զարգացնել հետևյալ գործողությունները, որն էլ հենց հիմնախնդիրներ լուծումնեն են.

- վերապատրաստող մասնագետների հետ հետադարձ կապի ապահովումը
- վերապատրաստումների գնահատում՝ պարզելու դրանց արդյունավետությունն ու բարելավման հետագա քայլերը
- մասնագիտական գործունեության ինքնագնահատում և շարունակական ինքնակրթության իրականացում
- ուսուցիչների կողմից անհատական, ինչպես նաև խմբային ցանկացած ոլորտի հետազոտությունների իրականացում՝ բացահայտելու և տարածելու մանկավարժական առաջավոր փորձը
- ուսուցիչների նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների մշակում ու ներդնում
- մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունների, մենթոր դպրոցների, հիմնական և ավագ դպրոցների համագործակցության շրջանակների ընդլայնում՝ մանկավարժական լավագույն փորձը բացահայտելու և տարածելու նպատակներով
- դասալսումների արդյունավետության գնահատում: Ցածր ցուցանիշներ ունեցող ուսուցիչներին մասնագիտական խորհրդատվության և աջակցության ցուցաբերում տարբեր ձևերով
- սկսնակ ուսուցիչներին առավել փորձառու մասնագետների և մենթորների կողմից ուղղորդված մասնագիտական խորհրդատվության տրամադրում և աջակցում
- դպրոցում հաճախակի վերապատրաստումների կազմակերպում ՏՀՏ-ների և ուսումնասիրվող նոր մեթոդների կիրառման նպատակով / ինչպես նաև կոնկրետ առարկան կոնկրետ դասարաններում /

Նշված մեխանիզմը հնարավորություն կտա պատկերացնելու և զարգացնելու՝

- Դասավանդման առարկայի իմացությունը
- Դասավանդման մեթոդամանկավարժական կարողությունները
- Սովորողին ցուցաբերվող աջակցությունը
- Ինքնազարգացման և այլ մանկավարժներին մեթոդական՝ մենթորական և մենթորական աջակցությունը

Ինչպես նաև ըստ ոլորտների մասնագիտական գործունեության ձևերը՝

- Դասի վարում
- Առարկայական գիտելիքների զարգացում
- Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ինտեգրում
- ռեսուրսների ճիշտ կառավարում
- սովորողների կարիքների բացահայտում, գնահատում

- ուսումնական գործընթացի ներառականությունն և մասնակցայնությունն ապահովող կարողությունների ձևավորում
- կրթության ոլորտի օրենսդրության և պրակտիկայի իմացություն և այլն

Ըստ մասնագիտական գործունեության ձևերի՝ ուսուցչից ակնկալվող կարողություններն են

Ուսուցիչը՝

- գիտի առարկայի չափորոշիչը և ծրագիրը
- գիտի առարկայի ծրագրով նախատեսված բովանդակությունը
- կարողանում է մշակել սովորողի անահատական ուսուցման պլանը,կատարել առարկայական ծրագրի պարզեցում համապատասխանեցնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կարողություններին և զարգացման առանձնահատկություններին
- կարողանում է մշակել իր կողմից դասավանդվող առարկայի թեմատիկ պլանը,

առանձին դասերի պլանները նշելով դասի նպատակը, վերջնարդյունքները, խնդիրը, կիրառվող մեթոդները

- կարողանում է ուսումնական նյութը բացատրել հստակ, ապահովել միջառարկայական կապը, հետաքրքրություն առաջացնել թեմայի նկատմամբ, դասի արդյունավետության և մատչելիության համար կիրառել ՏՀՏ-ներ, նոր մեթոդներ և տեխնոլոգիաներ
- կարողանում է օգտվել գրադարանում առկա կրթական ռեսուրսներից, առկա լաբորատոր սարքերից, դիդակտիկ նյութերից
- կարողանում է արդյունավետ օգտագործել դասի ժամանակը
- կարողանում է տալ առաջադրանքներ ըստ որի սովորողը կկատարի վերլուծություններ, հանդես կբերի նախաձեռնողականություններ, կձևավորի սեփական կարծիք, կներկայացնի դիրքորոշում
- կարողանում է ընտրել և կիրառել ձևավորող գնահատման գործիքներ, մշակել ռուբրիկներ, թեստեր, այլընտրանքային և ճկուն մեթոդներ
- կարողանում է ապահովել ներառականությունն ու մասնակցայնությունը
- կարողանում է խրախուսել սովորողին անհատական, խմբային աշխատանքներում մասնակցությանը
- կարողանում է օգտվել օրենսդրությունից իր աշխատանքային ու մասնագիտական գործունեությունը կազմակերպելու համար և այլն

ՈՒսումնական տարիների ընթացքում ուսուցման և դաստիարակության ամբողջ գործընթացի կազմակերպման և իրականացման հիմքում դրված է վերը նշված չափանիշները: Չափանիշների բովանդակության ընկալման և կիրառման նպատակով դպրոցում կազմակերպվում և կունենա շարունակականություն արդի պահանջներին համապատասխան հետևյալ գործողությունները ըստ գործառույթների

- բոլոր ուսուցիչները վերապատրաստվել և ատեստավորվել են նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան
- ներկայացված չափանիշները ներառված են՝

և վարչական աշխատողների և ուսուցիչների աշխատանքային պլաններում
ուսուցիչների թեմատիկ, օրվա դասի պլաններում
արտադասարանական խմբակների խմբավարների թեմատիկ պլաններում
մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդական միավորումների աշխատանքային պլաններում /գումարված նիստերի ժամանակ քննարկվում և ընդունվում են որոշումներ ուսուցիչների մասնագիտական զարգացմանը ներկայացվող չափանիշների ուղղությամբ/

- Դպրոցում կազմակերպվում են վերապատրաստումներ, խորհրդատվություններ ուսուցիչների համար
- փորձի փոխանակման նպատակով կատարվում են ուսուցիչների կողմից դասալսումներ
- կատարվում են դասալսումներ վարչական աշխատողների կողմից
- իրականացվում են մշտադիտարկումներ
- կազմակերպվում են բաց դասեր
- համագործակցում ենք ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, համայնքի դպրոցների հետ

Իրականացվող բոլոր գործողությունների շրջանակներում կատարվում են վերլուծություններ, վեր են հանվում առկա խնդիրները կատարվում են քննարկումներ, արդյունքների գնահատում և պլանավորվում միջոցառումներ թերություններն և բաց թողումները կարգավորելու համար:

Ամբողջական գործընթացի իրականացման միջոցով հնարավոր կլինի որոշել Կարգով սահմանված յուրաքանչյուր զարգացման ոլորտի շրջանակներում յուրաքանչյուր մասնագիտական գործունեության ձևի մասով ուսուցչի դրսևորած կարողունակության չորս մակարդակներից մեկը՝

- տարրական,
- ձեռնահասության
- տիրապետման

- փորձագետի:

Ժամանակի ընթացքում կիրականացվեն՝ ըստ յուրաքանչյուր ուսուցչի կարողունակության համապատասխան արդյունավետ աշխատանքներ մակարդակների զարգացման ուղությամբ, որի հիմքով էլ կունենանք յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական չորս չափանիշներին համապատասխան՝

- ավագ ուսուցիչ
- հմուտ ուսուցիչ
- վերապատրաստող ուսուցիչ
- հետազոտող ուսուցիչ:

ՈՒստի և՛ վարչական, և՛ ուսուցիչների կողմից լիարժեք աշխատանքների իրականացման արդյունքում ըստ մասնագիտական չորս չափանիշների՝ ուսուցչին կարող է շնորհվել համապատասխան աստիճանի տարակարգ, ինչպես նաև ուսուցիչը վստահորեն կարող է մասնակցել կամավոր ատեստավորմանը, որոնց արդյունքում էլ կբարելավի ուսուցչի ֆինասական միջոցները:

Դպրոցում աշխատում է 28 մանկավարժ, բոլորն ունեն բարձրագույն կրթություն, դասավանդող բոլոր ուսուցիչները համապատասխան կազմված ատեստավորման ժամանակացույցի մասնակցել են վերապատրաստումներին և ատեստավորվել: Բոլոր ուսուցիչները նաև մասնակցել են նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան վերապատրաստումներին՝ Մարտունու Տիգրան Աբրահամյանի անվան ավագ դպրոցում:

Ուսուցիչների 75 % կարողանում է օգտվել ՏՀՏ-ներից: Դասացուցակը կազմված է այնպես, որ յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկան հնարավորություն ունի վարելու նաև համակարգչային կաբինետով՝ օգտվելով ՏՀՏ-ներից: Ուսուցիչների 55 %-ը դասերի ժամանակ կիրառում են նորարարություններ, այդ թվում՝ ինտերակտիվ, աշակերտակենտրոն մեթոդներ: Անհրաժեշտության դեպքում ուսուցիչները

իրականացնում են հեռավար կամ համակցված/հեռավար ուսուցում սովորողների առողջական կարիքների և բացակայությունների դեպքում:

Ֆիզիկա, Քիմիա առարկաները դասավանդող ուուցիչները դասերի ժամանակ դասի նյութին համապատասխան կիրառում են դպրոցում առկա համապատասխան սարքավորումները, գործիքները և ուսումնական նյութերը:

Աշխարհագրության, Պատմության, ՆԶՊ-ի, Ինֆորմատիկայի, Շախմատի առարկաները դասավանդող բոլոր ուսուցիչները կրթական ծրագրերին համապատասխան իրականացնում են իրենց դասերը՝ կիրառելով առկա ուսումնական պարագաները, դիդակտիկ նյութերը:

Այս բոլորի արդյունքում ուսուցիչների կողմից կազմակերպվում են բաց դասեր՝ կիրառելով համապատասխան ՏՀՏ-ները և ուսումնական պարագաները, միջոցառումներ, միջդպրոցական առարկայական մրցույթներ:

Ուսուցիչները մասնակցել են նաև ՏՄԱԿ-ի կողմից կազմակերպված համընդհանուր ներառական կրթություն իրականացնելու համար վերապատրաստմանը, չնայած դպրոցում ԿԱՊԿՈՒ սովորողներ չեն սովորում:

Դասավանդող բոլոր ուսուցիչները կարողանում են ԿՏՀ-ում իրականացնել էլեկտրոնային տարբերակով համապատասխան փաստաթղթերի վարում (էլեկտրոնային դասամատյան, թեմատիկ պլաններ և այլն):

Տնօրինության և առարկայական մեթոդական միավորումների կողմից կատարվում են համապատասխան խթանող աշխատանքներ ուսուցիչների ինքնազարգացման, ինչպես նաև ՏՀՏ-ներից օգտվել դժվարացող ուսուցիչների 25 %-ի և նորարարություններ չկիրառող ուսուցիչների 45 %-ի հետ վերը նշված մեխանիզմների միջոցով:

Դպրոցում դասավանդող ուսուցիչների շարքում կա որակավորման տարակարգ ունեցող 1, չկան մենթոր, վերապատրաստող, կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ, ուստի վերը նշված իմ կողմից մշակված մեխանիզմի արդյունավետ կիրառման միջոցով կունենանք լավագույն արդյունքներ:


Ուսուցիչների ընդհանուր թիվը
2023-2024
2022-2023
2021-2022
22,5
23
23,5
24
24,5
25
25,5
26
26,5
27


Ուսուցիչների միջին շաբաթական
ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը
2023-2024
2022-2023
2021-2022
14
14,5
15
15,5
16
16,5
17



ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Դասավանդող բոլոր մասնակվարժներն ունեն համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթությամբ • Դասավանդող բոլոր ուսուցիչներն անցել են հերթական պարտադիր ատեստավորումը՝ ըստ կազմված ժամանակացույցի • Դասավանդման ընթացքում աշակերտակենտրոն մեթոդներ, տեխնոլոգիաներ կիրառելու	• Որակավորման տարակարգ ունեցող 1 ուսուցիչ • Մենթոր ուսուցիչ - չկա • Դասագրքի մշակման և կազման մասնակից ուսուցիչ - չկա • Կամավոր ատեստավորված ուսուցիչ չկա • Վերապատրաստող ուսուցիչ չկա • Մանկավարժների շրջանում կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի և դասագրքերի մշակման և կազմման մոտիվացիայի պակաս

հմտություններին տիրապետող ուսուցիչներ (ուսուցիչների 55 %)

- ԴԿՏՀ-ում համակցված / հեռավար ուսուցման կազմակերպում
- ՏՀՏ-ներ տիրապետող և դրանք դասերի ընթացքում ահեստավարժ կիրառող ուսուցիչներ (ուսուցիչների 75 %)
- ԴԿՏՀ-ում էլեկտրոնային տարբերակով համապատասխան փաստաթղթերի վարում (էլեկտրոնային դասամատյան, թեմատիկ պլաններ և այլն)
- Երիտասարդ մասնագետներ
- Արտադասարանական խմբակների արդյունավետ պարապունքների կազմակերպում
- Առարկայական մարզային և հանրապետական օլիմպիադաների մասնակիցների արդյունավետ մասնակցություն
- ՏՀՏ-ների, մեթոդների և տեխնոլոգիաների նոր ծրագրերի լիարժեք կիրառման հմտությունների պակաս ակտիվություն
- Ուսուցչի՝ որպես առաջնորդի՝ սովորողների կողմից նախագծային աշխատանքներ կատարման խրախուսում
- Սովորողների ուսուցման և գնահատման նոր մեթոդների կիրառման հմտությունների զարգացում

- **Վերլուծություն / Համապատասխանություն**

Դպրոցում դասավանդող բոլոր մանկավարժերը ունեն համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն, ընդունվել են աշխատանքի Կարգի համաձայն, բոլորը ատեստավորված են, մշտադիտարկումների արդյունքը ցույց է տվել, որ բոլոր դասավանդող ուսուցիչները ժամանակին կազմում են թեմատիկ, օրվա դասի պլանները, որոնց համապատասխան վարում են իրենց դասերը՝ կիրառելով ՏՀՏ-ներ և այլ ուսումնական պարագաներ (ըստ դասի նյութի անհրաժեշտության) համապատասխան կաբինետներում և լաբորատորիաներում: Այսինքն կա համապատասխանություն ծրագրի կատարողականության, ուսուցիչների և համապատասխան ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի միջև, սակայն կա որոշակի շեղում մասնագիտական զարգացման չափանիշներին համապատասխան: Այսինքն, դասավանդող ուսուցիչների շարքում կա ընդամենը 1 որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչ, բայց չկան կամավոր ատեստավորում անցած, վերապատրաստող, մենթոր ուսուցիչներ, որն էլ միշտ եղել է իմ ուշադրության կենտրոնում և այն իմ հաջորդ հնարավոր ղեկավարման 5 տարիների ընթացքում կլինի առանցքային նպատակ: Բացի այդ, ՏՀՏ-ները (25 %) և նորարարությունները (45 %) դժվարության կիրառող ուսուցիչների համար կստեղծվեն բացը լրացնող համապատասխան պայմաններ: Այս ամենին կխթանի վերը նշված իմ կողմից մշակված մեխանիզմը, որն իր մեջ ներառում պարբերաբար վերապատրաստումներ, ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ և այլն:

Մշտապես կարևորել եմ նաև երիտասարդ ուսուցիչների ներգրավվածությունը դպրոցում աշխատելու համար: Ըստ նշված տվյալների, դպրոցում դասավանդող ուսուցիչների 38 %-ը մինչև 30 տարեկան է:

Նպատակ	• Մասնագիտական զարգացած մանկավարժական համակազմ • ՏՀՏ-ները և նորարարությունները կիրառող արհեստավարժ մանկավարժական համակազմ • ավագ ուսուցիչ • հմուտ ուսուցիչ • վերապատրաստող ուսուցիչ • հետազոտող ուսուցիչ • Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ (առնվազն 35-40 %) • Որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչներ (առնվազն 45-50 %) • Ժողովրդավարության սկզբունքների կիրառություն ուսումնական գործընթացում • Մանկավարժների ակտիվություն ինքնազարգացման, ինքնակրթության հարցում • Մանկավարժների կողմից սովորողների մասնագիտական կողմնորոշման դիրքորոշման ձևավորման ապահովում • Մանկավարժների կողմից սովորողներին մոտիվացիա՝ առարկայական օլիմպիադաներին պարբերաբար մասնակցության
Խնդիր	• Մանկավարժների շրջանում կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի և դասագրքերի մշակման և կազմման մոտիվացիայի պակաս • ՏՀՏ-ների, մեթոդների և տեխնոլոգիաների նոր ծրագրերի լիարժեք կիրառման հմտությունների պակաս ակտիվություն

	• Ուսուցչի՝ որպես առաջնորդի՝ սովորողների կողմից նախագծային աշխատանքներ կատարման ոչ բավարար խրախուսում • Սովորողների ուսուցման և գնահատման նոր մեթոդների կիրառման հմտությունների ոչ բավարար զարգացում • Կամավոր ատեստավորման և որակավորման տարակարգի նկատմամբ ուսուցիչների անվստահություն • Դպրոցում և տանը ՏՀՏ-ների ոչ բավարար քանակություն • Նոր մեթոդների և տեխնոլոգիաների դժվար ընկալում • Մասնագիտական զարգացման համար ոչ լիարժեք պայմաններ • Ուսուցիչների կողմից ինքնազարգացման և ինքնակրթության մոտիվացիայի պակաս
Իրականացվող գործողություն	• Իրականացնել դպրոցի ՏՀՏ-ների արդիականացում, համալրում • Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ, այլ անհրաժեշտ հաղորդակցական տեխնոլոգիաներ • Դպրոցում կազմակերպել տարբեր ձևաչափերի վերապատրաստումներ նոր մեթոդների և տեխնոլոգիաների, ինչպես նաև ՏՀՏ-ների կիրառման կարողությունների զարգացման համար • Ուսուցիչների համար ստեղծել նպաստավոր պայմաններ կամավոր ատեստավորման, որկավորման տարակարգի ակտիվ մասնակցության համար • Ուսուցիչների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, տրամադրել կաբինետ և ժամանակակից համակարգիչներ, ուսումնամեթոդական նյութեր (նաև՝ էլեկտրոնային

	տարբերակով) ուսուցիչների ինքնազարգացման և ինքնակրության համար • Շարունակել համագործակցությունները մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ մանկավարժների մասնագիտական զարգացման համար • Աջակցել ուսուցիչներին դասերի պլանավորմանը, վարմանը, գնահատման նոր ձևերի կիրառմանը՝ ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան • Խրախուսել ուսուցիչների առաջավոր փորձի տարածմանը • Աջակցել սկսնակ ուսուցիչներին
Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալ • Մեթոդական միավորումների նախագահներ • Մանկավարժներ
Կատարման ժամկետներ	• Ուսուցիչների՝ կամավոր ատեստավորման մասնակցություն – 2024-2027 թթ. • Որակավորման տարակարգին մասնակցող ուսուցիչներ – 2024 – 2026 թթ. • Ուսուցիչների ինքնազարգացման և ինքնակրթությանն ուղղված գործողություններ – 2023 թ.-ից սկսած • Ավագ, վերապատրաստող, մենթոր, հետազոտ, հմուտ ուսուցիչներ – 2024 -2028 թթ. • Մանկավարժների շրջանում ժամանակակից ՏՀՏ-ների և նորարարությունների կարողանկությունների զարգացում – 2023 թ.-ից սկսած
Ռիսկեր	• Մանկավարժական համակազմում մեծահասակների գերակշիռ մաս

	• Անհատական սոցիալական և առողջական վիճակ • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Իրականացնել սահուն սերնդափոխություն՝ միևնույն ժամանակ խրախուսելով վաստակաշատ մանկավարժներին • Խրախուսել ուսուցիչներին՝ տարբեր ձևերով • Շարունակել ապահովել դպրոցում անվտանգ և բարոյահոգեբանական առողջ միջավայր • Ելնելով ֆորսմաժորային իրավավիճակից՝ իրականացնել համապատասխան գործողություններ
Ակնկալվող արդյունքներ	➢ Որակյալ կրթություն ➢ Ավագ, վերապատրաստող, մենթոր, հետազոտ, հմուտ ուսուցիչներ ➢ Մանկավարժների կողմից ՏՀՏ-ների և հաղորդակցական տեխնոլոգիաների լիարժեք իմացություն, արեստավարժ կիրառում ➢ Նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ արդյունավետ դասեր ➢ Դասավանդող ուսուցիչների մասնագիտական բարձր ցուցանիշ ➢ Ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպում ➢ Կամավոր ատեստավորված, որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչների թվի ալեցում ➢ Դպրոցում ներգրավված երիտասարդ ուսուցիչների թվի ավելացում ➢ Դպրոցի շրջանավարտների վերջնարդյունքների բարձր ցուցանիշ

	➢ Առարկայական օլիմպիադաներում սովորողների մասնակցության թվի աճ
Գնահատման չափանիշ	• Ինքնակրթության, ինքնազարգացման, մասնագիտական զարգացման հետ կապված գործողություններ չեն կատարվել՝ անբավարար • Ինքնակրթության, ինքնազարգացման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, որի արդյունքում սպասելի արդյունքը կազմում է 30-40 % - բավարար • Մասնագիտական զարգացման համար կազմակերպվել են վերապատրաստումներ, որի հիմքով դպրոցում աշխատող ուսուցիչները պարբերաբար կամավորում ատեստավորվում են և ունենում են որակավորման տարակագ - լավ • Դպրոցում աշխատող մանկավարժների կեսից ավելին իմ ղեկավարման հաջորդ 5 տարիների ընթացքում կամավոր ատեստավորված են, ունեն որակավորման տարակարգեր, ներկայանում են որպես ավագ, վերապատրաստող, հմուտ, մենթոր, հետազոտող ուսուցիչներ, ինչպես նաև ինքնազարգացման, ինքնակրթության արդյունքում կիրառում են նոր մեթոդների, տեխնոլոգիաների և ՏՀՏ-ներ - գերազանց
Վերահսկողություն	➢ Լիազորված մարմին ➢ Տնօրեն

Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ նորարարությունների ներկայացումը.

Դասավանդման մեթոդը ուսուցչի և սովորողների միջև փոխգործակցության գործընթաց է, որի արդյունքում տեղի է ունենում դասի ընթացքում գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցում և յուրացում: Դասավանդման մեթոդը բարդ, բազմաչափ, բազմորակ կրթություն է, որը ներկայանում է ժամանակաշրջանին համապատասխան:

Հասարակության արագ զարգացումը պահանջում է կրթական գործընթացի ընթացքում տեխնոլոգիաների և մեթոդների փոփոխությունների անհրաժեշտություն: Երբեմն ստանդարտացված կրթությունը հաշվի չի առնում երեխայի անհատական որակները և ստեղծագործական աճի անհրաժեշտությունը: Ուստի, անհրաժեշտ է կիրառել նորարարություններ, որն էլ ներդրվում է համապատասխան տեխնոլոգիաների միջոցով: Հետևաբար, նորարարական տեխնոլոգիան նոր բան ստեղծելու կամ գոյություն ունեցողը բարելավելու տեխնիկան և գործընթացն է՝ ուսուցման ընթացքում առաջընթաց ապահովելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Սակայն նորարարությունների ներդրման գործընթացում բախվում ենք մի շարք խնդիրների, այդ թվում՝

- Ուսուցիչների վերաբերմունքը (կարծրատիպերը)
- Ուսուցիչների՝ նորի ընկալումը
- Դասարանական միջավայրի ոչ մոտիվացված լինելը
- Մեթոդների ոչ ճիշտ կիրառումը
- Ուսուցիչ-սովորող համագործակցության ոչ արդյունավետ լինելը
- Դպրոցի առանձնահատկությունները, հնարավորությունները

Ուսուցիչը պետք է հասկանա, որ նորարարական մեթոդների ներդրումը ոչ միայն օգնում է իր աշակերտներին ավելի արդյունավետ սովորել նյութը, այլև զարգացնում է

նրանց ստեղծագործական ներուժը: Բայց դա նաև օգնում է ուսուցչին իրացնել սեփական ինտելեկտուալ և ստեղծագործական ներուժը:

Ժամանակակից աշխարհում կրթությունը բոլորովին այլ տեսք ունի, քան նախկինում: Մեր օրերում բարձր տեխնոլոգիաները մեծապես որոշում են, թե ինչ և ինչպես ենք մենք սովորում:

Նորարարությունների ընկալման և կիրառման համար անհրաժեշտ է դպրոցում կազմակերպել վերապատրաստումներ ուսուցիչների, ինչու չէ նաև, սովորողների համար: Եվ քանի որ դպրոցը գտնում է գյուղում, նպատակահարմար է հրավիրել մասնագետներ կամ կազմակերպել վեբինարներ՝ առցանց տարբերակով:

Կրթության գործընթացում ամենատարածված նորամուծություններն են՝

- աշակերտակենտրոն ուսուցում
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)
- նախագիծ և հետազոտական գործունեություն

Աշակերտակենտրոն ուսուցումը դա մեթոդ է, նորարարական մոտեցում, որը բացահայտում է յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները, կարիքները, ինչի հիմքով էլ կազմվում են ուսումնական պլաններ:

Աշակերտակենտրոն ուսուցման ժամանակ հաշվի են առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սովորողի հետաքրքրությունները, ուժեղ և թույլ կողմերը, անգամ հուզական ռեակցիաները՝ յուրաքանչյուր սովորողի անհատական կարիքները բավարարող կրթական միջոցներ ստեղծելու համար: Այսպիսով, այս մեթոդի կիրառմամբ սովորողները կարող են առավելագույն օգուտ քաղել իրենց կրթությունից, քանի որ դասերը նախատեսված են հատուկ նրանց համար:

Աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիան իր մեջ ներառում է մեթոդներ, որոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին.

- կենտրոնանալ սովորողի անհատական զարգացմանն աջակցելու վրա
- ուսումնական գործընթացում նպաստել սովորողի ստեղծագործական գործունեության ունակության զարգացումը
- ապահովել երկխոսություն, փոխհարաբերություններ և վարքագծային կանոններ
- սովորողին տրամադրել անհրաժեշտ տարածք և բավարար ազատություն՝ ուսուցման բովանդակության, վարքի, գիտելիքների ձեռքբերման եղանակի, որոշումների կայացման և ստեղծագործական ուղղության անկախ ընտրություն կատարելու համար:

Մեր դպրոցում աշակերտակենտրոն ուսուցման մեթոդը կիրառվում է հիմնականում 5-9-րդ դասարաններում: Աշակերտակենտրոն մեթոդի կիրառման համար կազմակերպվել են բոլոր մեթոդական միավորումներում որոշակի նախնական աշխատանքներ, քննարկվել են մեթոդի կիրառման արդյունավետությունը, դժվարությունները, որից հետո մեթոդը պարբերաբար կիրառվել է: Մեթոդի կիրառման ժամանակ եղել են դասալսումներ, որին հաջորդել է քննարկումներ, վերլուծություններ, վեր են բարձրացվել խնդիրները, բացթողումները, որի արդյունքով էլ աշակերտակենտրոն մեթոդն ունեցել է իր արդյունավետ կիրառությունը:

Մեկ այլ նորամուծությունը ժամանակակից ՏՀՏ-ներն են: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) կրթության մեջ այն ուսուցման ձևն է, որի ընթացքում օգտագործվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները՝ աջակցելու, բարելավելու տեղեկատվության տրամադրումը:

ՏՀՏ-ները նպաստում են սովորողների ուսուցման բարելավման և ուսուցման՝ էլ ավելի լավ մեթոդների կիրառմանը: Կրթական ծրագրերում տեխնոլոգիաների ինտեգրմամբ՝ կրթության մեջ ՏՀՏ-ի կիրառման աճը զգալի և դրական ազդեցություն ունի սովորողների ձեռքբերումների վրա: Այն սովորողները, ովքեր ուսումնառության ընթացքում անընդհատ

տիրապետում են տեխնոլոգիաներին, ունենում են ավելի լավ գիտելիքներ, ներկայացման հմտություններ, նորարարական կարողություններ:

ՏՀՏ-ն ենթադրում է դասավանդման առարկաների ինտեգրում ինֆորմատիկայի հետ, ինչպես նաև գնահատման և, ընդհանրապես, հաղորդակցության համակարգչայինացում: ՏՀՏ-ն կարող է օգտագործվել ուսումնական գործընթացի ցանկացած փուլում՝ մասնավորապես հիմնական ծրագրերի և ուսումնական նյութերի հետ աշխատելու համար՝ օգտագործելով նաև էլեկտրոնային դասագրքեր և ձեռնարկներ:

Ուսուցման ընթացքում տեղեկատվությունը կարող է լինել տարբեր ձևերով, ինչպիսիք են ձայնը, տեսանյութը, տեքստը և պատկերը, իսկ ՏՀՏ-ները կարող են հնարավորություն տալ տեղեկատվության համակցված տարբերակի: Այս դեպքում ՏՀՏ-ները կարող են ուղեկցել ուսուցիչների խոսքը՝ նոր նյութը բացատրելիս դարձնել ավելի պատկերավոր, մատչելի և հագեցած:

ՏՀՏ-ների օգտագործումը դասերի ընթացքում ապահովում է ուսուցիչների աշխատանքի և սովորողների ուսուցման բազմազանությունը, զարգացնում է սովորողների ուշադրությունը և մեծացնում անհատի ստեղծագործական ներուժը, ինչպես նաև՝ խնայում է ժամանակը:

Ուսուցիչները հաճախ մտածում են՝ իսկապե՞ս անհրաժեշտ է, որ ուսուցիչը տիրապետի համակարգչային տեխնոլոգիաներին և զարգացնի տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործելու հմտությունները: Դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նպատակները բավականին բազմազան են, բայց հիմնականը ուսուցչի աշխատանքը համակողմանիորեն հեշտացնելն է և միևնույն ժամանակ աջակցել նրան՝ հասնել դասավանդման որակի նոր մակարդակի, որը պահանջում է ժամանակակից աշխարհը:

ՏՀՏ-ների կիրառման նպատակն է՝

- ամրապնդել դպրոցականների մոտ սովորելու մոտիվացիան
- արթնացնել նրանց հետաքրքրությունը ճանաչողական գործունեության նկատմամբ
- օգնել նրանց էլ ավելի կենտրոնանալ ուսումնական գործընթացի վրա

- հասնել դասավանդման ավելի արդյունավետ և ժամանակակից մեթոդների
- ցուցաբերել յուրաքանչյուր սովորողին անհատական մոտեցում՝ առանց լրացուցիչ ժամանակի և այլ ծախսերի
- դարձնել ուսումնական գործընթացն ավելի բազմազան և հետաքրքիր
- խնայել ժամանակը՝ պատրաստվելով դասերին և հետևել ուսման արդյունքներին
- նպաստել սովորողների շրջանում տեղեկատվական գրագիտության զարգացմանը
- Հասնել աշխատանքի պլանավորման և համակարգման նոր մակարդակի

Բացի այդ, այսօր ուսուցչի հրատապ խնդիրներից է՝

- սովորողների մոտ տեղեկատվական գրագիտությունը զարգացնելը
- նրանց տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետում սովորորեցնելը
- տեղեկատվական հասարակությանը համապատասխան մտածողություն ձեռք բերելը

Կարևորում եմ դպրոցում իրականացնել վերապատրաստումներ նաև մուլտիգրագիտությունը զարգացնելու համար, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ կարողանա ստեղծել մուլտիմեդիա, որն էլ նաև կիրառելի դարձնի դասերի ընթացքում: Մուլտիմեդիան ուսումնական նյութը հստակ, տեսողականորեն ներկայացնելու ամենապարզ և մատչելի միջոցներից մեկն է: Ե՛վ ուսուցիչները, և՛ սովորողները կարող են հանդես գալ շնորհանդեսների հեղինակներ. առաջին դեպքում շնորհանդեսը պատրաստվում է նոր նյութը ավելի արդյունավետ ներկայացնելու միջոց, երկրորդ դեպքում՝ որպես ստեղծագործական ինքնուրույն աշխատանքի ձև:

Դպրոցում ձևավորված է մեդիագրագիտության զարգացման համար սովորողների շրջանում արտադասարանական խմբակ, խմբավարը, ով ինֆորմատիկայի ուսուցիչն է, պարապունքներին համապատասխան կազմել է ծրագիր և իրականացնում է այն ինֆորմատիկայի կաբինետում: Սովորողների արդյունքը բավական դրական է, սովորողների մոտ կա մեծ հետաքրքրություն:

Այս պահին ընթանում են աշխատանքներ բարելավվելու և արդիականացնելու նյութատեխնիկական բազան՝ համալրելու այն էլեկտրոնային գրատախտակներով, ժամանակակից համակարգիչներով, անհրաժեշտ էլեկտրոնային այլ ռեսուրսներով նոր մեթոդները արդյունավետ կիրառելու նպատակով:

Դպրոցում ՏՀՏ-ները կիրառվում են ոչ միայն ուսուցիչների կողմից դասերի վարման ժամանակ, այլ նաև ինչպես ուսուցիչների, այնպես էլ վարչական և այլ աշխատակիցների կողմից դպրոցի գործունեությանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակով վարման համար:

Ընթերցասրահում ՏՀՏ-ների միջոցով սովորողները իրականացնում են լրացուցիչ պարապունքներ, ինչպես նաև արտադասարանական տարբեր խմբակների պարապունքներ:

Ուսուցիչների ինքնազարգացման և ինքնակրթության համար կստեղծվի կաբինետ, կհամալրվի համակարգիչներով և համապատասխան էլեկտրոնային ուսումնական նյութերով:

Սովորողների ստեղծագործական զարգացման, ուսման որակի բարձրացման, մասնագիտական կողմնորոշման, իրենց անհատականությունը դրսևորելու, ինչպես նաև սոցիալականացման համար ուսուցման մեթոդներից է նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպումն ու կիրառումը: Այն իրականացվում է ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային տարբերակով, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին իր աշխատանքով ներկայանալու որպես անհատ՝ լինելով դասարանական միջավայրում որպես անհատականություն, իսկ խմբային տարբերակը հնարավորություն է տալիս սովորողների համագործակցությանը՝ նրանց միջև ձևավորելու ժողովրդավարական կարողունակությունները, համատեղ աշխատանքի հմտությունները:

Մեթոդը կիրառվել է դպրոցում փորձնական՝ ուսուցիչների կամավորության սկզբունքում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիառում, փորձարկում դասերի ընթացքում • ՏՀՏ-ների և հաղորդակցական այլ տեխնոլոգիաների կիրառում դասերի ընթացքում • Դպրոցի գործունեությանը վերաբերող էլեկտրոնային փաստաթղթերի վարում • Հեռավար կամ համակցված/ հեռավար ուսուցման կազմակերպում • Արտադասարանական խմբակ «Մեդիագրագիտություն» • ՏՀՏ-ների կիրառություն ընթերցասրահում սովորողների լրացուցիչ և արտադասարանական խմբակների պարապունքների համար • ՏՀՏ-ներով համալրված կաբինետ ուսուցիչների ինքնազարգացման և ինքնակրթության համար	• Ինքնազարգացման, ինքնակրթության կաբինետի բացակայություն • Ժամանակակից ՏՀՏ-ների և հաղորդակացական այլ տեխնոլոգիաների պակաս • Էլեկտրոնային գրատախտակների բացակայություն • Որոշ ուսուցիչների շրջանում մոտիվացիայի պակաս՝ նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման հարցում • ՏՀՏ-ների կիրառության դժվարություններ քիչ թվով ուսուցիչների շրջանում

➢ **Վերլուծություն**

Վերը նշված փաստերի հիմքով վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչների գերակշռող մասը կարողանում է արհեստավարժորեն կիրառել ՏՀՏ-ները,նրանցով

իրականացնել թեմատիկ խլանով նախատեսված սովորողների ուսուցումը, կազմակերպել նաև բաց դասեր, միջոցառումներ: Որոշ ուսուցիչներ կարծես թե դժվարությամբ են ընդունում, ընկալում նորամուծությունները: Այդ ուսուցիչների հետ նախատեսված է աշխատանքներ կազմակերպել մեթոդական միավորումների կողմից, ինչպես նաև այն ուսուցիչների, որոնց մոտ այդ մեթոդների կիրառությունը ավելի դյուրին է:

ՏՀՏ-ների՝ ուսումնական գործընթացում կիրառելու համար դասացուցակը կազմվում է այնպիսի ձևով, որը հնարավորություն է տալիս բոլոր առարկաների ուսուցիչներին իրենց դասերը անհրաժեշտության դեպքում կազմակերպել ինֆորմատիկայի կաբինետում:

Դպրոցում կիրառվող աշակերտակենտրոն մեթոդն արդեն ունի իր դրական արդյունքները, որը գնահատվել է և՛ սովորողների, և՛ նրանց ծնողների կողմից:

Փորձնական ձևով կամավորության սկզբունքով կիրառվել են նաև նախագծային և հետազոտական ուսուցման մեթոդը, որն այս ուսումնական տարում կկիրառեն ավելի մեծ թվով ուսուցիչներ:

Նպատակ	• Մուլտիմեդիայի կիրառում • Աշակերտակենտրոն ուսուցման մեթոդի կիրառում • Նախագծային և հետազոտական ուսուցման մեթոդի կիրառում • Դպրոցի գործունեության համար փաստաթղթերի թվայնացում, արխիվացում • Ժամանակակից ՏՀՏ-ների ձեռքբերում • Էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում • Հաղորդակցության արդյունավետության մեծացում • Դասերի՝ ՏՀՏ-ների կիրառմամբ արդյունավետության բարձրացում

	• ՏՀՏ-ները՝ որպես ուսուցիչների ինքնազարգացման գործիք • Մեդիագրագիտության ուսուցման շրջանակների լայնացում • ՏՀՏ-ների կիրառում արտադասարանական խմբակներում • Դպրոցում նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառություն • ՏՀՏ-ներով համալրված ընթերցասրահ
Խնդիր	• Դպրոցում ՏՀՏ-ների ոչ բավարար քանակություն • Պետական բյուջեից ֆինանսական միջոցների պակաս • Դպրոցում ժամանակակից ՏՀՏ-ների բացակայություն • Որոշ ուսուցիչների մոտ նոր մեթոդների և տեխնոլոգիաների դժվարընկալում • Որոշ ուսուցիչների մոտ ՏՀՏ-ների կիրառության դժվարացում
Իրականացվող գործողություն	• Բարեգործների կամ այլ ֆինանսական ներդրումների շնորհիվ ձեռք բերել ժամանակակից ՏՀՏ-ներ և էլեկտրոնային գրատախտակներ • Ստեղծել կաբինետ ուսուցիչների ինքնազարգացման, ինքնակրթության համար՝ համալրելով համակարգիչներ • Ընթերցասրահը համալրել համակարգիչներով՝ ապահովելով նաև արտադասարանական խմբակների պարապունքները և մեդիագրագիտության դասընթացները • Կազմակերպել գործողություններ՝ ուղղված տեխնոլոգիաների արդիականացմանը • Ապահովել ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման և կիրառման

	համար • Նպաստել ՏՀՏ-ների և ուսուցման նոր մեթոդների կիրառության միջոցով սովորողների մասնագիտական կողմնորոշմանը
Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Համակարգող • Տնօրենի տեղակալ • ԷԿԴԱՄ • Մանկավարժներ • Արտադասարանական խմբակների խմբավարներ
Կատարման ժամկետներ	• ՏՀՏ-ների և էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերման ժամանակացույցը ներկայացված է նյութատեխնիկական բազայի վերլուծության բաժնում • Աշակերտակենտրոն մեթոդ – կիրառվում է և կունենա շարունակական բնույթ • Նախագծային և հետազոտական ուսումնական մեթոդի կիրառվումը՝ 2023-2024 ուստարուց սկսած • Մեդիագրագիտություն – կիրառվում է և կունենա շարունակական բնույթ • ՏՀՏ-ների, նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում և շարունակական կիրառություն ուսումնական տարիների ընթացքում
Ռիսկեր	• Ֆորսմաժորային իրավիճակ • ՏՀՏ-ների և նոր մեթոդների նկատմամբ ուսուցիչների թերհավատություն • Անհրաժեշտ տեխնիկայի բացակայություն Հայաստանում

Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Մոտիվացնել և խրախուսել ուսուցիչներին՝ ՏՀՏ-ների և նոր մեթոդների, տեխնոլոգիաների կիրառումն ապահովելու համար • Ելնելով ֆոչսմաժորային իրավիճակից՝ կազմակերպել համապատասխան գործողություններ
Ակնկալվող արդյունքներ	Ժամանակակից դպրոց, որտեղ • Իրականացվում է ՏՀՏ-ներով արդյունավետ դասեր • Իրականացվում է ուսուցման նոր մեթոդներ և տեխնոլոգիաներ • ՏՀՏ-ների և նոր տեխնոլոգիաների միջոցով սովորողները ձևավորում են մասնագիտական կողմնորոշման դիրքորոշում • Զարգանում է մեդիագրագիտությունը • Թվայնացված է դպրոցի գործունեությանը վերաբերող փաստաթղթերը • Կարևոր են համագործակցային կապերը հանրապետության այլ դպրոցների, ինչու ոչ, նաև՝ այլ երկրների դպրոցների հետ՝ ՏՀՏ ոլորտներին առնչվող կրթական ծրագրերի շրջանակներում
Գնահատման չափանիշ	• Դասերի ընթացքում չեն կիրառվում ՏՀՏ-ներ, նոր տեխնոլոգիաներ - անբավարար • Ոչ բոլոր ուսուցիչների կողմից է կիրառվում ՏՀՏ-ներ և նոր տեխնոլոգիաներ – բավարար • Ուսուցիչների գերակշռող մասը կիրառում է ՏՀՏ-ներ, ուսուցման նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ, որոնց արդյունքը դրական է - լավ • Ուսուցիչների գերակշռող մասը կիրառում է ՏՀՏ-ներ, ուսուցման նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ և նպաստում

	են այդ մեթոդների յուրացմանը և տարածմանը գործընկերների շրջանում, ինչպես նաև դպրոցը պարբերաբար ձեռք է բերում նոր և ժամանակակից տեխնոլոգիաներ, ՏՀՏ-ներ, էլեկտրոնային այլ գործիքներ - գերազանց
Վերահսկողություն	• Տնօրեն • Համակարգող

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Աշխարհում անընդհատ փոփոխությունները դարձել են նոր իրականություն և փոփոխության ֆոնի վրա արձանագրվում է ռազմավարությունների միաժամանակյա համակեցություն կրթական ոլորտում՝ արտացոլելով բոլորովին այլ պատկերացումներ կրթության կազմակերպման նպատակների, բովանդակության, ձևերի և, հետևաբար, գնահատման համակարգի և կառավարման աջակցության մասին:

Այժմ կրթության բնագավառում իրականության պահանջը՝ հատկապես դպրոցի սովորողների համար, կրթական կատարումն հասկացվում է որպես ուսումնական գործընթացում սովորողի անձնական ներգրավվածության, նրա ինքնորոշման և ինքնակազմակերպման հետևանք: Այսինքն դպրոցում սովորողների ընդհանուր ուսուցումը, ուսուցման որակի բարձրացումը պետք է համապատասխանի համայնքի, հասարակության և միջազգային պահանջներին, քանի որ բոլոր համակարգերի թվայնացման, գլոբալացման գործընթացները հանգեցնում են ըստ իս մեկ սկզբունքի՝ բազմաբովանդակ կարողունակություններով ձևավորված շրջանավարտ: Սկզբունքի իրականացման համար խիստ անհրաժեշտ են ուսուցման և դաստիարակության գործընթացում ներդնել և կիրառել նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ ՏՀՏ-ներ: Այս ամենի համար հիմք հանդիսացավ նաև համաճարակը, որի ժամանակ զանգվածային հեռավար

ուսուցման անցումը ցույց տվեց, թե ինչպես անհատական կրթական պահանջները կարող են ապահովել կրթական արդյունքների որակը ժամանակակից ձևով:

Կրթության որակը՝ կրթության զարգացման հիմնական նպատակներից մեկն է: Կրթության ցանկացած բարեփոխում նպատակ ունի բարելավել կրթության որակը: Դա ժամանակակից մանկավարժության և ընդհանուր առմամբ հասարակության հիմնական խնդիրներից է: Այն դիտարկվում է բազմաթիվ հասկացությունների համատեքստում և դառնում է ուսուցիչների քննարկման առարկան՝ կրթությունը դիտարկելով որպես զարգացող գործընթաց: Կրթությունը պետք է հասկանալ որպես սովորողների գիտելիքների, գործնական հմտությունների տիրապետում, մտավոր, ճանաչողական և ստեղծագործական կարողությունների զարգացում, ինչպես նաև աշխարհայացքի և՛ բարոյական, և՛ գեղագիտական մշակույթի զարգացում, որոնցից նրանք ձեռք են բերում կարողունակություններ, դիրքորոշում, արժեհամակարգ:

Ճիշտ է՝ արդի ժամանակներում կրթության համար սահմանված են ուսուցման նոր չափորոշիչներ, մանկավարժների մասնագիտական զարգացման նոր չափանիշներ, այնուամենայնիվ մեր դպրոցը ունեցել է և այժմ էլ ունի ռազմավարություն, ըստ որի՝ դպրոցը շարժվում է զարգացմանը նպաստող ճանապարհով՝ ներդնելով նորը:

Ընդհանուր առմամբ դպրոցում ուսուցման կազմակերպման և ուսման որակի բարձրացման անհրաժեշտ պայմանը դա ուսումնական միջավայրն է, այն ունի հստակ սկզբունք և կառուցվածք, որն էլ իր մեջ ներառում է դպրոցի շենքային պայմանները, ենթակառուցվածքները, նյութատոխնիկական բազան, համակարգված միջավայրերը, իրականացվող կրթական ծրագրերը, այդ թվում՝

- Առարկայական կաբինետներն և լաբորատորիաները
- Ուսուցման նոր մեթոդները և տեխնոլոգիաները
- Ուսուցանվող դասագրքերը, այժմ նաև էլեկտրոնային տարբերակով
- ՏՀՏ-ները և այլ հաղորդակցության տեխնիկաները
- Նյութատեխնիկական, ուսումնամեթոդական սարքավորումները և դիդակտիկ նյութերը

- Ձևավորված արտադասարանական խմբակները
- Վերանորոգված և կահավորված դասասենյակները
- Միջոցառումներ կազմակերպելու՝ հանդիսությունների դահլիճը / որը դեռ չունենք/
- Սպորտային դահլիճը
- Գրադարան-ընթերցասրահը
- Ուսուցման գործընթացին նպաստող համագործակցությունները
- Անվտանգ, առողջ միջավայրը
- Ժողովրդավարության սկզբունքներով ձևավորված միջավայրը
- Հանդուրժող և բուլլինգի դրսևորումներից զերծ միջավայրը
- Արժևորված և գնահատված միջավայրը
- Մասնագիտորեն զարգացած մանկավայրը

Իհարկե, բոլոր գործընթացների և գործունեության բարելավման գործում ամենակարևոր դերը պատկանում է մանկավարժական համակազմին, քանի որ ուսումնական գործընթացի առանցքային դեմքը ուսուցիչն է: Որակյալ մասնագետների որակն ուղղակիորեն կախված է ուսուցիչների կարողունակություններից և մանկավարժական հմտություններից: Նրանց խելացիությունը, արեստավարժությունը, գիտական ներուժը, մանկավարժական հմտությունները (հետաքրքրվելու, կապ հաստատելու, սովորողների հետ հարաբերությունների օպտիմալ մակարդակ գտնելու կարողությունը) մեծապես որոշում են սովորողների սովորելու մոտիվացիան:

Դպրոցում ուսման որակի բարձրացման նպատակով ձևավորված համակարգի միջոցով որակի ապահովումը տարածվում է այն ամենի վրա, ինչը որակը տեսանելի և ընկալելի է դարձնում. որակի կառավարումը հաճախ կապված է այն վերահսկելու միջոցառումների և հարակից վերահսկման գործողությունների հետ: Որակի ապահովումը վերաբերում է որակը իրականություն դարձնելու համար ներգրավված բոլոր գործողություններին և իրականացվում է մշտադիտարկման գործընթացի պահանջներին համապատասխան:

Ուսման որակի ապահովման համար նախատեսում եմ՝

- որակի պլանավորում
- որակի ապահովում
- որակի բարելավում
- որակի հսկողություն

Որակի հսկողության արդյունքում չափելի պետք է լինեն՝

- սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը
- ուսանողների մտածողության զարգացման մակարդակը
- սովորելու մոտիվացիան
- ուսումնական գործընթացի հոգեբանական հարմարավետությունը
- կրթական ծրագրերի իրականացման որակը

Պետք է հաշվի առնել նաև, որ սոցիալական փոփոխությունների հետ կապված շարունակաբար փոփոխվում են «կրթության որակ» հասկացությունը, ուստի որակը գնահատելու համար անհրաժեշտություն է հիմնականում արդյունքների որակը, որի տարրերն են

- գիտելիքներ, հմտություններ, կարողություններ
- անհատական զարգացման ցուցանիշներ
- կրթության բացասական հետևանքներ

Ուսման որակի ապահովման ռազմավարության հիմքերն են

- ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան վերապատրաստված ուսուցիչներ
- ՀՊՉ –ի պահանջներին համապատասխան ընդհանուր ուսուցման կազմակերպում
- Սովորողների կարիքների ճիշտ գնահատում
- ՈՒուցման տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների ներդնում և կիրառում
- ՈՒսուցման աշխատանքների կազմակերպում և դասաժամի կառավարում
- Դասի օրվա պլանի կազմում՝ հարմարեցված սովորողների կարիքներին

- Թեմայի հասանելիության հարմարեցում սովորողին
- Դասի ընթացքում սովորողին խթանող աշխատանքների ներկայացում
- Դասին ակտիվ մասնակցությանը օժանդակող արդյունավետ ռեսուրսների կիրառում
- Սովորողների կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում
- Բոլոր սովորողների ուսումնառության մասնակցության ապահովում
- ՈՒսման բարձր որակի խթանում,
- Մասնակցային գործընթացների իրականացում ուսուցիչ-աշակերտ-ծնող փոխհարաբերություններում,
- Ուսմանական գործընթացի և որակի մշտադիտարկում, վիճակագրական տվյալների հավաքագրում,
- Արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպում,
- Սովորողների կարիքների և նախասիրություններին համապատասխան արտադասարանական խմբակների գործունեության կազմակերպում
- Առարկայական օլիմպիադաներին մասնակցության մոտիվացիա
- Դպրոցական մրցույթներին, վիկտորինաներին սովորողների մասնակցություն
- ՏՀՏ-ների և լաբորատոր նյութերի, սարքավորումների՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների դասաժամերին կիրառում
- Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով մասնագիտական կողմնորոշման կենտրենի ստեղծում, համագործակցության ընդլայնում
- Սովորողների համար շերտավոր ուսուցման կիրառում,
- Աշակերտակենտրոն ուսուցման կազմակերպում
- Նախագծային և հետազոտական ուսուցման մեթոդի կիրառում
- Ինտերակտիվ ուսուցման կազմակերպում
- Սովորողների համար սովորելու մոտիվացիա
- Ուսումնական գործընթացի հոգեբանական հարմարավետություն
- Դասի արդյունավետության բարձրացում, սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացում

- Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար երկարօրյա խմբերի ձևավորում և լրացուցիչ պարապմունքների կազմակերպում՝ նոր Կարգի համաձայն:

Վերը նշված ռազմավարությունը ապահովվում է նաև, երբ դպրոցի ուսուցիչները ուսուցիչները հանդես են գալիս որպես օժանդակող, այսինքն ժանդակողն այն ուսուցիչն է, ով իր ներկայությամբ և ազդեցությամբ նպաստում է սովորողի նախաձեռնողականության և անկախության դրսևորմանը, նպաստում նրանց մտավոր զարգացման գործընթացին և ապահովում միջանձնային դրական փոխազդեցությունը:

Դպրոցի ընդհանուր գործունեության գերնպատակը ուսումնական ոլորտում ոչ միայն ուսուցման և ուսման որակի ապահովումն է, այլ նաև յուրաքանչյուր սովորողի ուսումնառության վերջնարդյունքներն են՝ ձևավորված կարողունակություններով:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակների՝ արդյունավետ և պատշաճ արձագանքելու ձևերեն են: Ուսումնառության ընթացքում սովորողի մոտ պետք է ձևավորվի սկբունքներ՝ ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա, որոնց հիմքով էլ ձևավորվում են հետևյալ կարողունակությունները.

- Լեզվական գրագիտություն
- Սովորել սովորելու
- Ինքնաճանաչողական և սոցիալական
- Ժողովրդավարական և քաղաքացիական
- Թվային և մեդիա
- Մշակութային
- Մաթեմատիկական և գիտատեխնիկական
- Տնտեսական

Այս ամենը ներառված են ուսուցիչների աշխատանքային պլաններում և յուրաքանչյուրի դասի վարման սկզբունքն է սովորողների մոտ ձևավորելու վերը նշված կարողունակությունները և՛ դասերի ժամանակ, և՛ արտադասարանական պարապունքների ժամանակ, և՛ միջոցառումների կազմակերպման ժամանակ:

Ընդհանուր առմամբ՝ սովորողների ուսուցման և ուսուցման որակի բարձրացման, ինչպես նա ինտելեկտուալ զարգացման, արժեհամակարգի ձևավորման կարևոր նախապայմաններ են նաև արտադասարանական խմբակների ձևավորումները և սովորողների ընդգրկվածությունը խմբակներում՝ ըստ իրենց նախասիրությունների և հետաքրքրությունների:

Իմ ղեկավարման օրոք դպրոցում ձևավորվել է 8 արտադասարանական խմբակ

- «Հաղթող միտք» - շախմատի խմբակ
- «Մայրենի» - հայոց լեզու
- «Էկոլոգիական կրթություն»
- «Ռսկեձեռիկ» -տեխնոլոգիա
- «Ընթերցանություն»
- «Русский язык»
- «Մեդիագրագիտություն»
- «Ազգային երգ ու պար»

Յուրաքանչյուր խմբակի խմբավար կազմում է խմբակի պարապունքների ծրագիրը և ըստ դրա՝ իրականացնում իր աշխատանքները: Խմբավարները ներկայացնում են հաշվետվություններ և կազմակերպում ըստ բովանդակության միջոցառումներ:

Արդյունավետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքում դպրոցում սովորողների համար կազմակերպվում է ներդպրոցական առարկայական մրցույթներ, որը հնավորություն է տալիս սովորողներին մասնակցելու առարկայական օլիմպիդաներին: Ավելին, դպրոցի սովորողների ոմանք՝ ուսուցիչների աշխատանքի շնորհիվ, գրանցել են դրական արդյունքներ, ունեցել ենք և՛ համայնքային, և՛ մարզային, և՛ հանրապետական

օլիմպիադաների մրցանակակիրներ, որոնք էլ արժանացել են պատվոգրերի և դրամական խրախուսանքի:

Ուսման որակի բարելավման և ծնողական համայնքի կարիքները ապահովելու համար կարևոր են նաև դպրոցում ձևավորել երկարօրյա խմբեր և կազմակերպել ուսուցում: Մինչ այս դպրոցում չի գործել երկարօրյա խմբեր, սակայն Կարգի համաձայն և ծնողների համաձայնությամբ կձևավորվեն նաև երկարօրյա խմբեր:

Դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ չկան, չնայած բոլոր ուսուցիչները մասնակցել են ՏՄԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին և արդյունքում ձեռք բերված գիտելիքները կարող են կիրառել անհրաժեշտության դեպքում:





Սովորողների ընդհանուր թվի նվազումը ուստարվա ավարտին պայմանավորված է ներքին և արտաքին միգրացիայով:


ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
2021-2022, 2022-2023,2023-2024 ՈՒՍՏԱՐԻ
0
5
10
15
20
25
2021-2022
2022-2023
2023-2024
I դաս.
II դաս.
III դաս.
IV դաս.
V դաս.
VI դաս.
VII դաս.
VIII դաս.
IX դաս.



ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Բարձրագույն կրթություն ունեցող համապատասխան որակավորմամբ մանկավարժական համակազմ • Նոր մեթոդներ կիրառող ուսուցիչներ (45 %) • Աշակերտակենտրոն ուսուցում իրականացնող ուսուցիչներ • Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան վերապատրաստված ուսուցիչներ • Ինֆորմատիկայի կաբինետ, որը ծառայում է նաև դպրոցում այլ	• Առարկայական կաբինետների և լաբորատորիաների համար ժամանակակից ՏՀՏ-ների, սարքավորումների, դիդակտիկ նյութերի պակաս • Կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն • Որակավորման տարակարգ ունեցող 1 ուսուցիչ • Ուսուցիչների ինքնազարգացման, ինքնակրթության համար առանձնացված կաբինետի բացակայություն

առարկաների արդյունավետ դասեր կազմակերպելու համար
- ՏՀՏ-ների և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ կիրառող ուսուցիչներ (75 %)
- Քիմիայի, Ֆիզիկայի կաբինետ, լաբորատորիաներում կազմակերպվում են դասեր
- Ուսման որակի բարելավման համար մշտադիտարկումներ
- Փոխադարձ դասալսումներ
- Սովորողների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին
- Նպատակային ձևավորված արտադասարանական խմբակներ
- Մեդիագրագիտության զարգացում
- Ներդպրոցական առարկայական մրցույթների կազմակերպում
- Նոր ՀՊՉ-ի պահանջներով, կարողունակություններով ձևավորված շրջանավարտներ
- Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի ձևավորման անհրաժեշտություն
- Ավագ, հետազոտող, հմուտ, վերապատրաստող մենթոր ուսուցիչների բացակայություն
- Երկարօրյա խմբերի բացակայություն

Նպատակ	• Որակյալ կրթության կազմակերպում ժամանակակից պահանջներին համապատասխան • Ե՛վ սովորողների, և՛ մանկավարժների մոտ ինքնակրթության, ինքնազարգացման կարողությունների ձևավորում • Սովորողների կարիքների ճիշտ բացահայտում և գնահատում • ՀՊՉ –ի պահանջներին համապատասխան ընդհանուր ուսուցման կազմակերպում • ՈՒուցման տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների ներդնում և կիրառում • ՈՒսուցման աշխատանքների կազմակերպում և դասաժամի կառավարում • Դասի օրվա պլանի կազմում՝ հարմարեցված սովորողների կարիքներին • Թեմայի հասանելիության հարմարեցում սովորողին • Դասի ընթացքում սովորողին խթանող աշխատանքների ներկայացում • Դասին ակտիվ մասնակցությանը օժանդակող արդյունավետ ռեսուրսների կիրառում • Սովորողների կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում • Բոլոր սովորողների ուսումնառության մասնակցության ապահովում • Մասնակցային գործընթացների իրականացում • Ուսմանական գործընթացի և որակի մշտադիտարկում, վիճակագրական տվյալների հավաքագրում,

	• Սովորողների կարիքների և նախասիրություններին համապատասխան արտադասարանական խմբակների գործունեության շարունակականության ապահովում • Առարկայական օլիմպիադաներին մասնակցության մ արունակականության ապահովում • ԲՏՃՄ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների ավելացում՝ ՏՀՏ-ների միջոցով • Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով մասնագիտական կողմնորոշման կենտրենի ստեղծում, համագործակցության ընդլայնում • Աշակերտակենտրոն ուսուցման կազմակերպում • Նախագծային և հետազոտական ուսուցման մեթոդի կիրառում • Ինտերակտիվ ուսուցման կազմակերպում • Դասի արդյունավետության բարձրացում, սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացում • Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար երկարօրյա խմբերի ձևավորում և լրացուցիչ պարապմունքների կազմակերպում՝ նոր Կարգի համաձայն
Խնդիր	• Դպրոցում ոչ բավարար ՏՀՏ-ներ և տեխնոլոգիաներ • Որոշ սովորողների անհատական ՏՀՏ-ների պակաս • ՀՊՉ-ի նոր պահանջների ոչ լիարժեք պատկերացում • Սովորողների գնահատման նոր ձևերի և տեսակների ոչ լիարժեք պատկերացում • Սովորողների և մանկավարժների նախագծային աշխատանքների կազմակերպման բարդություն

	• Նյութատեխնիկական բազայի համալրման և արդիականացման խնդիր
Իրականացվող գործողություն	• Ձեռնարկել միջոցներ ժամանակակից ՏՀՏ-ների և էլեկտրոնային գրատախտակների ձեռբերման համար • Կազմակերպել դպրոցում լրացուցի վերապատրաստումներ, դասընթացներ՝ ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան • Կազմակերպել դպրոցում լրացուցի վերապատրաստումներ, դասընթացներ՝ սովորողների գնահատման նոր ձևերի և տեսակների ընկալման և ներդրման համար • Կազմակերպվել դասընթացներ, խորհրդատվություններ սովորողների և մանկավարժների կողմից նախագծային և հետազոտական աշխատանքների մշակման և ներկայացման համար • Աջակցել ուսուցիչներին սովորողների նախագծային աշխատանքներում դրսևորվելու համար որպես առաջնորդ • Շարունակել ակտիվորեն համագործակցել գործընկերների հետ, ինչպես նաև ձեռք բերել նոր համագործակցություններ • Շարունակել դպրոցում արտադասարանական խմբակների արդյունավետ պարապունքները • Շարունակել դպրոցում լրացուցիչ պարապունքները սովորողների՝ առարկայական օլիմպիադաներին մասնակցության համար • Ուսման որակի բարելավման գործընթացի անմիջական մասնակիցը դարձնել դպրոցի ԾԽ-ին, ԱԽ-ին

Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալ • Մեթոդական միավորումների նախագահներ • Մանկավարժներ • ԾԽ, ԱԽ, ԿԽ
Կատարման ժամկետներ	Վերը նշված նպատակները, խնդիրները, իրականացվող գործողությունները դպրոցում կազմակերպվում և իրականացվում են, որը կունենա նաև շարունակական բնույթ՝ ՀՊՉ-ի և ժամանակակից պահանջների շրջանակներում
Ռիսկեր	• Անհանդուրժողականության ձևավորում • Սովորողների և մանկավարժների անհատական հոգեբանական և սոցիալական վիճակ • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Ապահովել վերահսկողություն դպրոցում ձևավորված անվտանգ, ապահով, հանդուրժող միջավայրը • Կազմակերպել անհատական զրույցներ և՛ սովորողների, և՛ մանկավարժների հետ՝ անհրաժեշտության դեպքում • Կազմակերպել համապատասխան գործողություններ՝ ստեղծված ֆորսմաժորային իրավիճակները հաղթահարելու համար
Ակնկալվող արդյունքներ	• Հանդուրժող, ապահով, անվտանգ միջավայրի պահպանում • Ուսման բաձր որակի շարունակականության ապահովում • Առաջավոր դպրոց

	• Արդյունավետ դասեր՝ նոր մեթոդների և տեխնոլոգիաների, ՏՀՏ-ների կիրառման միջոցով • Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվող սովորողների բարձր ցուցանիշ • Կամավոր ատեստավորված, որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչներ • Ավագ, հմուտ, վերապատրաստող, հետազոտող, մենթոր ուսուցիչներ • ՀՊՉ-ի պահանջերը արհեստավարժ կիրառող ուսուցիչներ • Նախագծող և հետազոտական աշխատանքներ իրականացնող և՛ ուսուցիչներ, և՛ մանկավարժներ • Նոր արդյունավետ համագործակցություններ, որոնց միջոցով ապահովվում է սովորողի կարիքներին համապատասխան պահանջները • Արտադասարանական խմբակների միջոցով սովորողների արդյունավետ արդյունքների ցուցանիշ • Լրացուցիչ պարապունքների միջոցով առարկայական օլիմպիադաների մրցանակակիրներ • Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ուսման բարելավում երկարօրյա խմբի միջոցով • ԾԽ-ն ԱԽ-ն՝ ուսման որակի բարելավման գործընթացի անմիջական մասնակից
Գնահատման չափանիշ	• Ուսումնառության ընթացքում ստեղծված արդյունավետ կրթական միջավայրի չպահպանելը – անբավարար • Ուսումնառության ընթացքում ստեղծված արդյունավետ

	կրթական միջավայրի պահպանելը առանց աճ գրանցելու – բավարար • Ուսումնառության ընթացքում ստեղծված արդյունավետ կրթական միջավայրի պահպանելուն զուգահեռ նորարարությունների ինտեգրում հնարավոր բոլոր ոլորտներում – լավ • Իրականացվել են նշված բոլոր նպատակները, լուծվել են նպատակներից բխող խնդիրները, մեղմացվել են ռիսկերը և գրանցվել է բարձր արդյունք՝ գերազանց
Վերահսկողություն	Տնօրեն

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Բազմակարծությունը ժամանակակից աշխարհի ամենակարևոր խնդիրներից է: Բազմակարծությունն իրենից ենթադրում է հենց բազմազանություն, և հենց բազմազանության ընդունումը սկսում է երկխոսությունից: Երկխոսության միջոցով կարելի է հասնել փոխըմբռնման և տարբեր բնույթի հարաբերությունների հաստատման:

Դպրոցի ընդհանուր գործունեության յուրաքանչյուր մասնակից ճանաչելով իքն իրեն և ընդունելով, որ նա կարող ենք սովորել նաև ուրիշներից, հիմք է ստեղծում անկախ և վերլուծական մտքերի զարգացման: Ուրիշների տեսանկյուններից սովորելու համար ինքն իրեն բացելը հենց հիմքն է իր շրջապատի մասին ավելի համապարփակ հայացքներ ձևավորելու և կարևոր՝ բազմակարծությունն ընդունելու համար:

Աշխատելով խրախուսել բազմակարծության մոտեցումը և զարգացնելով ներառական երկխոսության հմտությունները, դպրոցի ղեկավարը պետք է օգնի բոլորին հաջողության հասնել կրթական միջավայրում:

Բազմակարծությունը խթանում է միմյանց համոզմունքների և կարծիքների նկատմամբ

ընդունման և հարգանքի վերաբերմունքը: Դպրոցում բազմակարծություն կիրառելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ձևավորել արժեքային համակարգ՝ ներգրավվելով բոլորին այդ համակարգում՝ ապահովելով բոլորի համար իրենց դիրքորոշումները ներկայացնելու, խնդիրների մասին ազատ քննարկումներ անելու պայմանը: Բազմազանությունը օգնում է խնդիրները տեսնել տարբեր հարթություններից և դրա շնորհիվ կատարելով վերլուծություններ, գտնել ներկայացվող լուծումների ամենաարդյունավետ տարբերակը:

Դպրոցի արդյունավետ գործունեության հիմքը բազմակարծության սկզբունքների մեջ է: Նախքան մասնակիցների՝ սեփական կարծիքով առաջնորդվող և քննադատական մտածողությամբ զբաղվելը, նրանք պետք է հարգեն, որ ընդհանուր գործունեության մասնակիցներն ունեն տարբեր տեսակետներից: Առանց այս քննադատական մոտեցման հնարավոր չի լինի իրականում ընդլայնել պատկերացումները դպրոցի ընդհանուր գործունեության վերաբերյալ: Ուրիշների տարբեր համոզմունքները ճանաչելու և այդ տարբերությունների շուրջ առողջ երկխոսություն զարգացնելու կարողությունը առանցքային է վերլուծական մտածողության խթանման համար:

Բազմակարծությունը պետք է խրախուսել նաև սովորողների շրջանում: Պետք է հաշվի առնել, որ այն սովորողի համար կարող է ունենալ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ էմոցիոնալ օգուտներ: Բազմակարծության արժեհամակարգի դրական վարքագիծը սովորողների մոտ խրախուսելու լավագույն միջոցը նախադեպ ստեղծելն է սեփական գործողություններով: Եթե մանակվարժը ներգրավվի բազմակարծության մեջ և խոսի իր իսկ ուսուցման մեջ, ապա սովորողը կկարողանա օգտագործել այն, ինչ սովորել է ուսուցչի ուսուցման մեջ:

Բազմակարծության մեջ կարևոր են նաև բառերի ընտրությունը: Երկխոսության ժամանակ առաջացող դժվարության մի մասը հենց բառի ընտրությունն է: Հնարավոր չէ երկխոսություն ունենալ՝ առանց կարծիքների ազատ ներկայացնելու: Կարծիքները պատշաճ կերպով ձևակերպելը կարևոր է սովորողի համար վերլուծական մտածողություն զարգացնելու և արտահայտվելու շրջանակում: Ուստի կարևոր եմ համարում, որ մանկավարժները քննարկեն նաև համապատասխան տերմինաբանությունը և շեշտեն անհամաձայնության ժամանակ հարգալից լինելու կարևորությունը: Պետք է սովորեցնել

խոսելու արվեստը, ինչպես հնարավոր կլիներ սովորոեցնել ցանկացած այլ ոգեշնչված դաս:

Բազմակարծության կարևորությունը հաշվի առնելով, չպետք է մոռանալ նաև յուրաքանչյուրի մասնակցությունը դպրոցի գործունեությանը: Արժեհամակարգը պետք է նպաստի մասնակցային որոշումների ընդունմանը: Մասնակցային որոշումների կայացումը համագործակցային է, ուստի համապատասխան համակարգում յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշմանը:

Մասնակցային որոշումների կայացման ժամանակ բոլոր շահագրգիռ կողմերը ներգրավվում են առաջացած հարցերի քննարկումներին, ցանկացած խնդրի լուծման և որոշման կայացման մեջ: Դա ավելի ժողովրդավարական մոտեցում է, որի միջոցով նաև արժևորվում է յուրաքանչյուր մասնակից:

Մասնակցային որոշումների կայացումը ներառում է քննարկում, քանի որ բոլոր ներգրավվածները վերաբերվում են որպես հավասար: Բայց դա չի նշանակում, որ բոլորը համաձայն են որոշման յուրաքանչյուր մասի հետ: Այնուամենայնիվ, բոլորը պատասխանատվություն են կրում որոշման համար:

Մասնակիցների մասնակցային որոշումները կայացվում են տեսակով տարբեր մարդկանց միջոցով և պետք է հաշվի առնել, որ միջավայրում կարող են լինել արագ մտածողներ, օժանդակողներ և պասիվ մարդիկ, հետևաբար այս դեպքում որոշումների ընդունումը կախված է լինելու այդ տեսակի մարդկանց՝ խնդրին իրենց չափով արձագանքումից: Հետևաբար, կարևորում եմ հավասար միջավայրի պահպանումը՝ բոլորին հնարավորություն տալով ներկայացնելու իրենց կարծիքները:

Բազմակարծության, բազմազանության ընդունումը, մասնակցային որոշումների կայացումը ապահովում է յուրաքանչյուրի ներառվածությունը, որը իրենցի ենթադրում է հնարավորություն դիրքորոշումներ ներկայացնելու և լսելու այլ դիրքորոշումներ: Ներառականության շնորհիվ է, որ դպրոցում ստեղծվում է հանդուրժող և բոլորի համար հավասար, իրավունքները պաշտպանված միջավայր:

Հարգանքն ու ներառականությունը լավ մասնակցային որոշումների կայացման հիմքն

են: Բոլորի ձայնը պետք է գնահատվի և տեղ հատկացվի ողջ գործընթացի ընթացքում: Մասնակիցները պետք է ապահով զգան իրենց տեսակետներն արտահայտելիս: Նրանք, ովքեր սովոր են ղեկավարել, պետք է հրաժարվեն որոշակի վերահսկողությունից և պարտավորվեն հարգել գործընթացը: Աջակցողը մեծ դեր է խաղում հարգալից, ներառական միջավայր ստեղծելու գործում, սակայն յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն ստանձնի այն բանի համար, թե ինչպես են վարվում ուրիշների հետ գործընթացի ընթացքում:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը ձևավորվում է ժողովրդավարական գործիքների կիրառմամ, որն էլ զարգացնում է յուրաքանչյուրի ձևավորված ժողովրդավարական կարողունակությունները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Հանդուրժողականության միջավայր • Բազմակարծության ընդունում • Խնդիրների քննարկում և մասնակցային որոշումների կայացում • Յուրաքանչյուրի ներառականության ապահովում՝ բոլոր ոլորտներում • Մարդը՝ որպես մեծագույն արժեք • Համագործակցության բարձր մակարդակ՝ ժողովրդավարության սկզբունքների հիման վրա	• Դպրոցի ընդհանուր գործունեության որոշ մասնակիցների մոտ ժողովրդավարական գործիքների կիրառության ոչ ճիշտ պատկերացում • Համայնքում որոշ մասի ոմտ ձևավորված կարծրատիպեր

- **Վերլուծություն**

Դպրոցում տարիներ շարունակ ավանդույթ և արժեհամակարգ է ձևավորվել՝ արժևորելու մարդ-անհատին: Դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպվում է բոլոր մանկավարժների միջոցով, նրանք անմիջական մասնակցություն են ունենում հարցերի քննարկմանը և խնդիրների լուծմանը: Բոլոր ժողովներին հնարավորություն է տրված մասնակվարժներին ներկայացնելու իրենց դիրքորոշումները, համոզմունքները և մասնակիցը լինելու որոշումների կայացմանը: Նույն սկզբունքը կիրառվում է նաև սովորողների շրջանում,որին նպատաստում են մանկավարժները՝ ստեղծելով դասարաններում բազմակարծության, ներառականության մասնակցայնության միջավայր: Որոշ ուսուցիչներ չնայած որ ունեն որոշ կարծրատիպեր, այնուամենայնիվ, նրանք հաղթահարելով կարծրաիպերը շարժվում են առաջ, քանի որ դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը տրամադրող է:

Նպատակ	• Ձևավորված բազմակարծության, ներառականության, մասնակցային արժեհամակարգերի պահպանում
Խնդիր	• Համայնքի որոշ մասի կարծրատիպերի ազդեցություն • Դպրոցի որոշ մանկավարժների շրջանում ինքնաքննադատության բացակայություն • Մասնակցային որոշումների կայացման ժամանակ որոշ մասնակիցների մասնակցության պասիվություն • Դպրոցի ընդհանուր գործունեության որոշ մասնակիցների մոտ ժողովրդավարական գործիքների կիրառության ոչ ճիշտ պատկերացում

Իրականացվող գործողություն	• Խթանել բոլոր խորհրդակցական մարմիններում բազմակարծությունը և մասնակցային որոշումների կայացումը • Ապահովել բոլոր մասնակիցների ներգրավվածությունը ընդհանուր գործընթացի իրականացմանը • Կազմակերպել հանդիպումներ ժողովրդավարական գործիքների արդյունավետության, դրանց կիրառման վերաբերյալ • Աջակցել աշակերտական խորհրդին սովորողների շրջանում հանդուրժողականության և բազմակարծությանը նվիրված միջոցառումների անցկացման համար • Նպաստել և՛ մանկավարժների, և՛ սովորողների ակտիվ մասնակցությանը ինչպես որպես անհատ, այնպես էլ՝ խմբային աշխատանքում որպես խմբի անդամ • Ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ ինքնաքննադատությունը ընկալելի լինի բոլորի, այդ թվում՝ իր համար
Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Համակարգող • ՄԽ, ԾԽ, ԿԽ • Տնօրենի տեղակալ • ԿԱԴՍՀ • Մանկավարժներ • Աշխատակիցներ • Համագործակցող մասնակիցներ

Կատարման ժամկետներ	• Դպրոցում ձևավորված բազմակարծության, ներառականության, մասնակցային արժեհամակարգը պահպանելու համար անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել մշտադիտարկում, արդյունքների վերլուծություն և բացթողումների շտկում, որը պետք է իրականացվի ուսումնական տարիների ամբողջ ժամանակահատվածում
Ռիսկեր	• Որոշ կարծրատիպեր • Բնավորության խնդիրներ • Անսպասելի իրավիճակում անհատի ոչ ադեկվատ դրսևորում
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Վերլուծել անսպասելի իրավիճակները և կատարել համապատասխան գործողություններ համագործակցային մեթոդների կիրառման արդյունքում • ՄԽ-ում, ԱԽ-ում պարբերաբար իրազեկել վարքականոնների և ներքին կարգապահական կանոնների մասին • Պարբերաբար իրազեկել ծնողական համայնքին՝ ժողովրդավարական գործիքների արդյունավետության և կիրառման վերաբերյալ • Ապահովել յուրաքանչյուրի նկատմամբ անհատական վերաբերմունք
Ակնկալվող արդյունքներ	• Ժողովրդավարության սկզբունքներով դպրոց • Բոլորի իրավունքները պաշտպանված միջավայր • Արժևորված մարդ

	• Ապահով, անվտանգ և առողջ միջավայր • Սովորողը որպես վերլուծող, ինքնաքննադատող, ժողովրդավարական կարողություններով ձևավորված, հասարակության անդամ
Գնահատման չափանիշ	• Դպրոցում չեն պահպանվել ժողովրդավարական սկզունքներով ձևավորված միջավայրը - անբավարար • Դպրոցում պահպանվում է ժողովրդավարական սկզունքներով ձևավորված միջավայրը- բավարար • Դպրոցի գործունեության բոլոր ոլորտներում կիրառվում են ժողովրդական գործիքներ, ինչպես նաև ընդունելի են ինքնաքննադատությունը,առողջ քննադատությունը - լավ • Այս ամենի հիմքով դպրոցն աշխատում է իր բնականոն հունով և ոչ մի արհեստական խոչընդոտներ և իրավիճակներ չեն ստեղծվում - գերազանց
Վերահսկողություն	Տնօրեն

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատումը դպրոցում

Աշխատակիցների արժևորումը արդյունավետ աշխատանքի հիմքն է: Արդյունավետ աշխատանքը դրսևորվում է աշխատակցի կատարողականի գնահատմամբ:

Աշխատակիցների գնահատումը հնարավորություն է գնահատելու աշխատողի առաջընթացը, գովաբանելու նրա ձեռքբերումները և համագործակցելու նպատակների շուրջ՝ բարելավելու կատարողականը և օգնել հասնելու նպատակներին:

Աշխատանքի ճիշտ կատարման դեպքում աշխատակիցների գնահատումները կարող են կարևոր առավելություններ ունենալ ինչպես ղեկավարի, այնպես էլ իր՝ աշխատակցի համար:

Աշխատողների գնահատումը՝

- Ղեկավարի և աշխատակիցների միջև հաղորդակցության բարելավումն է
- Աշխատանքից բավարարվածության և պահպանման բարելավումն է
- Աշխատակցի կատարողականի և արդյունավետության բարձրացումն է
- Օգնության տրամադրումն է հետագա վերապատրաստման կարիքների համար
- Ձևավորում է դպրոցի արժևորման միջավայրը

Աշխատակիցների գնահատումները առանցքային են աշխատակիցների և ղեկավարների միջև հստակ ակնկալիքներ և սահմաններ հաստատելու համար: Դրանք այն միջոցներն են, որով երկու կողմերն էլ ներկայացնում են, թե որոնք են նպատակները, ինչպիսին է հաջողությունը և ինչ նոր վերապատրաստման կամ զարգացման ուղիներ են անհրաժեշտ այդ նպատակներին հասնելու համար:

Աշխատակիցների գնահատումը օգնում է նրանց իմանալ, թե ինչ են նրանք լավ անում և որտեղ պետք է բարելավեն աշխատանքը

Աշխատակցի գնահատման հիմքը հանդիսանում է նրա աշխատանքի կատարողականը, որի վերլուծության նպատակն է բացահայտել աշխատակցի ուժեղ և թույլ կողմերը, առաջարկել կառուցողական հետադարձ կապ հետագայում հմտությունների, կարողունակությունների զարգացման համար և աջակցել նպատակների սահմանմանը:

Աշխատակազմի գնահատումը մարդկային ռեսուրսների արժեքի գնահատումն է նրանց հմտությունների, գիտելիքների, փորձի և արտադրողականության տեսանկյունից:

Եվ հենց գնահատված աշխատակիցներով է ձևավորվում արժևորված աշխատակազմը: Իսկ աշխատակացի գնահատված լինելը ուղիղ համեմատական է նաև նրա խրախուսմանը: Խրախուսումը խթանում է աշխատակցի ցանկալի վարքագիծը կամ գործողությունը: Խրախուսումը դա այն ամենն է, որը գրավում է աշխատողին և դրդում էլավելի արդյունավետ աշխատելուն: Դա նաև նպաստում է աշխատակցի մոտիվացիայի մեծացմանը:

Աշխատակցին խրախոսում է ղեկավարը, ով հիմնականում ինքն է ընտրում խրախոսման ձևն ու ժամանակացույցը: Ժողովրդավարական սկզբունքներից ելնելով խրախուսման որոշման մեջ մասնակցային դիրքորոշում կարող են ներկայացնել նաև տնօրենի տեղակալը, առարկայական մեթոդական միավորման նախագահները: Խրախուսումը կարող է լինել ինչպես ոչ նյութական (շնորհակալություն հայտնել, աշխատակազմի ներկայությամբ գնահատել կատարած արդյունավետ աշխատանքը, գովասանքի խոսքեր հղել), այնպես էլ նյութական (դրամական պարգևներ, պատվոգրեր, շնորհակալագրեր, հուշանվերներ, վճարովի լրացուցիչ արձակուրդ և այլն): Ցավոք, իմ ղեկավարման տարիների ընթացքում նախահաշվով լիազոր մարմնին ներկայացված դրամական միջոցների տրամադրումը խրախուսման ձևով մերժվել է, իսկ արտաբյուջետային ֆինանսական միջոցները տնօրինվելով ներդրողների կողմից՝ ամբողջովին ուղղվել են նպատակների իրականացման համար: Ուստի հաջորդ 5 տարիների համար կարևրում եմ նաև աշխատակիցներին դրամական պարգևատրումը, որի բյուջեն նախատեսում եմ ձևավորել նաև բարեգործներին այս հարցը ներկայացնելով:

Դպրոցում սահմանված է մանկավարժներին խրախուսման ամենամյա ձև, ըստ որի՝ ամեն տարի պատվոգրերով պարգևատրվում են դասղեկները՝ որպես «լավագույն դասղեկ» և առարկայական մեթոդական միավորումների նախագահները՝ որպես «ՄՄ լավագույն նախագահ»: Ըստ գրանցած հաջողությունների՝ եղել են նաև այլ պարգևատրումներ, այդ թվում՝ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչին պարգևատրել ենք պատվոգրով՝ ՀՀ ԱԺ գավաթի խաղարկությանը մրցանակային հորիզոնական զբաղեցնելու համար, ինչպես նաև ՆԶՊ ուսուցչին՝ ռազմահայրենասիրական դաստիարակության և արշավների կազմակերպման համար:

Գնահատման և խրախուսման արժանի են ոչ միայն իրենց աշխատանքը օրենքով սահմանված կկարգով արդյունավետ իրականացնող աշխատակիցները, այլ նաև այն ուսուցիչները, ովքեր կարևորում են ինքնակրթությունն ու ինքնազարգացումը, որը հիմք է նրանց մասնագիտական զարգացմանը: Կարևորում եմ այս համատեքստում դպրոցի անվերապահ աջակցությունը մանկավարժներին՝ ստեղծելով առանձնացված կաբինետ, որը հագեցած կլինի ժամանակակից համակարգիչներով, ուսումնական ձեռնարկներով ինչպես թվային, այնպես էլ՝ էլեկտրոնային տարբերակներով: Ինքնազարգացման ընթացքում շահում է և ինքը՝ ուսուցիչը, իրեն փոխկապակցված նաև՝ սովորողը, հետևաբար և դպրոցը, համայնքը, ուստի և՝ պետությունը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Ղեկավարի և աշխատակիցների միջև արդյունավետ հաղորդակցություն • Աշխատակիցների մոտ աշխատանքի նկատմամբ բավարարվածություն • Աշխատակցի կատարողականի և արդյունավետության բարձրացման մեխանիզմների կիրառում • Դպրցում աշխատակիցների արժևորման միջավայր • Խրախուսման տարբեր ձևերի կիրառում • Ինքնազարգացման և	• Դպրոցում ինքնազարգացման, ինքնակրթության անհրաժեշտ պայմանների բացակայություն • Խրախուսման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակաս

ինքնակրության համար մոտիվացված ուսուցիչներ • Դպրոցում բարոյահոգեբանական առողջ միջավայր

Վերլուծություն

Դպրոցում մշտապես առաջնային է մանկավարժների և սովորողների արժեորումը՝ ըստ նրանց կատարած աշխատանքների արդյունքի, որը ժամանակի ընթացքում նպաստել է աշխատակազմի բարոյահոգեբանական փոխհարաբերությունների դրսևորմանը ապահով, անվտանգ միջավայրի ձևավորմանը, մանկավարժների մոտիվացիան աշխատանքի նկատմամբ, ինչպես նաև սովորողների մոտիվացիան սովորելու նկատմամբ, որն ընդհանուր առմամբ բերում է ուսուցման արդյունավետ կազմակերպման և ուսման որակի որակի բարձրացման: Այս ամենի, ինչպես նաև համագործակցությունների արդյունքում տարբեր ձևերով խրախուսվել են և՛ սովորողները, և՛ մանկավարժները այդ թվում՝ գյուղապետարանի հետագայում՝ խոշորացված համայնքի կողմից պատվոգրերով: Իմ

Նպատակ	• Արժեորված աշխատակազմ • Արժեորված սովորողների համակազմ • Դրամական խրախուսանքի համար միջոցների հայթայթում • Որակական բարձր ցուցանիշներ ցույց տվող աշխատակազմ • Խրախուսման նոր համակարգի ներդրում • Դպրոցում ախատանքային համերաշխ միջավայր • Ինքնակրթության և ինքնազարգացման համար

	կաբինետի հիմնում՝ համալրված անհրաժեշտ տեխնիկայով, ուսումնամեթոդական բազայով
Խնդիր	• Ֆինանսական սուղ միջոցներ • Որոշ մանկավարժների սոցիալական վիճակ • Կամավոր ատեստավորման և որակավորման տարակարգի մասնակցության պասիվություն • Դպրոցում ինքնազարգացման, ինքնակրթության անհրաժեշտ պայմանների բացակայություն • Ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ կաբինետի բացակայություն
Իրականացվող գործողություն	• Շարունակել պահպանել աշխատակազմի արժևորման համակարգը • Գտնել բարերարներ մանկավարժներին դրամական ձևով պարգևատրելու համար • Ձևավորել կաբինետ՝ համալրված ժամանակակից համակարգիչներով և ուսումնամեթոդական նյութերով՝ ուսուցիչների ինքնազարգացման և ինքնակրթության համար • Խրախուսել և աջակցել ուսուցիչներին կամավոր ատեստավորմանը և որակավորման տարակագին մասնակցությանը • Ուսուցիչներին աջակցել մասնագիտական զարգացման և նորարարությունների կիրառելու գործում • Գտնել ֆինանսական միջոցներ՝ ինքնակրթության և ինքնազարգացման կաբինետի ստեղծման համար
Պատասխանա-տուներ	• Տնօրեն

Կատարման ժամկետներ	• Ինքնակրթության և ինքնազարգացման համար նախատեսված կաբինետի և դրա համալրման կատարման ժամկետն արդեն նշված է նախորդ բաժիններում • Աշխատողների արժևորումը և խրախուսումը պետք է իրականացնել ամբողջ ուսումնական տարիների ընթացքում ՝ նրանց կատարողականի արդյունքի հիման վրա:
Ռիսկեր	• 5 տարիների ընթացքում դրամական խրախուսման համար պետական բյուջեից կամ հովանավորների • Ֆորսմաժորային իրավիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Փորձել գտնել բարերարների, կազմակերպությունների՝ մանկավարժների նպատակային դրամական խրախուսումը ապահովելու համար • Ստեղծված ֆորսմաժորային իրավիճակից, կազմակերպել համապատասխան գործողություններ
Ակնկալվող արդյունքներ	• Դպրոցում գնահատված, արժևորված մանկավարժական աշխատակազմ • Դպրոցում գնահատված, արժևորված սովորողների համակազմ • Հաստատուն դրամականհոսքեր՝ դրամական պարգևատրման բյուջե կազմելու համար • Ինքնազարգացման և ինքնակրթության շնորհիվ կատարելագործված, կամավոր ատեստավորված, որակավորման տարակարգ ունեցող վերապատրաստող մանկավարժներ • Ինքնակրթության և ինքնազարգացման համար

	նախատեսված կաբինետ՝ համալրված նորագույն տեխնիկայով և անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով
Գնահատման չափանիշ	• Գնահատման և խրախուսման որևէ տեսակ չի կիրառվել – անբավարար • Կիրռվել է բացառապես պատվոգրերի խրախուսման ձևը – բավարար • Կիրառվել է բացառապես պատվոգրերի խրախուսման ձևը, լավագույնները ներկայացվել են խոշորացված համայնքի, մարզպետարանի ղեկավարությանը, ինչի արդյունքում ստացել են պատվոգրեր, դրամական պարգևներ, ստեղծվել է ինքնազարգացման և ինքնակրթության կաբինետ՝ համալրված ուսումնամեթոդական նյութերով - լավ • Ստեղծված է ինքնազարգացման և ինքնակրթության կաբինետը համալրվել է նորագույն տեխնիկայով և ուսումնամեթոդական նոր նյութերով, կիրառվել է պատվոգրերի, հուշանվերների խրախուսման ձևը, լավագույնները ներկայացվել են խոշորացված համայնքի, մարզպետարանի ղեկավարությանը, ինչի արդյունքում ստացել են պատվոգրեր, դրամական պարգևներ, ինչպես նաև դպրոցում ձևավորված է հաստատուն բյուջե՝ նպատակային խրախուսման համար - գերազանց
Վերահսկողություն	Տնօրեն

Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատում

Ժամանակակից դպրոցներում, որքան էլ որ հնարավոր է լինում անվտանգության համակարգերի միջոցով իրականացնել վերահսկողություն, միևնույն է, դպրոցահասակ երեխաների շրջանում քիչ չէ բռնության, հալածանքի, օտարման դեպքերը, որը վերջին շրջանում կրում է ընդհանրական «բուլլինգ» անվանումը:

Բուլինգը անցանկալի, ագրեսիվ վարքագիծ է դպրոցական տարիքի երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական անհավասարարություն: Նման դրսևորումները կրկնվում է կամ ունեն կրկնվելու միտում՝ ժամանակի ընթացքում:

Բուլլինգը արտահայտվում է որպես ահաբեկում: Երեխաները, ովքեր ահաբեկում են, օգտագործում են իրենց ուժը, օրինակ՝ ֆիզիկական ուժը, ամոթալի տեղեկատվության հասանելիությունը կամ դպրոցում «հայտնի» լինելը՝ ուրիշներին վերահսկելու կամ վնասելու համար:

Սովորաբար որպես բուլլինգի դրսևում, հիմք է հանդիսանում նաև թիրախի

- տեսքը
- վարքագիծ
- սոցիալական կարգավիճակը

Բուլինգը ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են սպառնալիքներ հնչեցնելը, լուրեր տարածելը, ինչ-որ մեկի վրա ֆիզիկական կամ բանավոր հարձակվելը և որևէ մեկին դիտավորյալ խմբից հեռացնելը: Վերջինս հենց օտարման միտում է՝ թիրախին մեկուսացնելով իր շրջապատից, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել ծանր հետևանքների:

Բուլինգի մեծ մասը տեղի է ունենում դպրոցում և շրջակայքում, ինչպես նաև խաղահրապարակներում: Սակայն բուլլինգի ժամանակակից և ամենատարածված «տիրույթը» ինտերնետն է, որի միջոցով բուլլինգ իրականացնողները ունենում են

հնարավորություն կիբեռբուլլինգն իրականացնել ավելի շատ մարդկանց շրջանում:

Բուլլինգի կրկնվող դեպքերը կարող են հանգեցնել թիրախի մոտ սթրեսային վիճակի, հոգնիճակի խանգարման, դպրոց հաճախել չցանկանալուն, ընդհուպ մինչև ծանր հետևանքներ: Այս առումով կարևոր է դպրոցում պարբերաբար իրականացնել կանխարգելման աշխատանքներ հանդիպումների, զրույցների ձևով, օգտագործել դասղեկի ժամը, կազմակերպել միջոցառումներ թեմայի վերաբերյալ: Հաճախակի հանդիպումներ կազմակերպել ծնողների, համապատասխան մարմինների հետ և ձևավորել անվտանգ և ապահով բարոյահոգեբանական միջավայր, որը պետք է ձևավորվի նաև յուրաքանչյուր դասարանում:

Որպես բուլլինգի կանխարգելման «գործիքներ» հանդիսանում է

- Ծնողների ուշադրությունը, վերահսկողությունը
- Ընտանիքի դաստիարակությունը
- Այն միջավայրը, որտեղ ապրում և սովորում է սովորողը
- Համացանցից օգտվելու կուլտուրան
- Մեդիագրագիտությունը

Այս գործիքների, և դպրոցում վերահսկողության ճիշտ մեխանիզմների ներդրման արդյունքում հնարավոր կլինի նվազագույնի հասցնել բուլլինգի դրսևորման ձևերը սովորողների շրջանում:

Բուլլինգի՝ մասնավորապես օտարման դրսևորումներ լինում են նաև ուսուցիչների կողմից: Երբեմն ուսուցիչները անտեսում են որոշ սովորողներին դասերի ընթացքում, որը կարող է պայմանավորված լինել ինչպես սովորողի վատ սովորելու, այնպես էլ դասարանում ընտրյալ սովորողներ ունենալու հանգամանքի հետ: Այս ամենն անթույլատրելի է: Ուստի այդ մանկավարժի հետ տնօրենը պետք է կատարի անհատական աշխատանք:

Կարող են բուլլինգի դրսևորման ձևեր լինել նաև մանկավարժների շրջանում, որի

հիմքում ավելի շատ անհատական բնավորության գծերն են, ինչպես նաև մասնագիտական անառողջ մրցակցային վիճակը: Տնօրենը որպես ղեկավար, պետք է ճկուն ձևով կարողանա հարթել նաև ստեղծված իրավիճակը:

Ի վերջո, բուլլինգի որևէ դրսևորում և՛ սովորողների, և՛ մանկավարժների շրջանում անթույլատրելի է: Ուստի արդյունավետ ուսումնական գործընթացի և ուսման որակի բարձրացման, ինչպես նաև մանկավարժական աշխատողների՝ դպրոցում արդյունավետ աշխատանքներ իրականացնելու համար կարևոր են բուլլինգի դրսևորումների բացառումը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Դպրոցում ձևավորված անվտանգ ապահով միջավայր • Դասարաններում ձևավորված անվտանգ ապահով միջավայր • Հանդուրժողականության միջավայր • Քննարկումներ, զրույցներ, հանդիպումներ ծնողների և համապատասխան մարմինների հետ	• Տարիքային առանձնահատկություններ • Դասարանում հեռախոսների հասանելիություն • Դպրոցի անվտանգության համակարգ (տեսախցիկների բացակայություն)

Նպատակ	• Դպրոցում ձևավորված հանդուրժողականության միջավայր • Ձևավորված անվտանգ և ապահով միջավայրի պահպանում

	• Վերահսկողության արդյունավետ համակարգի ապահովում
Խնդիր	• Սովորողի անհատական բնավորությունը • Սովորողի տարիքային առանձնահատկությունը • Իրավիճակների նկատմամբ սովորողի ընտանիքի անտարբերությունը • Սովորողի վատ միջավայրի ազդեցություն • Համացանցի հնարավոր վատ ազդեցությունը
Իրականացվող գործողություն	• Իրականացնել մշտադիտարկումներ • Ձևավորել վերահսկողության համակարգ • Տեղադրել տեսախցիկներ՝ անվտանգությունը ապահովելու համար • Դասղեկի ժամերին իրականացնել իրազեկման բուլլինգի և դրա հետևանքների մասին • Կազմակերպել թեմային նվիրված միջոցառումներ • Կազմակերպել հանդիպումներ՝ համապատասխան մարմինների և ծնողների հետ
Պատասխանա-տուներ	• Տնօրեն • Տնօրենի տեղակալ • ԿԱԴԱՀ • Դասղեկներ
Կատարման ժամկետներ	• Ձեռք բերել տեսախցիկներ – 2024 -2025 թթ. • Վերահսկողությունը, մշտադիտարկումը, հանդիպումները, զրույցները պետք է իրականցնել ամբողջ ուսումնական տարիների ընթացքում

Ռիսկեր	• Ծնողների կողմից սովորողների իրականացրած բուլլինգի դրսևորումների նկատմամբ ոչ ադեկվատ դրսևորում • Սովորողների կողմից կանխարգելման գործողությունների նկատմամբ ոչ ադեկվատ պահվածք • Ուսուցիչների էմոցիոնալ պահվածք
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ, զրույցներ, քննարկումներ, թեմատիկ միջոցառումներ • Հաճախակի ընդգրկել ծնողներին կազմակերպվող թեմատիկ միջոցառումներին • Անհրաժեշտության դեպքում՝ ուսուցիչների հետ իրականացնել անհատական աշխատանքներ
Ակնկալվող արդյունքներ	• Բարոյահոգեբանական առողջ միջավայր • Անվտանգ, իրավունքները պաշտպանված դպրոց • հանդուրժող մանկավարժական աշխատակազմ և սովորողների համակազմ
Գնահատման չափանիշ	• Պարբերաբար գրանցված բուլլինգի դրսևորումներ, կանխարգելման աշխատանքների բացակայություն - անբավարար • Գրանցվել են բուլլինգի դրսևորումներ, կատարվել են համապատասխան աշխատանքներ • Գրանցվում են քիչ քանակության բուլլինգի դրսևորումներ, պարբերաբար կազմակերպվում են կանխարգելման միջոցառումներ, տեղադրված են տեսախցիկներ՝ անվտանգության ապահովման համար - լավ

	• Կանխարգելման աշխատանքների, իրականացված վերահսկողության (այդ թվում՝ մշտադիտարկման, տեղադրված տեսախցիկների) միջոցով չեն գրանցվում բուլլինգի դրսևորումներ՝ գերազանց
Վերահսկողություն	Տնօրեն

Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը, դրանց արդյունավետության ցուցանիշների շեղումները և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը դա ֆինանսական միջոցները կառավարելու հիմնական գործիքներից մեկն է, որի համար հիմք կարող են հանդիսանալ պարբերաբար ներկայացված հաշվետվությունները: Ֆինանսական հաշվետվությունները փաստաթղթերի փաթեթ է, որը ցույց են տալիս դպրոցի ֆինանսական վիճակը որոշակի ժամանակահատվածում: Դրանք ներառում են հիմնական տվյալներ այն մասին, թե դպրոցը ինչ ունի և ինչ պարտք ունի, և որքան գումար է մուտքագրել և ծախսել:

Այս ամենը դպրոցի ֆինանսների պատկերն է և կարևոր տեղեկություններ է տալիս ֆինանսականի կատարողականի մասին: Դրանք նաև հիմք են հանդիսանում ապագա ընթացքը պլանավորելու համար:

Դպրոցի կառավարման հին կարգի համաձայն՝ դպրոցի ֆինանսական միջոցների վերաբերյալ բոլոր ուղղություններով համապատասխան փաստաթղթերը նախ ներկայացվում էր դպրոցի կառավարման խորհրդի քննարկմանը և հավանությանը, որից հետո ներկայացվում լիազորված մարմնի հաստատմանը:

Դպրոցի կառավարման նոր կարգի համաձայն՝ ֆինանսատնտեսական ամբողջ բաժնի գործողությունները պետք է կազմակերպվի, վերահսկվի և իրականացվվի համակարգողի կողմից՝ լիազորված մարմնի վերահսկողությամբ: Այս դեպքում տնօրենը ուղղակի

ներկայացնում է ուսումնական գործընթացների վերաբերյալ խիստ անհրաժեշտկարիքները համակարգողին, կատարվում են երկկողմանի քննարկումներ, վերջինս էլ ներկայացվում է լիազորված մարմնի հաստատմանն ու որոշմանը:

Դպրոցի ծախսերը / 2022-2023 ուստարի	ՀՀ դրամով
Աշխատավարձ	54 000 000
Լույս	3 600 000
Ջուր	-
Կապ, ինտերնետ	90 000
Ուսուցիչների վերապատրաստում	226 000
Որակավորման տարակարգի վճարում	130 900
Տեղեկատվական ծառայություններ	60 000
Մասնագիտական ծառայություններ	200 000
Շինարարական ապրանքներ	250 000
Գրենական, գրասենյակային պիտույքներ	600 000
Տնտեսական ապրանքներ	600 000
Հարկեր, պայմանագրերի վճարումներ	230 000
Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր	450 000
Դասագիրք	50 000

2023 թ. տարվա սկզբին	ՀՀ դրամով
Դրամական միջոցների մնացորդ տարվա սկզբին	10 960 000
Տարվա ֆինանսավորումը	56 829 400

1) «Հայ կրթական հիմնարկության» և «Դասավանդիր Հայասան» հիմնադրամի
հետ համագործակցության շրջանակներում՝
ա) 13 մլն ՀՀ դրամ հատկացվել է դպրոցի՝ 1244 մ² մակերեսով տանիքը մետաղական նոր կոնստրուկցիաներով հիմնանորոգելու համար:
բ) վերանորոգվել և գույքով ապահովվել է գրադրանը (շուրջ 2,5 մլն ներդրում)
գ) վերանորոգվել է Նախակրթարանի երկրորդ խմբի խաղասրահը, համալրվել է նաև անհրաժեշտ գույքով – շուրջ 2 մլն դրամ
դ) վերանորոգվել է առաջին դասարանի սովորողների համար 50 մ² մակերեսով դասասենյակ, համալրվել անհրաժեշտ գույքով – 4 մլն դրամ
ե) վերանորոգվել է մարզադահլիճը և կից երկու հանդերձարանները (տղաների, աղջիկների), համալրվել է համապատասխան մարզագույքով – 8 մլն դրամ
զ) վերանորոգվել է Ինֆորմատիկայի (Համակարգչային) կաբինետը, համալրվել 10 համակարգչով՝ համապատասխան սեղան-աթոռով, տեսացրիչով և էկրանով – 3,5 մլն դրամ
2) ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրով» վերանորոգվել է ճաշարանը և խոհանոցը – 1,5 մլն դրամ
3) «Save the Children» կազմակերպության կողմից վերանորոգվել է նախակրթարանի առաջին խաղասենյակը – 50 մ² , համալրվել է համապատասխան գույքով – 4 մլն դրամ
4) Դպրոցի շրջանավարտ Սուրեն Հարությունյանի անձնական միջոցներով հիմնանորգվել է երկու դասասենյակ՝ ընդհանուր 80 մ² – 3 մլն դրամ

Ընդհանուր առմամբ՝ համագործակցության արդյունքում տեղի է ունեցել շուրջ 41,5 միլիոն դրամի ներդրում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Հին կարգի համաձայն՝ պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում • Ֆինանսական հաշվետվությունները ժամանակին ներկայացում • Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում • Ուսուցիչների հերթական վերապատրաստումներ պետական բյուջեից • Որակավորման տարակարգ ունեցող ուսուցչի հավելավճար՝ պետական բյուջեից • Սոցիալապես անապահով համակարգում ընդգրկված ընտանիքի երեխաներին անվճար դասագրքերի վարձավճարների փոխհատուցում պետական բյուջեից • Նպատակային ներդրումներ համագործակցող կազմակերպությունների և ծնողական համայնքի կողմից • Արդյունավետ օգտագործման արդյունքում՝ բյուջեում մնացորդ	• Պետական բյուջեից քիչ ֆինանսավորում՝ հին կարգի համաձայն՝ կապված սովորող-թվի հետ, նոր կարգի համաձայն՝ դասարանի թվի հետ

- **Վերլուծություն**

Պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցները կառավարվել են արդյունավետ՝ ըստ համապատասխան ուղղությունների: Ըստ վերջին տվյալների՝ առկա է շեղում, 2023 թ. սկզբին եղել է 10 960 000 ՀՀ դրամ մնացորդ:

Ղեկավարման 5 տարիների ընթացքում դպրոցում իրականացվել են բազմաբնույթ ներդրումներ, որոնց շրջանակներում տեղի է ունեցել 41,5 միլիոն դրամի ներդրում, ինչը կազմում է այս տարվա բյուջեի շուրջ 73 %-ը:

Դպրոցի գործունեության առարկան և նպատակը

Դպրոցի Կանոնադրությամբ սահմանված է, որ դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր սովորողի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 439-Ն որոշմամբ հաստատված հանրակրթությանպետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Նպատակների և խնդիրների սահմանումը

Նպատակներ

- ✓ Մանկավարժների մասնագիտական, ՏՀՏ-ների, նոր մեթոդների և տեխնոլոգիաների, մեթոդամանկավարժական կիրառման կարողությունների և հմտությունների զարգացման ապահովում

- ✓ Մանկավարժների մասնագիտական զարգացման, կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի ակտիվ մասնակցության ապահով
- ✓ Ավագ, հմուտ, վերապատրաստող, հետազոտող, մենթոր ուսուցիչների ապահովում
- ✓ Յուրաքանչյուր սովորողի՝ կրթական գործընթացին նրա առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ հիմնված նրա կարիքների և զարգացման առանձնահատկությունների վրա, կարողունակությունների ապահովում, նախասիրությունների բավարարում:
- ✓ Սովորողների՝ ՏՀՏ-ների և այլ հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման կարողությունների զարգացման ապահովում
- ✓ Սովորողների ժողովրդավարական կարողունակությունների ձևավորում
- ✓ Սովորողների մասնագիտական կողմնորոշման դիրքորոշման ապահովում
- ✓ Դպրոց-համայնք համագործակցություն. Դպրոցը որպես համյանքային կրթական, մշակութային, սպորտային կենտրոն
- ✓ Դպրոցի վարմանը անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև ուսուցիչների և սովորողների համար ուսումնական նյութերի թվայնացում
- ✓ Ձևավորված անվտանգ, ապահով միջավայրի պահպանում
- ✓ Դպրոցի ՏՀՏ-ների, ուսումնական և այլ նյութատեխնիկական ռեսուրսների արդիականացում, համալրում
- ✓ Շահառու մարմինների, ծնողական համայնքի, բարերարների հետ համագործակցությունների շարունակականության ապահովում
- ✓ Դպրոցի ընդհանուր գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովում
- ✓ Դպրոցին կից՝ նոր մասնաշենքի կառուցում
- ✓ Ենթակառուցվածքների բարելավում
- ✓ Մանկավարժների և սովորողների ինքնազարգացման ապահվում
- ✓ Դպրոցի Համակարգողի հետ արդյունավետ համագործակցություն

Խնդիրներ

- ✓ Մանկավարժների մոտ մասնագիտական զարգացման, կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի մասնակցության պասիվություն, անվստահություն
- ✓ Ուսուցիչների շրջանում ավագ, հմուտ, վերապատրաստող, հետազոտող, մենթոր ուսուցիչ դառնալու ցանկության պակաս, անհամարձակություն
- ✓ Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին անհամապատասխան կրթության գործընթացի կազմակերպումը, սովորողի կարիքների և նրա զարգացման առանձնահատկությունների ոչ ճիշտ գնահատումը՝ ուսուցչի՝ ՀՊՉ-ի ոչ լիարժեք տիրապետման արդյունք
- ✓ Դպրոցում առկա ՏՀՏ-ների և այլ հաղորդակցական տեխնոլոգիաների, մեդիագրագիտության պակաս
- ✓ Դպրոցում ձևավորված ոչ լիարժեք ժողովրդավարական միջավայր
- ✓ Ուսուցիչների կողմից սովորողների ունակությունների ոչ ճիշտ գնահատում
- ✓ Դպրոց-համայնք համագործակցության վատթարացում, ֆինանսական միջոցների բացակայություն
- ✓ Մանկավարժական համակազմի և աշխատակիցների մոտ դպրոցի վարման անհրաժեշտ փաստաթղթերի թվայնացման հետ կապված դժվարություններ
- ✓ Բուլլինգի դրսևորմանն ուղղված կանխարգելման աշխատանքների բացակայություն
- ✓ Պետական ֆինանսական միջոցների պակաս
- ✓ Համագործակցային վստահության անկում
- ✓ Մանկավարժական համակազմի և աշխատակիցների՝ կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության թերի իմացություն
- ✓ Պետական ֆինանսական միջոցների, ներդրումների պակաս (վերաբերվում է նաև հաջորդ նպատակին)
- ✓ Դպրոցում ինքնակրթության և ինքնազարգացման համար ժամանակակից տեխնիկայով համալրված կաբինետի բացակայություն
- ✓ Ներանձնային հարաբերությունների վատթարացում

Կրթական կարիքների նկարագրությունը

Կազմելու համար ուսումնական հաստատության կրթական կարիքների նկարագրությունը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ կարիքների վեկտորը ուղղված է դեպի սովորողը:

Հանրակրթության մասին օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի

- մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը
- մարդկային արժանապատվության պահպանմանը
- իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը
- համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը
- ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը
- մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը
- ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը
- որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները ապահովելու համար դպրոցում գործում են տարբեր ոլորտներ, որոնց համընդհանուր աշխատանքի միջոցով հնարավոր կդառնա ապահովել կրթական կարիքները և տալ դրանց նկարագրությունը:

Կրթական կարիքները ապահովելու համար անհրաժեշտ են՝

- Կրթական ծրագրեր. դպրոցում իրականացվում են տարրական և միջին հանրակրթական ընդհանուր ծրագրերը, ինչպես նաև գործում է նախակրթարանը՝

համապատասխան ծրագրով, ինչպես նաև՝ ներառական, երկարօրյա ուսուցում և այլն

- Շենքային պայմաններ (տե՛ս շենքային պայմանների վերլուծությունը)
- Մարդկային ռեսուրսներ (տե՛ս ենթակառուցվածքների մասին վերլուծությունը)
- Ենթակառուցվածքներ (տե՛ս ենթակառուցվածքների մասին վերլուծությունը)
- Նյութատեխնիկական բազա (տե՛ս նյութատեխնիկական բազայի մասին վերլուծությունը)
- Կրթական ծրագրերի իրականացման համար բոլոր ուղղություններով անհրաժեշտ ֆինանսավորում (տե՛ս ֆինանսական վերլուծությունը)
- Սովորողի կարիքների համակողմանի գնահատում և վերլուծություն
  * արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողներ
  * ցածր առաջադիմություն ունեցող սովորողներ
  * կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ
  * սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներ
- Ուսուցման ձևեր (առկա, հեռավար, հեռավար/համակցված)
- Կրթական ծրագրերի կատարողականության ապահովում
- Կրթական ծրագրերի կատարողականության վերահսկողություն, հաշվետվողականություն
- Տնօրենի և համակարգողի կողմից արդյունավետ կառավարում
- Լիազորված մարմնի կողմից բոլոր ոլորտների նկատմամբ վերահսկողություն
- Դպրոցում գործող կառուցվածքային ստորաբաժանումներ

Դպրոցը իր հիմնադրման օրվանից գործում է կրթության ոլորտը կարգավորող բոլոր օրենսդրական իրավական ակտերով, իրականացնում է անվճար ուսուցում: Կրթական կարիքներն իրականացվում է օրենքով սահմանված համապատասխան

նորմերով: Պետության կողմից ահմանված կրթական կարիքները դպրոցում բոլոր ոլորտների համագործակցության արդյունքում ապահովված են: Ավելին զուգահեռ այդ ամենի, իրականացվում են նաև այլ ծրագրեր՝ սովորողների ինտելեկտի զարգացման, գիտելիքների ձեռքբերման , հմտությունների և կարողունակությունների ձևավորման համար: Չնայած կա որոշ շեղում, քանի որ չի իրականացվում ներառական կրթություն կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաների՝ դպրոցում չսովորելու պատճառով, ինչպես նաև երկարօրյա խմբերում ուսուցումը, քանի պետական բյուջեից չի եղել համապատասխան ֆինանսավորում: Առաջիկայում կկազմակերպվի երկարօրյա խմբեր:

Կրթական կարիքներները դա մարդու ակտիվ վերաբերմունքն է գիտելիքի ոլորտին, իսկ կարիքների ապահովումը՝ նրա զարգացման, ինքնորոշման և ինքաիրացման կարևոր հատկանիշը: Արդյունքում ձևավորվում է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցած անձ:

Համապատասխանությունը պետական կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Հայաստանի Հանրապետության Հանրակրթության մասին օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Ինչպես նաև համընդհանուր ներառական կրթությունը հռչակված է որպես յուրաքանչյուր երեխայի

կրթության իրավունքի ապահովման երաշխիք և նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը, ինչպես նաև համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան՝ պարտադիր միջնակարգ անվճար կրթություն:

Հայաստանի Հանրապետության Հանրակրթության մասին օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների

ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

Կարևոր է նաև այն, որ

- Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու շահերին, ծառայի անհատին և ժողովրդին:
- Հանրակրթությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով, որը նպատակաուղղված է հայոց լեզվի, հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, ազգային ինքնության և միասնության ապահովմանը:
- Հանրակրթությունն իրականացնել ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելով դրա աշխարհիկ բնույթը՝ զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից: Այն հավասարապես մատչելի է յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
- Ապահովել «ՀՀ կրթության մասին օրենքով հիմնական կրթության հասանելիությունը յուրաքանչյուր անձի համար, անկախ նրա

հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:

- Հանրակրթությունը դպրոցում իրականացնել սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի

Կրթության զարգացման տեսլականը

- Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է: Պետությունը պետք է ապահովի համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Հասարակությունը կիսում է կրթության քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատվությունը, որը ենթադրում է ներառական հանրային գործընթաց: Քաղաքացիական հասարակությունը, ուսուցիչներն ու դասախոսները, մասնավոր հատվածը, համայնքը, ընտանիքը, երիտասարդներն ու երեխաները կարևոր դեր ունեն որակյալ կրթության իրավունքի իրացման գործում: Պետության դերը վճռորոշ է կարգավորող սկզբունքների և նորմերի սահմանման համար:
- Կրթությունը հանրային արժեք է: Այն պետք է նպատակաուղղված լինի տվյալ քաղաքակրթական տեսակի լինելիության ապահովմանը, ձևավորի ազատ և պատասխանատու քաղաքացի: Կրթության միջոցով տեղի է ունենում մարդու անձնային և մասնագիտական լիարժեք զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված աշխարհընկալման ձևավորումը: Կրթությունը սերունդների հոգևոր-մշակութային ժառանգության, քաղաքակրթական արժեքների պահպանման և փոխանցման, ինչպես նաև նոր արժեքների ստեղծման պատասխանատվություն դաստիարակող հիմնական համակարգն է:

Կրթության զարգացման գլխավոր նպատակն է ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը.

- լիարժեք ծառայում է ազգային շահերին,
- արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին,
- յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:

Վերլուծություն

Դպրոցի գործունեության հիմքում ազգային գաղափարախոսությունն է : Դպրոցն իր գործունեությունն իրականացնում է օրենքով սահմանված կարգով: Դպրոցումիրականացվում են սովորողների կրթական կարիքներին համապատասխ ուսուցում և դաստիարակություն՞ Դպրոցում կրթությունը իրականացվում է անվճար: Դպրոցը համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության, մարզպետարանի՝ որպես լիազոր մարմնի հետ, իրականացնում է Կառավարության կողմից սահմանած կրթական քաղաքականությունը: Դպրոցի գործունեության և իմ կողմից նախաձեռնած՝ շահառու կազմակերպությունների, ծնողական համայնքի հետ համագործակցությունների արդյունքում կատարվել են որոշակի ֆինանսական ներդրումներ, որոնք նպաստել են կրթական ծրագրերի արդյունավետ իրականցմանը: Որոշ համագործակցությունների արդյունքում կազմակերպվել են այլ կրթական ծրագրեր, կան նաև նախնական պայմանավորվածություններ կրթական այլ ծրագրերի իրականացման և դպրոցի նյութատեխնիկական բազան բարելավվելու համար:

Դպրոցը խոշորացված համայնքի հետ համագորխակցության արդյունքում կազմակերպում է շախմատի ամենամյա համայնքային մրցույթ, որին մասնակցում են ողջ համայնքի երեխաները:

Դպրոցը տրամադրում է 1-4-րդ դասարանների սովորողների և նախակրթարանի երեխաներին տաք սնունդ: Դպրոցում գործում է նաև «Ռոբոտաշինություն», որին

մասնակցում են նաև համայնքի երեխաները:

Այս ամենը փաստում է, որ դպրոցը գործում է պետական կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան:

Խորհրդակցական մարմիններ

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով, ըստ դպրոցի Կանոնադրության, ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ:

Մանկավարժական խորհուրդ

Մանկավարժական խորհուրդը ուսումնական գործընթացի կազմակերպման ամենակարևոր օղակն է: Այն համարվում է որպես ինքնակառավարվող մարմին: Մանկավարժական խորհրդի նպատակն է կայացնել այնպիսի որոշումներ, որը կնպաստի և՛ դպրոցում սովորողի կարիքներին համապատասխան նրա ուսումնառության ապահովմանը, և՛ յուրաքանչյուր մանկավարժի մասնագիտական զարգացմանը ժողովրդավարական կարողունակություններ ձևավորմանը: Մանկավարժական խորհդրի գործունեության համար կարևորում եմ այն քայլը, որը կհամախմբի մանկավարժներին և կզարգացնի նրանց ներուժը՝ ուսման որակը բարելավելու համար: Մանկավարժական խորհուրդը պետք է լինի որպես նաև շարժիչ ուժ բոլոր մանկավարժների համար արդյունավետ ուսուցման կազմակերպման և ուսման որակի բարելավման համար:

Մանկավարժական խորհուրդը՝ դպրոցի կանոնադրության համաձայն կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ծամկետով:

Մանկավարժական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է կառավարման խորհրդի երկու անդամ:

Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամներ են: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրվում են նաև արտահերթ նիստեր՝

- տնօրենի նախաձեռնությամբ
- մանկավարժական խորհրդի անդամների 1/3 նախաձեռնությամբ
- լիազորված մարմնի նախաձեռնությամբ

Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ /սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ/ և այլ անձիք:

Մանկավարժական խորհուրդը ձևավորված է 29 անդամից: Կանոնադրության համաձայն՝ Մանկավարժական խորհրդի նախագահը տնօրենն է:

Մանկավարժական խորհրդի հետ հանդիպման ժամանակ մանկավարժների կողմից եղել է առաջարկություն՝ ստեղծել Ինքնազարգացման և ինքնակրթության համար անհրաժեշտ կաբինետ, որը համալրված լինի ժամանակակակից համակարգչով, անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով և՛ թղթային, և՛ էլեկտրոնային տարբերակով: Մանկավարժների առաջարկությունը ներառված է դպրոցի զարգացման ծրագրում:

Մանկավարժական խորհրդի հրավիրված նիստերի ընթացքում քննարկվել է հետևյալ հարցերը.

- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան՝ ապահովելով նրանց կյանքը և առողջության պահպանումը
- Տնօրենի կողմից ներկայացված բյուջեի նախագծի քննարկումը

- Տնօրենի կողմից կազմած դպրոցի ներքին կարգապահական կանոնները, այդ թվում՝ սովորողների և աշխատակիցների վարքագծային կանոնները
- 120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների բացակայության մասին տեղեկատվությունը
- Տնօրենի, փոխտնօրենների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ներկայացված հաշվետվությունները
- Քննարկվել է ծնողական խորհդրի հետ համատեղ՝ սոցիալապես անապահով ընթանիքների երեխաներին անվճար հիմունքներով դասագրքերով ապահովելու ցուցակը
- Առարկայական մեթոդական միավորումների կողմից իրականացվող գործունեությունը
- Ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը, որակավորման տարակարգին
- Նպաստել ուսուցիչների՝ որպես ավագ, հմուտ, հետազոտող, վերապատրաստող և մենթոր ուսուցիչ դառնալուն
- Ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր

Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել

- Դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու
- Սովորողներին դասարանից դասարան փոխադրելու
- 120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողներին թույլատրելու մասնակցելու լրացուցիչ քննություններին
- Հավանաության տալ տնօրենի կողմից ներկայացված դպրոցի բյուջեի նախագծին
- Սովորողներին գովասանագրով պարգևատրելու
- Սովորողներին տարեվերջյան փոխադրական քննություններին թույլատրելու

- Դպրոցի շրջանավարտներին պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու
- Դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամանաքանակի բաշխման, այն տնօրենի հաստատմանը ներկայացման
- Դպրոցական բաղադրիչի բաշխումը դասավանդվող առարկաներին
- Նիստին ներկայացված տնօրենի, փոխտնօրենների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ներկայացված հաշվետվությունների մասով
- Իր կազմից կառավարման խորհրդի երկու անդամի ընտրության
- Կազմել և տալ տնօրենի հաստատմանը ծնողական խորհդրի հետ համատեղ՝ սոցիալապես անապահով ընթանիքների երեխաներին անվճար հիմունքներով դասագրքերով ապահովելու ցուցակը
- Դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Կանոնադրության դրույթներով ձևավորված մանկավարժական խորհուրդ • Տնօրենի, փոխտնօրենների, մեթոդական միավորումների կողմից ներկայացված հաշվետվությունների քննարկում • Սահմանված ժամկետներում նիստերի հրավիրում • Մանկավարժական խորհդրի նիստերում մասնակցային որոշումների կայացում • Մանկավարժական խորհդրի նիստերում բազմակարծության,	• Մանկավարժների ինքնուրույն նախաձեռնության պասիվություն • Կամավոր ատեստավորված մանկավարժներ չկան • Որակավորման տարակարգ ունեցող 1 ուսուցիչ • Ավագ, հմուտ, հետազոտող, վերապատրաստող և մենթոր ուսուցիչների բացակայություն

բազմազանության կարծիքների ներկայացման հարգալից վերաբերմունք • Խնդիրների լուծման և որոշումների կայացման ժամանակ մանկավարժների հանդուրժողականություն • Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովում • Մանկավարժական խորհրդի նիստերի անցկացում՝ առանց բուլլինգի դրսևորումների • Մանկավարժական խորհուրդը որպես մանկավարժների մասնագիտական զարգացման խթանող ուժ	

Նպատակ	• Մանկավարժական խորհրդի բոլոր անդամները՝ մասնագիտական զարգացման բարձր մակարդակով ուսուցիչներ • Ուսումնական գործընթացի խնդիրները ներկայացնող և նրա լուծումները առաջարկող մարմին

	• Ուսումնական գործընթացի իրականացման համար ինքնուրույն նախաձեռնություն և առաջադրանքների հստակ ներկայացում • Դպրոցում վերապատաստումների և դասընթացների կազմակերպում • Մանկավարժական խորհրդի նիստում ժողովրդավարական գործիքների ճիշտ կիրառում • Մանկավարժների մասնագիտական զարգացման նախաձեռնում • Մանկավարժների ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացում • Մանկավարժական խորհուրդը նորարարությունների, ՏՀՏ-ների, աշակերտակենտրոն, հետազոտական և նախագծային մեթոդների կիրառման խրախուսող • Դպրոցում ուսուցման ոլորում իրականացվող վերահսկողության մասնակից • Կրթության ոլորտի իրավական նորմերի իրազեկում
Խնդիր	• Որոշ մանկավարժների կողմից ՏՀՏ-ների կիրառության դժվարություններ • Նորարարությունների ընկալման դժվարություններ • Արագ փոփոխվող իրավական նորմեր • Անվստահություն իր անձի նկատմամբ
Իրականացվող գործողություն	• Վեր բարձրացնել ուսումնական գործընթացում առաջացող խնդիրները • Քննարկել վեր բարձրացված խնդիրների իրատեսական լուծումները

- Գնահատել ուսումնական գործընթացի առկա մակարդակը
- Բարելավել ուսումնական գործընթացի թերությունները և բացթողումները
- Նպաստել մանկավարժների կամավոր ատեստավորման և որկավորման տարակարգին մասնակցությանը
- Աջակցել մանակվարժների ինքնազարգացմանը և ինքնակրթությանը
- Աջակցել մանկավարժներին որպես ավագ, հետազոտող, վերապատրաստող, հմուտ և մենթոր ուսուցիչներ
- Աջակցել ուսուցիչներին սովորողների գնահատման նոր ձևերի և տեսակների կիրառմանը
- Նպաստել ուսուցիչներին սովորողների կողմից նախագծային և հետազոտական աշխատանքների արդյունավետ կատարման համար
- Ստեղծել միջավայր ժողովրդավարական գործիքների արդյունավետ կիրառման համար
- Կազմակերպել վերապատրաստումներ, դասընթացներ՝ ըստ անհրաժեշտության
- Աջակցել մանկավարժներին նոր մեթոդների, տեխնոլոգիաների յուրացմանը և դրանց նպատակային կիրառմանը
- Նպաստել ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողներին ուսուցման ընթացքում ութ կարողունակությունների ձևավորմանը:
- Օգնել տնօրենին ստեղծելու ինքնազարգացման և ինքնակրթության կաբինետը՝ համալրված ՏՀՏ-ներով և ուսումնամեթոդական ձեռնարկներով
- Նպաստել մանկավարժների կողմից նոր դասագրքերի

	քննարկմանը • Աջակցել ՏՀՏ-ների իմացության և կարողունակության զարգացմանը • Պարբերաբար իրազեկել մանկավարժներին կրթության ոլորտում կատարվող օրենսդրական փոփոխությունները
Պատասխանա-տուներ	• Տնօրեն
Կատարման ժամկետներ	Նշված բոլոր նպատակները և դրանց իրականացման գործողությունները չեն կարող լինել կոնկրետ ժամանակային սահմանների մեջ, քանի որ կրթությունը զարգացող է, իրավական նորմերը անընդատ փոփոխվող են, ուստի այդ ամենը կլինի որպես ուղեցույց և կիրականացվեն առաջիկա 5 տարիների ընթացքում
Ռիսկեր	• Ֆորսմաժորային իրավիճակ • Մանկավարժների սոցիալական վիճակ • Մանկավարժների առողջական վիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Խրախուսել և աջակցել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի և մասնագիտական զարգացման, որի արդյունքում կլինեն հավելավճարներ և կբավարարվի նրանց սոցիալական վիճակը • Ֆորսմաժորային իրավիճակների համապատասխան՝ կազմակերպել համապատասխան գործողություններ
Ակնկալվող արդյունքներ	• Առաջատար դպրոց • Մասնագիտական զարգացած բարձր մակարդակ ունեցող ուսուցիչներ • Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ

	• Որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչներ • Ժողովրդավարական կարողունակություններով ձևավորված ուսուցիչներ • Ավագ, հմուտ, վերապատրաստող, հետազոտող, մենթոր ուսուցիչներ • Համերաշխ մանկավարժական համակազմ
Գնահատման չափանիշներ	• Ներկայացված նպատակների իրականացման համար ոչ մի գործողություն կատարված չէ –անբավարար • Իրականացված աշխատանքների արդյունքում կան ինքնազարգացած և ինքնակրթված, որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչներ – բավարար • Իրականացման աշխատանքների արդյունքում ՏՀՏ-ների և նոր մեթոդների արհեստավարժ կիառություն, կամավոր ատեստավորված ուսուցիչներ - լավ • Նպատակներին համապատասխան իրականացված աշխատանքները կատարված են 80 %-ից ավել - գերազանց
Վերահսկողություն	• Տնօրեն

Առարկայական մեթոդական միավորում

Ուսումնական գործունեությունը կազմակերպելու և դասավանդող ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու համար դպրոցում ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ: Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ:

Դպրոցի կանոնադրության համաձայն՝ առարկայական մեթոդական միավորումները

ստեղծվում են նույն առարկայի կամ հարակից առարկաների 3 և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Դպրոցի բոլոր ուսուցիչների առարկայական մեթոդական միավորներում ընդգրկվածությունը պարտադիր է: Կարող են նաև ձևավորվել տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ միջդպրոցական մեթոդական միավորումներ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Առարկայական մեթոդական միավորումն իր կազմից ընտրում է նախագահ:

Առարկայական մեթոդական միավորումների գործունեության սկզբունքն ու նպատակն է նաև՝ խթանել ուսուցիչների ներուժի և նրանց ստեղծագործական ունակության զարգացմանը, ինչպես նաև առաջնորդել նրանց զարգացնելու ժամանակակից ՏՀՏ-ների և նոր մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման կարողունակությունները:

Արագ զարգացող կրթությունն իր հետ բերում է նոր պահանջներ, ուստի ուսուցիչը պետք է զարգացնի այնպիսի ունակություններ և կարողունակություններ, ձեռք բերի այնպիսի գիտելիքներ, որոնց արդյունքում ուսուցիչները կունենան մասնագիտական զարգացման այնպիսի որակներ, որը ապահովում է նրանց կոմպետենտությունը, նորությունները ընկալելու ունակությունը, նախաձեռնողականություն ստանձնելու պատրաստակամությունը խնդիրները վեր բարձրացնելու և դպրոցի առանձնահատկություններին և հնարավորություններին համապատասխան լուծումներ տալուն:

Ուստի առարկայական մեթոդական միավորումներից վրա դրված են ժամանակին համարժեք պահանջներ: Կարևոր է, որ նրանց կողմից մանկավարժներին ներկայացվեն արդյունավետ փորձը, նոր տեխնոլոգիաների կիրառության հմտությունները, ընտրվեն համագործակցային արդյունավետ ուղիները, որոնց հիմքով կձևավորվի վարքագիծ՝ արդյունավետ ուսուցման կազմակերպման համար:

Դպրոցում գործում է առարկայական չորս մեթոդական միավոր



Ուսումնական տարվա ընթացքում մեթոդական միավորումները քննարկել են հետևյալ ընդհանուր հարցերը, այդ թվում՝

- Առարկայական թեմատիկ պլանների կազմում
- Օրվա դասի պլանի կազմում
- Դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման առաջարկությունների քննարկում և ներակայցում մանկավարժական խորհրդին
- Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում՝ տնօրենին առաջարկության ներկայացման համար
- Ներդպրոցական առարկայական մրցույթների կազմակերպում
- Առարկայական օլիմպիադաների մասնակցություն
- Բաց դասերի կազմակերպում
- Միջոցառումներ կազմակերպում
- Կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի՝ ուսուցիչների ակտիվ մասնակցություն
- Ավագ, հմուտ, վերապատրաստող, հետազոտող և մենթոր ուսուցիչներ դառնալու խրախուսում

- Մասնակցային որոշումների կայացում
- Նոր դասագրքերի քննարկումներին ակտիվ մասնակցություն

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Դպրոցում գործում է 4 մեթոդական միավորում • Նիստերը հրավիրվում են յուրաքանչյուր ամիսը 1 անգամ և՛ նախագահի, և՛ տնօրենի նախաձեռնությամբ • Կազմվում են առարկայական թեմատիկ պլաններ՝ կրթական ծրագրերին համապատասխան • Քննարկվում է նախնական դասաբաշխման հարցը և ներկայացվում առաջարկություններ տնօրենին • Մանկավարժական խորհդրին դպրոցական բաղադրիչի մասով ներկայացնում իր առաջարկությունները • Քննարկում է սովորողների կրթական կարիքները • Իրականացնում պարապունքներ սովորողների հետ առարկայական	• Կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն , • Որակավորման տարակարգ ունեցող 1 ուսուցիչ • Ավագ, հմուտ, հետազոտող, վերապատրաստող և մենթոր ուսուցիչների բացակայություն • Նոր դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների քննարկումների մասնակցության բացակայություն • Վերապատրաստող ուսուցիչների բացակայություն • Ինքնազարգացման և ինքնակրթության մոտիվացիայի և անհրաժեշտ պայմանների պակաս

	օլիմպիադաներում մասնակցության համար • Ներդպրոցական առարկայական մրցույթների կազմակերպում • Միջոցառումների, բաց դասերի կազմակերպում

Նպատակ	• Մասնագիտական զարգացած մանկավարժներ • Առարկայական թեմատիկ արդյունավետ պլանների կազմում • Օրվա դասի արդյունավետ պլանների կազմում • Դպրոցական բաղադրիչի ժամերի կիրառման հիմնավոր առաջարկությունների ներկայացում • Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և տնօրենին արդյունավետ առաջարկության ներկայացում • Պարբերաբար ներդպրոցական առարկայական մրցույթների կազմակերպում • Առարկայական օլիմպիադաների ակտիվ մասնակցություն • Բաց դասերի կազմակերպում՝ ՏՀՏ-ների և նոր մեթոդների միջոցով • Տարաբնույթ միջոցառումներ կազմակերպում • Խթանում ուսուցիչներին կամավոր ատեստավորման,

	որակավորման տարակարգի ակտիվ մասնակցությանը • Աջակցում ուսուցիչներին ավագ, հմուտ, վերապատրաստող, հետազոտող և մենթոր ուսուցիչներ դառնալու • Ժողովրդավարական սկզբունքների ներդրում նիստերի ժամանակ • Աջակցել նոր դասագրքերի քննարկումներին ակտիվ մասնակցությանը • Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում • Նպաստել սովորողներին մասնագիտական կողմնորոշման համար
Խնդիր	• Թերահավատություն իրենց անձի նկատմամբ մասնակցելու կամավոր ատեստավորմանը • Նիստերի ընթացքում քննարկումների մասնակցության պասիվություն • Ինքնուրույն նախաձեռնությունների պակաս • Առաջավոր փորձի, նոր մեթոդների, տեխնոլոգիաների փոխանակման հարցում դժվարություններ
Իրականացվող գործողություն	• Նպաստել ուսուցիչների կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի ակտիվ մասնակցությանը • Օգնել տնօրենին ստեղծելու ինքնազարգացման և ինքնակրթության համար անհրաժեշտ պայմաններ • Ներդնել ժողովրդավարական գործիքների արդյունավետ օգտագործումը • Արժևորել ուսուցիչների կատարած աշխատանքները և

	ներկայացնել տնօրենի խրախուսմանը • Խթանել ուսուցիչներին ավագ, հմուտ, վերապատրաստող, հետազոտող և մենթոր ուսուցիչներ դառնալու համար • Մասնակցել մանկավարժական խորհդրի կողմից կազմակերպվող ըստ անհրաժեշտության վերապատրաստումների և դասընթացների • Նպաստել ուսուցիչների ՏՀՏ-ների կիրառման կարողունակությունների զարգացմանը • Մասնակիցը լինել մեդիագրագիտության զարգացմանը • Կազմակերպել ներդպրոցական առարկայական մրցույթներ, ակտիվ մասնակցել առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցությանը • Կազմակերպել աշխատանքներ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ • Աջակցել առաջավոր փորձի տարածումը • Նպաստել ուսուցիչների՝ նոր դասագրքերի քննարկմանը • Ապահովել փոխադարձ դասալսումներ • Պարբերաբար իրազեկել ուսուցիչներին նորմատիվ իրավական ակտերին • Աջակցել ուսուցիչներին արտադասարանական խմբակների արդյունավետ պարապունքների կազմակերպման համար • Նպաստել սովորողների մասնագիտական կողմնորոշմանը
Պատասխանա-տուներ	• Մեթոդական միավորումների նախագահներ • Մանկավարժներ

Կատարման ժամկետներ	Նշված բոլոր նպատակները և դրանց իրականացման գործողությունները չեն կարող լինել կոնկրետ ժամանակային սահմանների մեջ, քանի որ կրթությունը զարգացող է, իրավական նորմերը անընդատ փոփոխվող են, ուստի այդ ամենը կլինի որպես ուղեցույց և կիրականացվեն առաջիկա 5 տարիների ընթացքում
Ռիսկեր	• Ներանձնային հարաբերություններ • Նորարարությունների դժվար ընկալում
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Կազմակերպել խորհրդատվություններ նոր մեթոդների, տեխնոլոգիաների ընկալման և կիրառման համար • Կարևորել ուսուցիչների կատարած արդյունավետ աշխատանքը • Ապահովել ուսուցիչների համերաշխ համագործակցությունը • Պարբերաբար ուսուցիչներին իրազեկել ուսուցման գործընթացը կազմակերպելու վերաբերյալ իրավական ակտերի փոփոխությունները
Ակնկալվող արդյունքներ	• Առարկայական մեթոդական միավորումների արդյունավետ աշխատան • Սովորողների ուսման բարձր որակ • Առարկայական մեթոդական միավորումները որպես ուսուցիչների ներուժը զարգացնող միավոր
Գնահատման չափանիշներ	• Ներկայացված նպատակների իրականացման համար ոչ մի գործողություն կատարված չէ –անբավարար • Իրականացված աշխատանքների արդյունքում կան ինքնազարգացած և ինքնակրթված, որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչներ – բավարար • Իրականացման աշխատանքների արդյունքում ՏՀՏ-ների

	և նոր մեթոդների արհեստավարժ կիառություն, կամավոր ատեստավորված ուսուցիչներ - լավ • Նպատակներին համապատասխան իրականացված աշխատանքները կատարված են 80 %-ից ավել - գերազանց
Վերահսկողություն	Տնօրեն

Ծնողական խորհուրդ

Ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպման մասնակից է նաև դպրոցի ծնողական խորհուրդը, որը համարվում է որպես ինքնակառավարվող մարմին: Ծնողական խորհուրդը դպրոցում ներկայացնում է սովորողների ընտանիքների շահերը:

Դպրոցի կանոնադրության համաձայն՝ դասարանների ծնողական խորհուրդները (կազմված նախագահից և 2-ից 4 անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ՝ ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է: Դպրոցի ծնողական խորհուրդը իր կազմից ընտրել է դպրոցի կառավարման խորհրդի երկու անդամ:

Դպրոցի ծնողական խորհրդի նպատակն է համախմբել ծնողներին և մասնակիցը դարձնել դպրոցում իրականացվող ուսումնական գործընթացի բարելավմանը, ինչպես նաև ծնողական համայնքի և դպրոցի համագործակցության ապահովմանը:

Ծնողական խորհրդի նպատակն է նաև ծնողական համայնքի ներուժի ներդնումը ի

շահ սովորողի և դպրոցի զարգացմանը:

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմված է 9 անդամից:

Ծնողական խորհրդի հետ հանդիպման ժամանակ եղել է առաջարկություն՝ տեղադրել լոկալ ջեռուցման համակարգ:

Ծնողական խորհրդի նիստերում քննարկվել են հետևյալ հարցերը

- Ծնողների ակտիվ ներգրավվածությունը արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին
- Ծնողների անմիջական մասնակցությունը Ուսումնական և դաստիարակության գործընթացներին
- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին օգնության վերաբերյալ
- Միջոցառումներին ծնողների ակտիվ մասնակցությանը վերաբերվող հարցեր
- Սովորողների անվտանգության և իրավունքների պաշտպանության հարցը
- Ծնողական համայնքի հնարավորության սահմաններում ֆինանսական միջոցների ներդրման հարցը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Կանոնադրության համաձայն՝ ծնողական խորհրդի նիստերի կանոնավոր գումարում • Ծնողական խորհրդի ակտիվ մասնակցությունը արտադասարանական և արտադպրոցական	• ԾԽ-ի նախաձեռնությունների և առաջարկությունների քիչ թիվ

	աշխատանքներին, միջոցառումներին • ԾԽ համագործակցությունը ԱԽ, ՄԽ, ԿԽ-ի հետ • Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ցուցակի կազմում՝ անվճար դասագրքեր տալու նպատակով • Ծնողական համայնքի հնարավորության սահմաններում ֆինանսական միջոցների նպատակային ներդրում • Մասնակցային որոշումների կայացում

Նպատակ	• Ծնողական խորհրդի մասնակցությունը սովորողների պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում • Ծնողական համայնքի մասնակցությունը դպրոցական տարիքի երեխաներին ուսուցման մեջ ընդգկելուն • Ծնողական համայնքի կողմից առաջարկությունների ներկայացում դպրոցի տնօրենին • ԾԽ-ի անմիջական մասնակցություն ուսումնական գործընթացի վերահսկողությանը • Համայնք-դպրոց համագործակցության ապահովում

	• Ծնողական խորհուրդը որպես երեխաների իրավունքների պաշտպան • Ծնողական խորհդրի և համայնքի մասնակցությունը դպոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին, հանդիպումներին և աշխատանքներին • Համագործակցության շարունակականության ապահովում ՄԽ, ԿԽ, ԱԽ-ի հետ
Խնդիր	• Դպրոցի ծնողական խորհրդի փոքրաթիվ կազմ • Որոշ ծնողների անտարբերություն
Իրականացվող գործողություն	• Լսելի դարձնել ծնողների կողմից բարձրաձայնված առաջարակությունները դպրոցի տնօրենին • Նպաստել ծնողական համայնքի մասնակցությանը սովորողների պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում • Նպաստել ծնողական համայնքի մասնակցությունը ուսումնական գործընթացի վերահսկողությանը • Աջակցել ծնողական համայնքին ֆինանսական միջոցների նպատակային ներդրմանը • Նպաստել դպրոցում բարոյահոգեբանական միջավայրի պահպանմանը • Աջակցել երեխաների իրավունքների պաշտպանությանը
Պատասխանա-տուներ	ԾԽ նախագահ
Կատարման ժամկետներ	Նշված բոլոր նպատակները և դրանց իրականացման գործողությունները չեն կարող լինել կոնկրետ ժամանակային սահմանների մեջ, քանի որ կրթությունը զարգացող է, իրավական նորմերը անընդատ փոփոխվող են,

	ուստի այդ ամենը կլինի որպես ուղեցույց և կիրականացվեն առաջիկա 5 տարիների ընթացքում
Ռիսկեր	• Ընտանիքների միգրացիա • Ընտանիքի սոցիալական ծանր վիճակ
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• Հնարավորության սահմաններում ծնողական համայնքի միջոցով ցուցաբերել աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին • Ցուցաբերել աջակցություն դպրոցը դարձնելու որպես մշակութային, մարզական կենտրոն
Ակնկալվող արդյունքներ	• Ինքնուրույն նախաձեռնող ԾԽ • Ակտիվ մասնակցություն դպրոցում իրականացվող ուսումնական և դաստիարակության գործընթացներին • Ծնողական խորհրդի արդյունավետ աշխատանք • Ծնողական խորհրդի մասնակցություն դպրոցում իրականացող միջոցառումների կազմակերպմանը • Ծնողական համայնքի կողմից կամավոր ներդրումների շարունակականություն
Գնահատման չափանիշներ	• Ծնողական խորհուրդը ձևավորված է , սակայն ոչ մի գործողություն կատարված չէ –անբավարար • Ծնողական խորհուրդը և համայնքը համագործակցում են դպրոցի հետ՝ բավարար • Ծնողական խորհուրդը ակտիվ համագործակցում է ԱԽ-ի, ՄԽ-ի, ԱԽ-ի հետ և ներկայացնում է առաջարկություններ - լավ • Ծնողական խորհուրդը ակտիվ համագործակցում է ԱԽ-ի, ՄԽ-ի, ԱԽ-ի հետ և ներկայացնում է առաջարկություններ, ինչպես նաև ԾԽ-ի աջակցությամբ ծնողական համայնքի կողմից կատարվել են ներդրումներ - գերազանց

Վերահսկողություն	• Ծնողական խորհդրի նախագահ

Աշակերտական խորհուրդ

Դպրոցում աշակերտական խորհուրդը ինքնակառավարվող մարմին է: Ուսումնական տարվա առաջին աշակերտական ժողովը հրավիրվում է և նախագահում է դպրոցի տնօրենը, որի ընթացքում էլ սահմանվում են աշակերտական խորհրդի աշխատակարգը: Աշակերտական խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դասղեկները: Այն հիմնական դպրոցում ձևավորվում է 6-9 դասարաններում ձևավորված դասարանական աշակերտական խորհուրդների 2 անդամներից: Աշակերտական խորհուրդն իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է խորհդրի նախագահ:

Աշակերտական խորհդրի գործունեության հիմնական սկզբունքը սովորողների իրավահավասարությունն է:

Աշակերտական խորհրդի նպատակն է՝ աջակցել դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացներին: Աշակերտական խորհուրդը կազմում է ուսումնական տարվա համար աշխատանքային պլան և ըստ իր պլանի՝ իրականացնում տարաբնույթ միջոցառումներ, մասնակցում խոշորացված համայնքի կողմից նախաձեռնած շաբաթօրյակներին, նախագծերին, միջոցառումներին, իրականացնում դպրոցում մանկավարժների հետ միասին հերթապահություն: Անհրաժեշտության դեպքում մասնակցում է մանկավարժական խորհդրի նիստերին, երբ քննարկվում է կոնկրետ սովորողի մասի հարց(եր): Մասնակցում է նաև երեխաների պաշտպանությանը՝ հանդես գալիս ի շահ սովորողի:

Դպրոցի աշակերտական խորհուրդը նպաստում է բոլոր սովորողներին կրթական, դաստիարակչական գործընթացների կազմակերպմանը ներգրավվելուն: Աշակերտական խորհուրդը համագործակցում է տնօրենության, ծնողական խորհրդի և ուսուցիչների հետ:

Տարեսկզբին աշակերտական խորհուրդը ձևավորում է հանձնախմբեր և ըստ

հանձնախմբի բովանդակության՝ իրականացնում համապատասխան գործողություններ և միջոցառումներ:

Աշակերտական խորհրդի գործունեության բովանդակությունը հնարավորություն է տալիս սովորողներին համամբվելու, ինչպես նաև ձևավորում է կարողունակություն ընտրելու, ընտրվելու և կառավարելու:

Աշակերտական խորհրդի հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է առաջարկություն ընթերցասրահը վերազինել համակարգչով և էլեկտրոնային գրատախտակով՝ դարձնել որպես սովորողների ինքնազարգացման և ինքնակրթության կենտրոն:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
• Օրենքով, Կարգով սահմանված աշակերտական խորհուրդ • Ձևավորված հանձնախմբեր • Աշակերտական խորհրդրի համագործակցություն ԾԽ-ի և ՄԽ-ի հետ • Աշակերտական խորհրդի մասնակցություն սովորողների ուսումնական և դաստիարակության գործընթացներին • Աշակերտական խորհդրի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումների, մրցույթների միջոցով սովորողների	• Որոշ սովորողների կողմից աշակերտական խորհդի գործունեության նկատմամբ պասիվություն • Ինքնուրույն նախաձեռնության պակաս

կարողունակությունների ձևավորում

Նպատակ	• Ուսուցման և դաստիարակության գործընթացներին անմիջական ներգրավում • Ժողովրդավարական կարողությունների ձևավորում • Սովորողների ներուժի բացահայտում, զարգացում • Համայնքին, մարզին, պետությանը նվիրված անհատի ձևավորում • Համակողմանի զարգացած անհատ • Մասնագիտական կողմնորոշման դիրքորոշում • Սովորողների ինքնազարգացման և ինքնակրթության աջակցում • Առարկայական օլիմպիադաների ակտիվ մասնակցության աջակցում • Սովորողների իրավունքների պաշտպանում
Խնդիր	• Սովորողի անհատական բնավորություն • Սովորողների հետաքրքրությունների • ԱԽ-ի գործունեության նկատմամբ պասիվություն • Ինքնուրույն նախաձեռնությունների պակաս
Իրականացվող գործողություն	• Նպաստել սովորողների անմիջական մասնակցությունը ուսումնական և դաստիարակության գործընթացներին • Ապահովել սովորողների ժողովրդավարական կարողությունների ձևավորումը՝ միջոցառումների միջոցով

	• Կազմակերպել արտադասարանական տարաբնույթ աշխատանքներ սովորողների ներուժի բացահայտման և զարգացման համար • Նպաստել Համայնքիային, մարզային կառույցների հետ՝ համատեղ միջոցառումներ կազմակերպելու համար • Սովորողներին ընդգրկել ձևավորված հանձնախմբերում և իրականացնել աշխատանքներ սովորողների համակողմանի զարգացման համար • Աջակցել սովորողներին մասնագիտական կողմնորոշման համար կազմակերպվող միջոցառումների միջոցով • Օգնել տնօրենին սովորողների ինքնազարգացման և ինքնակրթության՝ ընթերցասրահում պայմանների ստեղծման համար • Աջակցել արտադասարանական խմբաների պարապունքներին սովորողների առարկայական օլիմպիադաներին մասնակցության համար • Համագործակցել տնօրինության հետ՝ սովորողների իրավունքների պաշտպանության համար
Պատասխանա-տուներ	Աշակերտական խորհդրի նախագահ
Կատարման ժամկետներ	Նշված բոլոր նպատակները և դրանց իրականացման գործողությունները չեն կարող լինել կոնկրետ ժամանակային սահմանների մեջ, քանի որ կրթությունը զարգացող է, իրավական նորմերը անընդատ փոփոխվող են, ուստի այդ ամենը կլինի որպես ուղեցույց և կիրականացվեն առաջիկա 5 տարիների ընթացքում

Ռիսկեր	• Սովորողների անհատական բնավորության գծերը
Ռիսկերը մեղմացնող գործողություններ	• **Համագործակցել տնօրինության հետ՝ վերահսկողություն իրականացնելու համար** • Ստեղծել հանդուրժողականության միջավայր • Կազմակերպել անհատական զրույցներ սովորողի և նրա ծնողի հետ
Ակնկալվող արդյունքներ	Ըստ Հանրակրթության մասին օրենքի՝ ԱԽ նպատակն է ձևավորել՝ • հայրենասեր • պետականամետ • համակողմանիորեն զարգացած • մարդասիրության ոգով դաստիարակված • մասնագիտական կողմնորոշում ունեցող սովորող
Գնահատման չափանիշներ	• Չնավորված աշակերտական խորհուրդ՝ առանց որևէ գործունեության իրականացման - անբավարար • Չնավորված խորհուրդ և ձևավորված հանձնախմբեր - բավարար • Չնավորված խորհուրդը համագործակցելով հանձնախմբերի հետ կազմակերպում է միջոցառումներ, մրցույթներ - լավ • Չնավորված խորհուրդը համագործակցելով հանձնախմբերի հետ կազմակերպում է միջոցառումներ, մրցույթներ, համագործակցում տնօրինության ՄԽ-ի , ԾԽ-ի և ծնողական համայնքի հետ, ինչպես նաև ներկայացնում է առաջարկություններ – գերազանց
Վերահսկողություն	• Տնօրեն

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Դպրոցի զարգացման ծրագրում մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ և արդյունավետ օգտագործումը

Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող աղյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները բավարար են և նպատակային

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման հիմքում կարևոր է ունենալ զարգացման ծրագրում ներառված բոլոր ոլորտների համապարփակ վերլուծությունները, որոնց արդյունքում դուրս բերված անհրաժեշտ բաղադրիչների, ռեսուրսների, եթե առկա է խնդիր, ապա դրանց արդյունավետ լուծումների շնորհիվ էլ հնարավոր կլինի իրականացնել զարգացման ծրագրում ամրագրված յուրաքանչյուր ոլորտի զարգացման նպատակները սովորողների կրթական կարիքներին համապատասխան, հետևաբար և՝ իրականացնել զարգացման ծրագիրը:

Զարգացման ծրագրի մշակման այս բաժնի պահանջի մեկնաբանությունները ներկայացվում են նախորդ բաժիններում կատարված վերլուծությունների միջոցով:

Շենքային պայմաններ

Շենքն ամբողջությամբ սեյսմակայուն է, համապատասխանում է անվտանգության նորմերին: Շենքը մասսամբ վերանորոգված է, տանիքը՝ հիմնանորոգված, փոխված են դռներն ու պատուհանները, ունի պահուստային ելքեր: Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ, որպես դահլիճ՝ ծառայում է շենքի երկրորդ հարկի միջանցքի որոշակի հատված, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է շենքին կից կառուցել ևս մեկ շենք, որտեղ կտեղակայվի հանդիսությունների դահլիճը: Դպրոցը ջեռուցվում է

էլեկտրական մարտկոցների միջոցով, սակայն կարևոր է, որ դպրոցը ունենա լոկալ ջեռուցում՝ առանձնացված կաթսայատնով:

Շենքն իր նախատեսված հզորությամբ և ներկայիս վիճակով համապատասխանում է սովորողների թվին և նրանց համար իրականացվող կրթական ծրագրերին, չնայած կան որոշակի շեղումներ, մասնավորապես՝

* Երկրորդ հարկում բացակայում են սանհանգույնցերը, սակայն առաջին հարկի 3 սանհանգույցներ (տղաների, աղջիկների և աշխատակիցների) վերանորոգված և սանտեխնիկայով կահավորված վիճակը բավարար է
* Դպրոցը ի սկզբանե չի ունեցել հանդիսությունների դահլիճ, սակայն երկրորդ հարկի միջանցքի 20 մ² առանձնացված տարածքում կառուցվել է բեմ, ինչի շնորհիվ այդտեղ կազմակերպվում են միջոցառումներ: Դպրոցում առկա աթոռների թիվը բավարարում է հանդեսատեսի ներկայությունը ապահովելու համար
* Դպրոցը դեռ չունի թեքահարթակ և ԿԱՊԿՈՒ սովորողների համար շենքի ներսում հարմարեցումներ

Անհրաժեշտ գործողություններ

Պլանավորել շենքին կից նոր մասնաշենքի կառուցումը - այն կարող է կառուցվել ինչպես պետական բյուջեի միջոցներով, այնպես էլ՝ բարերարների ներդրումների շնորհիվ:

Թեքահարթակների կառուցում – այն կարող է կառուցվել դպրոցի ֆինանսական միջոցների խնայողությունների հաշվին:

Լոկալ ջեռուցման տեղադրում - այն կարող է կառուցվել ինչպես պետական բյուջեի միջոցներով, այնպես էլ՝ բարերարների ներդրումների շնորհիվ:

Նյութատեխնիկական բազա

Դպրոցում առկա է նյութատեխնիկական բազա հանդիսացող որոշ քանակությամբ համակարգիչներ, 2 տեսացրիչ, 1 էկրան, Ֆիզիկայի, Քիմիայի լաբորատորիաների և կաբինետների անհրաժեշտ որոշ քանակությամբ տեխնիկական սարքեր, նյութեր, ինչպես նաև Աշխարհագրության, Ինֆորմատիկայի, Պատմության, ՆԶՊ-ի շախմատի առարկաների կաբինետների համապատասխան որոշ քանակության պարագաներ: Առկա է նաև որոշ

քանակությամբ սպորտային գույք: Ընդհանուր առմամբ՝ դպրոցում կրթական ծրագրերի իրականացման համար ուսուցիչների կողմից կիրառվում է առկա նշված նյութատեխնիկական բազան: Առկա է համապատասխանության որոշակի շեղում, քանի որ նյութատեխնիկական բազան ունի համալրման և արդիականացման կարիք:

Դպրոցումա առկա է նաև անվտանգության համար հակահրդեհային 3 կրակմարիչ և պատ-վահանակ՝ համապատասխան գործիքներով:

Անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է դպրոցում տեղադրել տեսախցիկներ:

Անհրաժեշտ գործողություններ

Վերլուծության մեջ ներկայացված կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտ նյութատեխնիկական բազան բաղադրիչները կհամալրվեն և կարդիականացվեն պետական բյուջեի ֆինանսական միջոցների խնայողությունների և բարերաների, կազմակերպությունների հետ համագործակցությունների շարունակականության ապահովման, ինչպես նաև նոր համոգործակցությունների միջոցով նպատակային ներդրումների արդյունքում:

Ենթակառուցվածքներ

Դպրոցում գործում են ֆիզիկայի, քիմիայի կաբինետ, լաբորատորիաներ, պատմության, աշխարհագրության, ՆԶՊ-ի, շախմատի, ինֆորմատիկայի կաբինետներ, 9 դասասենյակ, մարզադահլիճ, մարզահրապարակ, գրադարան, որոնց միջոցով իրականացվում են կրթական ծրագրերը:

Նշված տվյալների հիման վրա կարելի է կատարել հետևյալ վերլուծությունը, որ դպրոցում առկա ենթակառուցվածքների, այդ թվում՝ դասասենյակներ, առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ, բուժկետ, գրադարան, աշխատասենյակներ, մարզադահլիճ և մարդկային ռեսուրսների, այդ թվում՝ առարկաները դասավանդող ուսուցիչներ, գրադարանավար, լաբորանտ, միջև կա համապատասխանություն, բացառությամբ՝

* Դպրոցը չունի տեխնոլոգիայի, լինգոֆոնիայի, Երգ-երաժշտության կաբինետներ, սակայն դասերն անցկացվում են դասասենյակներում:

* Դպրոցը չունի արհեստանոց՝ տարածքի պատճառով:

Դպրոցն ունի գրադարան, որտեղ աշխատում է համապատասխան կրթության գրադարանավար:

Համապտասխանության շեղում կա մարդկային ռեսուրսների մասով, այդ թվում՝ ֆիզիկայի և քիմիայի լաբորանտը 1 աշխատակից է, բուժաշխատողը դպրոցում է համատեղության կարգով, չկա ՄԿԱ-ի գծով տնօրենի տեղակալ:

Դպրոցն անհրաժեշտության դեպքում կարող է ապահովել սովորողների և աշխատակիցների անվտանգությունը, քանի որ նկուղը հարմարեցված է որպես ապաստարան:

Ջրամատակարարման մասով, ենելով տարածաշրջանի պայմաններից, կա շեղում, այն է՝ շուրջօրյա չէ, ջուրը պահեստավորվում է հատուկ տարաներում (բաքերում), ինչ միջոցով հնարավոր է լինում բավարարել դպրոցի կարիքները:

Դպրոցում գազամատակարարում չկա:

Դպրոցն ունի նաև ինտերնետ հասանելիություն, իսկ հեռախոսակապի միջոց է ծառայում բջջային կապը:

Դպրոցի զարգացման ծրագրում մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ և արդյունավետ օգտագործման մասով պետք է արձանագրել՝ ԴԶԾ-ում յուրաքանչյուր ոլորտի վերուծություն ցույց է տալիս, որ յուրաքնաչյուր ոլորտում առկա մարդկային ռեսուրսը բավարարում է ոլորտի գործառույթները իրականացնելու համար, նրանց համապատասխան՝ բավարարում են ֆինանսական միջոցները՝ աշխատավարձի տեսքով, իսկ նրանց գործունեությունը իրականացնելու համար բավարարում են անհրաժեշտ տեխնոլոգիական ռեսուրսները, սակայն կա որոշակի համալրման և արդիականացման խնդիր: Դպրոցին կից նոր մասնաշենքի կառուցմամբ և պետական բյուջեի լրացուցիչ ֆինանսավորմամբ, ֆինանսական

միջոցների խնայողությունների, ինչպես նաև բարերարների հետ շարունակական համագործակցությունների արդյունքում հնարավոր կլինի լրացնել շեղումը:

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները

Համաձայն դպրոցի կանոնադրության՝ Դպրոցի կառավարման խորհուրդը վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունը և տալիս եզրակացություն:

Որպեսզի զարգացման ծրագրի իրականացման մասով կառավարման խորհուրդը տա եզրակացություն, տնօրենը պետք է ներկայացնի հաշվետվություններ, իսկ այդ հաշվետվությունների համար հիմք պետք է հանդիսանան ոլորտներում իրականացվող գործողությունների վերլուծությունները, դրանց հիմքով՝ վերահսկողության մեխանիզմները և այդ գործողությունների համար նախատեսված հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցերը:

Շենքային պայմաններ, Ենթակառուցվածքներ, Նյութատեխնիկական բազա, Ֆինանսական միջոցներ, մարդկային ռեսուրսներ – այս ոլորտներում (ամբողջական վերլուծություն արված են նախորդ բաժիններում) հնարավոր գործողությունները, այդ թվում՝ նոր կից մասնաշենքի կառուցումը, նոր ենթակառուցվածքների տեղակայումը, վերանորոգման աշխատանքները, նյութատեխնիկական բազայի համալրումը, ձեռքբերումը, գույքի ձեռքբերումն ու օտարումը, ջեռուցման համակարգի տեղադրումը, սպասարկող անձնակազմի անդամներին ընդունելն ու ազատելը, աշխատավարձի վճարումը նոր Կարգի համաձայն՝ տեղի է ունենում Համակարգողի վերահսկողության ներքո: Այս ոլորտում դպրոցի տնօրենը կրթական ծրագրերի իրականացման համար ներկայացնում է անհրաժեշտ կարիքները, քննարկում համակարգողի հետ, վերջինս էլ ներկայացնում լիազորված մարմնի քննարկման և որոշման կայացմանը: Ուստի այս մասով

կառավարման խորհրդին տնօրենի կողմից ներկայացված հաշվետվության մեջ մաս պետք է կազմի համակարգողի կողմից իրականացված գործողությունները փաստող տվյալները: Վերը նշված ոլորտներում անհրաժեշտ գործողությունների իրականացման համար ժամանակացույցի իմ՝ որպես տնօրենի հավակնորդի տարբերակը նշված է յուրաքանչյուր ոլորտի վերլուծության մեջ:

Ուսումնական և դաստիարակության ոլորտ:

Ուսումնական ոլորտում նախատեսվող գործողությունները դրանք կրթական ծրագրերի իրականացումներն են, որոնք կատարում են ուսուցիչները, ովքեր պարբերաբար ներկայացնում են կատարողականի հաշվետվություններ: Ուսուցիչների կատարողականը անմիջապես վերահսկվում է առարկայական մեթոդական միավորումների նախագահների կողմից, որի հիմքով էլ նրանք են ներկայացնում հաշվետվություններ: Այդ բոլորի հիմքով էլ հաշվետվություն է պատրաստում տնօրենի տեղակալը:

Դաստիարակության ոլորտ:

Այս ուսումնական ոլորտում արտադասարանական խմբակների, երկարօրյա խմբերի ուսուցման, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների մասով կազմակերպվող աշխատանքները իրականացվում են ուսուցիչների, դասղեկների, արտադասարանական խմբակների խմբավարների, երկարօրյա խմբերի ուսուցումը կազմակերպող մանկավարժների միջոցով, որոնք պարբերաբար ներկայացնում են հաշվետվություններ ՄԿԱ-ի գծով տնօրենի տեղակալին (նոր Կարգի համաձայն՝ ԿԱԴԱՀ-ին): Վերջինս էլ այս ամենի հիմքով էլ ներկայացնում է հաշվետվություններ տնօրենին:

Տնօրենը միայն այս ամենից հետո և այդ ամենի հիմքով է կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման մասով հաշվետվություններ և ներկայացնում Կառավարման խորհրդին՝ վերջինիս և տնօրենի միջև հաստատված ժամանակացույցի:

Վերահսկողությունը իրականացվում է մշտադիրտարկման միջոցով, որը բաժանվում է մի քանի փուլերի: Մշտադիտարկում կիրականացվի՝ հիմք ընդունելով

դպրոցի ներքին վերահսկողության արդյունքները, ինչպես նաև հիմք կարող է հանդիսանալ ներքին գնահատումը:

Սկզբնական փուլ – մինչև ուսումնական պարապունքների սկսվելը – մինչև օգոստոսի 31-ը

Ընթացիկ փուլ – առաջին և երկրորդ կիսամյակների ավարտը – մինչև հունվարի 10-ը և հունիսի 10-ը

Ամփոփման փուլ – ուսումնական պաապունքների ավարտ – մինչև հուլիսի 10-ը

Համագործակցության ոլորտ:

Այս ոլորտում իրականացվող գործողությունները վերահսկվում են համագործակցող երկու կողմերի կողմից : Դպրոցի կողմից վերահսկողությունը իրականացվում է տնօրենի և համակարգողի միջոցով: Այս համատեքստում ֆինանսական միջոցների առկայության դեպքում Համակարգողը (Համակարգողի և տնօրենի համագործակցության արդյունքում) պետք է ներկայացնի տվյալներ, իսկ ուսումնադաստիարակչական մասով էլ տնօրենն է կազմում հաշվետվություն: Վերը նշված հաշվետվություններն են կազմում այս ոլորտի՝ Կառավարման խորհրդին ներկայացվելիք հաշվետվությունների հիմքը: Համագործակցության արդյունքում կատարվող գործողությունների ժամանակացույցը կազմվում է երկու կողմերի միջև համաձայնության արդյունքում, ուստի վերահոսկողության ժամանակացույցը կազմվում է՝ ելնելով այդ ընթացքից:

Զարգացման ծրագրում ներառված բոլոր նպատակները, խնդիրների լուծումները, հավանական ռիսկերը, մեղմացնող մեխանիզմները, վերահսկողության մեխանիզմները, պատասխանատուները, հնարավոր է ժամանակի պահանջին համապատասխան կրեն փոփոխություններ:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԴԶԾ – դպրոցի զարգացման ծրագիր

ՀՀ ԿԳՄՆ – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարություն

ԿԶՆԱԿ – Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն

ԿՏԱԿ – Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն

ԿԽ – Կառավարման խորհուրդ

ՄԽ – Մանկավարժական խորհուրդ

ԾԽ – Ծնողական խորհուրդ

ԱԽ – Աշակերտական խորհուրդ

ՄՄ – Մեթոդական միավորում

ԿԱԴԱՀ – Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող

ԿԱՊԿՈՒ – Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

ԱՈՒՊ – Անհատական ուսուցման պլան

ՏՄԱԿ – Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

ՏՀՏ - Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաներ

ՀՊՉ – Հանրակրթության պետական չափորոշիչ

ԳԹԿ - Գնահատման և թեստավորման կենտրոն

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ԱԻՆ – Արտակարգ իրավիճակների նախարարություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին ----------2

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմվել է ըստ՝ ----------3

Նախորդ 5 տարիների գործունեությունը ----------4

Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը ----------6

Դպրոցի շենքային պայմանների վերլուծությունը ----------7

Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը ----------12

Համապատասխանությունը դպրոցի ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին ----------21

Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը ----------30

Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ ----------38

Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը ----------48

Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ նորարարությունների ներկայացումը ----------65

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը ----------76

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն ----------92

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատումը դպրոցում----------99

Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատում ---107

Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը,
դրանց արդյունավետության ցուցանիշների շեղումները և
պլանավորման խնդիրների տեսանկյունից ----------112

Դպրոցի գործունեության առարկան և նպատակը ----------116

Նպատակների և խնդիրների սահմանումը ----------116

Կրթական կարիքների նկարագրությունը ----------119

Համապատասխանությունը պետական կրթական քաղաքականության
միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին
ու հնարավորություններին ----------121

Խորհրդակցական մարմիններ ----------126

Մանկավարժական խորհուրդ ---------- 126

Առարկայական մեթոդական միավորում ----------134

Ծնողական խորհուրդ ----------142

Աշակերտական խորհուրդ ----------147

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ
միջոցները և նյութատեխնիկական պարագաները ----------152

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության
մեխանիզմները ---------- 156

Դպրոցի զարգացման ծրագրում ներառված հապավումներ ---------- 160